

ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

30-րդ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ



Երևան 2008



№ 6 (1597) ՅՈՒՆԻՍ 2008

Հայ Յեղափոխական Դաշնակցության 30-րդ Ընդհանուր Ժողովի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցության 30-րդ Ընդհանուր Ժողովը վերահաստատում է, որ կուսակցությունը հավատարիմ է ազգային գաղափարախոսությանը, հեղափոխական ավանդներին, ընկերվարական համոզումներին եւ իր ծրագրային նպատակներին:

ՀՀԴ գործունեության առանցքը հայ ազգի լինելիության ապահովումն է, որի բաղկացուցիչներն են՝ հայ անկախ պետականությունը՝ իր անվտանգության, քաղաքական, ընկերային-տնտեսական, հոգեւոր-մշակութային ստորոգելիներով, եւ բովանդակ հայության կարողականությունը:

Մեկնելով վերոնշյալից՝ ՀՀԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը գտնում է, որ՝

- Հայաստանի Հանրապետությունը դիմագրավում է կայացման եւ ժողովրդավարացման դժվարին փուլ:
- Արցախի հիմնահարցը սպասում է արդարացի լուծման, որին անհրաժեշտ է հասնել բանակցությունների միջոցով, նաեւ՝ Ադրբեջանի ծրագրերի չեզոքացման եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը արագացնելու ճանապարհով:
- Վրաստանի կազմում Ջավախքը զուրկ է ինքնակառավարման հնարավորությունից:
- Արեւմտահայաստանում, Թուրքիայի այլ տարածքներում Ցեղասպանությունից փրկված հայության բեկորները շարունակում են մնալ իրավունքներից զրկված:
- Սփյուռքը Հայաստանից վերջին տարիներին տեղի ունեցած արտագաղթի հետեւանքով նոր մարտահրավերներ է դիմագրավում:

Հայության ներկա կացության այս գնահատման հիման վրա ՀՀԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը կուսակցության գործունեության նորագույն հանգրվանը սահմանում է հետեւյալ տրամաբանությամբ:

Վերջին խորհրդարանական եւ նախագահական ընտրություններին ներկայանալով իր ցանկով եւ սեփական թեկնածուով՝ ՀՀ Դաշնակցությունը հաստատագրել է, որ անկախ, ինքնուրույն, միայն սեփական որոշումներով առաջնորդվող կուսակցություն է:

Հատկապես նախագահական ընտրություններից հետո ՀՀ Դաշնակցությունը բնական կերպով կարող էր որդեգրել խորհրդարանական առողջ ընդդիմության կեցվածք: Սակայն հետընտրական շրջանի իրադարձությունների հետեւանքով անկախ պետականությանը սպառնացող ներքին ու արտաքին վտանգները կուսակցությանը դրեցին երկրի կայունությունը եւ ինքնիշխանությունը պահպանելու առաջնահերթության եւ պատասխանատվության առջեւ:

Այդ պատասխանատվության գիտակցությամբ ՀՀ Դաշնակցությունն ընդառաջեց կոալիցիայի հրավերին՝ գտնելով, որ ստորագրված համաձայնագրի քաղաքական առաջնահերթությունների իրագործումը երկիրը զարգացման որակական նոր աստիճանի բարձրացնելու հնարավորություն է ստեղծում:

Առ այդ՝ ՀՀԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը հայտարարում է, որ կուսակցությունը՝ երկրի եւ Սփյուռքի իր շարքերով, հետեւելու եւ վերահսկելու է քաղաքական կոալիցիայի համաձայնագրի սկզբունքային դրույթների բժախնդիր գործադրությունը: Կոալիցիայի կողմից այդ դրույթների հանձնառու-թյունից հրաժարվելու կամ քաղաքական կամք չդրսեւորելու դեպքում ՀՀ Դաշնակցությունը իր ազգային, քաղաքական, տնտեսական, սոցիալական առաջադրանքները կարող է հետապնդել նաեւ կոալիցիայից դուրս՝ առանց վտանգելու երկրի անվտանգությունը, հավատարիմ մնալով ժողովրդավարության, գաղափարական ու քաղաքական իր սկզբունքներին:

ՀՀ Դաշնակցությունը գտնում է, որ քաղաքական կոալիցիան գործնական քայլերով առողջ ընդդիմության ձեւավորման դաշտ պետք է երաշխավորի, որպեսզի որեւէ իշխանությունից դժգոհ հասարակությունը իր պահանջները օրինական միջոցներով արտահայտելու հնարավորություն ունենա:

ՀՀ Դաշնակցության 30-րդ Ընդհանուր Ժողովը նաեւ վերահաստատում է Սփյուռքի ռազմավարական կարեւորությունը Հայաստանի Հանրապետության, հայության անվտանգության ու զարգացման համար եւ հայտարարում, որ կուսակցությունը մնում է հանձնառու նրա կազմակերպման, հզորացման, հայրենիքի հետ համարկման հրամայականներին:

Այս հետեւությամբ էլ ՀՀԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը կոչ է ուղղում սփյուռքահայությանը՝ ձեռք բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Հայաստանի քաղաքացիություն ընդունելով՝ սփյուռքահայությունը կամրապնդի իր ազգային ինքնությունը, կշեշտի հանձնառությունը՝ հատկապես հայրենիքի զարգացմանը բերելիք ներդրումի առումով:

Հայրենիքի զարգացման գործում այս ներգրավմամբ կխրախուսվի հայրենադարձությունը եւ հայրենիքից արտագաղթը նվազեցնելու հիմքեր կստեղծվեն:


Կենսունակ, կազմակերպված, հայրենիքի հետ մեկ ամբողջություն կազմող Սփյուռքը այսօր, առավել քան երբեք, անհրաժեշտ է՝ դիմագրավելու Թուրքիայի նախաձեռնությամբ, Ադրբեջանի ակտիվ մասնակցությամբ ընթացող հակահայ արշավի նոր հանգրվանը:

Կարեւոր է հատկապես վերջին տարիներին առաջընթաց արձանագրած՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման, արդար հատուցման պայքարի շարունակումը՝ որպես ուրացման թուրքական պետական քաղաքականության փորձերի չեզոքացման երաշխիք:

ՀՀԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը հաստատում է կուսակցության վճռական կամքը՝ անմնացորդ նվիրումով ծառայելու հայ անկախ պետականության հզորացմանը, հայության կազմակերպ միասնականության ապահովմանը, որի նպատակն է տարածաշրջանում՝ ազդեցիկ պետության, աշխարհում՝ հայության հաշվառելի գործոնի վերածվելը:


Հայ Յեղափոխական Դաշնակցության 30-րդ Ընդհանուր Ժողով

Ծաղկաձոր, 26 մայիսի 2008



ԴՐՈՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



“Դրօշակ” ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության:
Հիմնադիր՝ ԲՅԴ
Գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Հովսեփյան
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեռավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան, 375010, Միեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

“ Droshak ” monthly, ARF dashnaksoutiun
publication
12/1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am
Editor-in-Chef: Rouben Hovsepien

Հին ու նոր հարցադրումներ

5 Նախիջեւանի հիմնախնդիր

21 Մերական Նախիջեւանը

Իմացութամանկան

29 Հայաստանի քաղաքակրթական ինքնությունը
(Հանրինգթոնի հիպոթեզի առիթով)

Տարածաշրջան

39 Տարածաշրջան. հարեւանները եւ գիտական
համագործակցության խնդիրները

Վիլյամ Մարոյան

44 Պրոլետարները հարվածային գործիքներ նվազելիս

Թեթեղով «Դրօշակ» - ի էջերը


49 Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ


Նոր գիրք

51 Իսկ նրանք, որոնք 1915-ից յետոյ շարունակեցին ապրել
Թուրքիայում

Պատկերասրահ

52 Հրանտ Կարախանյան





30-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ



2008 թ. մայիսին Հայաստանում գումարվեց ՀՀԿ 30-րդ Ընդհանուր ժողովը, որ բազմաբնույթ հարցերի քննարկումներով բանաձեւեց կուսակցության եկող քառամյակի անելիքը: Թերեւս «Դրօշակի» ամենագլխավոր առաքելությունն է Դաշնակցության ժողովների ու մարմինների առած որոշումները լայն բացատրության եւ բաց քննարկման ճամփով հանրամատչելի դարձնել հանրության: Այս իմաստով մենք դեռ բազմիցս անդրադառնալու ենք ՀՀԿ 30-րդ Ընդհանուր ժողովի որոշումներին, սակայն ներկա համարի այս խմբագրականով ուզում ենք ընդգծել Ընդհանուր ժողովի մի քանի առանձնահատկությունները:

Նախորդ ժողովների համեմատությամբ, ՀՀԿ 30-րդ Ընդհանուր ժողովը թերեւս ամենակարճատեւը կարելի է համարել: Սակայն օրակարգի եւ քննարկվող հարցերի առումով, այս ժողովում ընդունված ռազմավարական որոշումները, ըստ էության, նշանակալից են, քանզի Դաշնակցությունը, առնվազն վերջին ութսուն տարիների ընթացքում, այսօրվա չափ միջամուխ չի եղել ամբողջական հայության ազգային, պետական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային կյանքի կառավարման գործին: Բազմաշերտ եւ բազմաբնույթ հարցերը քննարկելու եւ դրանց լուծման համար տարբերակներ առաջադրելու նպատակով, դեռեւս 2007 թ. ամռանը, ՀՀԿ կառույցների մտավորական եւ ներկայացուցչական գործիչների մասնակցությամբ, տեղի էր ունեցել նախապատրաստական խորհրդածողով, որին որպես տրամաբանական շարունակություն, իրադրային մթնոլորտից հեռու, ՀՀԿ 30-րդ Ընդհանուր ժողովը հասցրեց հանգամանորեն գնահատել կացությունը, կուսակցական պատասխանատու մարմինների գործունեությունը, առաջիկա քաղաքական ուղեգիծը եւ հանգել նպատակահարմար լուծումների:

30-րդ Ընդհանուր ժողովը ընտրեց ՀՀ Բյուրոյի նոր կազմ՝ բաղկացած տասնմեկ ընկերներից: Անձնակազմի թվի բարձրացումից արդեն կարելի է եզրակացնել ՀՀ գործունեության ընդհանուր դաշտի ընդլայնումը, որն էլ ուղղակիորեն կապված է մեր քաղաքական իրականությանը: ՀՀ Բյուրոյի նոր կազմում հինգ ՀՀ քաղաքացիների ընտրությունից եւս կարելի է բնութագրել ՀՀ գործունեության դաշտի բովանդակությունը եւ մեր քաղաքական հետաքրքրությունների սպեկտրը:

ՀՀ Բյուրոյի կազմում նախկին երեք նախարար ընկերների ընտրությամբ 30-րդ Ընդհանուր ժողովը փաստորեն ընդգծեց մի քանի սկզբունքներ. նախ այն, որ նախարարական պորտֆելները Դաշնակցության համար միջոցներ են հայրենիքին ծառայելու համար եւ ոչ թե ի վերուստ տրված արժեքներ: Ապա՝ այն, որ մեր դաշնակցական նախարարները պատրաստ են, իրենց վաստակած պետական փորձառությամբ, ստանձնել համակուսակցական պատասխանատվություն եւ վարել համապատասխան գործունեություն, նախարարական գործերը վստահելով իրենց երիտասարդ գաղափարակից ընկերներին: Նաեւ այն, որ Դաշնակցության համար ծրագրային դրույթների իրականացումն է առաջնային եւ ոչ թե կադրային քաղաքականությունը:

ՀՀ 30-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, ինչպես նաեւ ՀՀ վարած նախընտրական եւ հետընտրական քաղաքականությունից որոշ դաշնակցականներ մնացին դժգոհ: Նկատվեցին նույնիսկ կուսակցությունից հրաժարվելու երեւույթներ: Այս կապակցությամբ պետք է ասել, որ 118-ամյա Դաշնակցությունը ունի նման երեւույթների պատմական փորձը եւս: Երբ հատկապես կուսակցությունը գտնվել է ճակատագրական իրավիճակներում եւ առել է վճռորոշ քայլեր, միշտ էլ գտնվել են դժգոհներ եւ հրաժարվողներ: Սակայն զարմանալին այն է, որ մեր օրերում այդ մասին աղաղակում են հատկապես քաղաքական այն հոսանքները եւ նրանց ուղեկից թերթերը, որոնք հայաստանյան քաղաքական դաշտում հատկանշվել եւ հատկանշվում են «դիրքափոխության» իրենց հանրահայտ վարքագծով: Նրանք, իրենց օրինակով, կարծում են, թե Դաշնակցությունն էլ, ուրիշ կուսակցությունների պես, հիմնվել է լոկ պաշտոններ բաժանելու համար... Մենք չենք էլ պատրաստվում նրանց պարզաբանել ՀՀ Դաշնակցության գաղափարակցական ընտանիքի տությունը, միայն ուզում ենք հիշեցնել այդ հոսանքներին, որ հրաժարվածների համար Դաշնակցության սիրտը, բնականաբար, շատ ավելի է ցավում, քան օրն ի բուն աղմկող գրչակներինը...

30-րդ Ընդհանուր ժողովի հենց բացումից սկսյալ հայաստանյան մամուլում մեկնարկեց հակադաշնակցական ակնբախ քարոզարշավ: «Թարս ու շիտակ» մեկնաբանություններից, պայծառատեսություններից ու գուշակություններից մինչեւ հայ ժողովրդի արդիական պատմության փառահեղ էջերը մերժող ու այլանդակող հողվածների ու գրությունների հեղինակները ինչեր ասես չգրեցին՝ ինչ-ինչ պատվերներ կատարելու համար... «Հին հանգերգ»-ը վերհիշեցնող այս արշավանքից մի քանի իրողություններ պարզվեցին.

- պատմական տխուր ու մաշող փորձից հետո նորից հարցականի տակ են դրվում Հայ ազգային ազատագրական պայքարի ձեռքբերումները՝ Հայաստանի Հանրապետությունը, Մայիս 28-ը եւ այլն: Իսկ Սարդարապատի հերոսամարտը համարվում է այդ ազատագրության ու պետականաշինության պրոցեսներից եւ Արամների, Սիլիկյանների ու Դրոների կատարած սխրանքներից միանգամայն զատ, «հոկտեմբերյան հեղափոխության» սիրույն մղված պատերազմ, որը, կարծես, ընդամենը մի նախապատրաստական փուլ է հանդիսացել մարշալ Բաղրամյանի ռազմական ունակությունների զարգացման համար... Հակադաշնակցական այս թարմագույն արշավանքը մեզ ծիծաղ պատճառելուց բացի կրկին հուշում է, որ ինչպես ՀՀ պատմությունը, այնպես էլ ՀՀ ճակատագիրը անբաժանելի է մեր ժողովրդից...

- մեր քաղաքական գործիչների եւ տեսաբանների մի մասն էլ, լինեն նրանք իշխանամետ կամ ընդդիմադիր, իրոք չեն հասկանում «մեկ ազգ, մեկ հայրենիք» գաղափարը եւ տակավին մաքառում են դրա դեմ, թերեւս, առանց անդրա-

դառնալու, թե ինչ հակադաստիարակչական ավեր են գործում մեր ազգի մեջ: Մենք միամտաբար կարծում էինք, թե «ղարաբաղցի–հայաստանցի հակադրության» շրջանառվող թունավոր միտքը միմիայն քարոզչական մի հնարք է քաղաքական հարցերի լուծման նպատակով եւ ամեն կերպ փորձում էինք մեր հասարակությանը հեռու պահել վտանգավոր այդ խաղերից... Ահա նույն մարդիկ, հանճարեղ գյուտ կատարողի մանկական խանդավառությամբ, գրում, արտաբերում ու կարծում են, որ ՀՀԴ 30-րդ Ընդհանուր ժողովին մասնակցած «օտարերկրյա քաղաքացի դաշնակցականները», 32 պետությունների անվտանգության համակարգերի կողմից գործուղված, այլազգի «խիստ կասկածելի» լրտեսներ են, որոնք եկել եւ ուզում են փոփոխություններ մտցնել Հայաստանի քաղաքական կյանքում... Եթե սա էլ է քարոզչական խաղ, ապա դարձյալ հիշեցնենք դրա վտանգավոր հետքերը մեր սերունդների դաստիարակության գործում: Իսկ եթե դա իրոք համոզմունք է ու մենթալիտետ, ապա մեզ մնում է սրտի անհուն կսկիծով ցավ հայտնել կոսմոպոլիտ գաղափարախոսություն տարածող եւ «ազգ» ու «ազգություն» հասկացությունների փոշիացմանը ձգտող համաշխարհային ուժերի՝ հայաստանյան վերջին ձեռքբերումների կապակցությամբ...

- ՀՀ Դաշնակցության դերն ու կշիռը հայ քաղաքական իրականության մեջ չի պայմանավորվում այսինչ կամ այնինչ ընտրություններում նրա ստացած ձայների կամ օրենսդիր եւ գործադիր ոլորտներում նրա գործիչների քանակով: Հակադաշնակցական վերջին քարոզարշավը ապացույց է, որ Դաշնակցության իրական վարկանիշը, որպես ազգային իրական ուժի, շատ ավելին է, քան «ներկայացնում» են քարոզարշավի բուն հեղինակները, որոնք լավ են գիտակցում դա: Եթե դարավոր ստի ու կեղծիքի, քարոզչական տեխնոլոգիաների եւ «սեթեւեթելու» քաղաքականության վրա հիմնված է առաջ շարժվում Դաշնակցությունը, էլ ինչո՞ւ են մտահոգված տազնապում քաղաքական այդ շրջանակները, էլ ինչո՞ւ են ժամանակագրական թվարկումներով Դաշնակցության «իրական երեսը բացահայտում»՝ «երիտթուրքերի հետ համագործակցություն»-ից, Մայիս 28-ից ու Սարդարապատից սկսյալ: Խնդրո առարկա վարկանիշը, ի տարբերություն իշխանական կամ ընդդիմադիր որոշ շրջանակների, «ի վերուստ» չի «շնորհվել» Դաշնակցությանը: ՀՀԴ-ն դա վաստակել է: Վաստակ, որի ուրացման համար քարոզչական առավել լուրջ տեխնոլոգիաներ են կիրառվել սովետական ժամանակաշրջանում: Կառաջարկեինք գրիչ շարժելուց առաջ, մի փոքր մտածել եւ իրատեսությամբ վերհիշել այդ փորձերի անփառունակ վախճանը...

ՀՀԴ 30-րդ Ընդհանուր ժողովը, միայն իր գումարման փաստով եւ թողած անմիջական ազդեցություններով, լավագույնս ցույց տվեց, որ մենք, պետական, քաղաքական գործունեությանը զուգահեռ, բազում այլ գործեր ունենք կատարելու. «Մենք հայ ժողովրդի կազմակերպությունն ենք,- հայտարարեց ՀՀԴ Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Սարգսյանը՝ 30-րդ Ընդհանուր ժողովի բացման խոսքում:- Մենք չենք ծշտում մեր օրակարգը: Ինքն է մեզ օրակարգ առաջադրում: Նաեւ՝ գործունեության ձեւ ու տեսակ. ՀՀ-ում պետական-քաղաքական կուսակցություն ենք, այլապես՝ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպություն. մի տեղ՝ լոբբինգային գործի, մի այլ տեղ՝ հայապահպանման, մշակութային աշխատանքի լծված: Հակասություններ չկան սրանց մեջ, հակառակը՝ մեկ ամբողջության մասերն են: Եթե ազգային է կուսակցությունը, չի կարող այս պարտադրանքին չենթարկվել: ՀՀ անվտանգության, ինքնիշխանության, ժողովրդի բարօրության, համընդհանուր զարգացման կարելիություն ստեղծելու, ղեկավարելու հարցը մերն է, Ղարաբաղի երեկվա եւ վաղվա՝ ոչ ցանկալի կովի բեռն էլ, հարցի քարոզչությունն էլ, Ջավախքի ժողովրդի պահանջն էլ, լիբանանահայության տազնապն էլ, Մարսելի հայ դպրոցի հոգսն էլ է մերը...»:

Ընդարձակ է Դաշնակցության գործունեության դաշտը, եւ միեւնույն ժամանակ՝ բարդ, դժվար եւ, երբեմն էլ, քաղաքական որոշ շրջանակների համար՝ «անըմբռնելի»...



Ալեքսանդր Մանասյան

Փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր,
«ԳԱԱ թղթակից անդամ»

Արդեն իսկ քարտեզից պարզ երևում է, որ Նախիջևանի հետ կապված է Հարավային Կովկասի կամ, ինչպես խորհրդային տարիներին ընդունված էր ասել, Անդրկովկասի չլուծված հարցերից մեկը: Հայկական բարձրավանդակի ու Հայաստանի բնական մասը կազմող Նախիջևանը կտրված է Հայաստանի Հանրապետությունից և ներկված՝ «քաղաքական այն գույնով», ինչ գույնով ներկված է Ադրբեջանական Հանրապետությունը: Այն, որ Նախիջևանը աշխարհագրորեն, պատմականորեն, տնտեսապես ու մնացյալ այլ առումներով Հայաստանի մաս է կազմել, հայտնի ճշմարտություն է: Այն ակնհայտ է եղել նաև տասնիններորդ դարում տարածաշրջան մտած Ռուսական կայսրության համար, որը երկրամասը վարչականորեն միշտ էլ կապել է Երևանի հետ՝ 1828 թվականին Հայկական մարզի և 1867 թվականին Երևանի նահանգի սահմաններում:

Նախիջևանի հայկական պատկանելությունը Մոսկվայի կողմից կասկածի տակ չի դրվել նաև 1920 թվականին, երբ հեղափոխական ցնցումներից հետո Ռուսաստանը վերադարձել է Անդրկովկաս՝ այս անգամ բուլշևիկյան կայսերապաշտական ալիքների վրա: Բայց 1917-1920 թվականներին, առաջին աշխարհամարտի ու հեղափոխության խառնակ տարիներին, երբ Անդրկովկասը դուրս էր մնացել Մոսկվայի անմիջական վերահսկողությունից, Թուրքիան հասցրել էր ռազմական արշավանքով մտնել երկրամաս, գրավել Բաքուն և այդտեղ հիմնել մի նոր պետական կազմավորում՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը: Իրապես պետականության հայտ ներկայացրած այդ նոր կազմավորման

ասպարեզ իջնելը հենց 1918-ին Թուրքիայի կողմից իրագործված ռազմական ինտերվենցիայի արդյունք էր, քանի որ Բաքուն ու Բաքվի նահանգի զգալի մասը վստահորեն վերահսկվում էր լեգիտիմ ձևով իշխանության եկած և հայ բնակչության աջակցությունը վայելող Բաքվի կոմունայի կողմից: Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, որի համար թուրքերը սեփականեցին Պարսկաստանի հյուսիս-արևմտյան նահանգի՝ Ատրպատականի, անվանումը, դարձավ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությանը նախորդած՝ Թուրքիայի սահմաններից դուրս նոր թուրքական պետություններ հիմնելու առաջին փորձը: Ի տարբերություն վերջինիս, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության հիմնումը, աշխարհաքաղաքական հանգամանքների բերումով, չհանդիպեց այնպիսի լուրջ խոչընդոտների, որպիսիք այսօր կան Հյուսիսային Կիպրոսում նոր թուրքական պետության ստեղծման ճանապարհին: Ավելին, երրորդ երկրի ռազմական ինտերվենցիայի շնորհիվ առաջին անգամ միջազգային քաղաքական ասպարեզ մտած պետական նորագոյացությունը հենց թուրքական ծավալապաշտական ծրագրերի հունում, որպես նրա սատելիտ, հանդես եկավ տարածքային հսկայածավալ հավակնություններով՝ պահանջելով, որ միջազգային հանրությունը ճանաչի իր ինքնիշխանությունը Անդրկովկասի մեծ մասի վրա: Ազգերի լիզաներկայացվեց տարածքային հավակնությունների՝ Բաքվից մինչև Բաթում ներառող քարտեզ՝ «ծովից-ծով Ադրբեջան» մտահղացմամբ: Այդ հավակնությունները տարածվում էին նաև Նախիջևանի վրա: Ազգերի լիզան մերժեց այդ հավակ-

նությունները: Բացակայում էին ոչ միայն պատմական, մշակութային, այլև այդ կարգի մյուս հիմնավորումները: Բաքուն քաղաքական ու վարչական վերահսկողություն չունեին ոչ միայն Բաքունում, այլև, ինչպես ասում են, իր քթի տակ գտնվող Լեռնային Ղարաբաղում: Ոչ մեկի համար այդ տարիներին գաղտնիք չէր, որ թուրքական նոր խամաճիկային պետության միջոցով տարածաշրջանը վերածնելու ծրագրերի իրական հեղինակը Թուրքիան է և որ հենց այդ նպատակին հասնելու համար էր թուրքական կանոնավոր բանակը Բաքու հասնելու ամբողջ ճանապարհին հրկիզում հայկական գյուղերը, իրագործում հայ խաղաղ բնակչության զանգվածային ջարդեր (տես՝ «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ.», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003): Փաստորեն 1918-1920 թվականներին Թուրքիան հայոց ցեղասպանության քաղաքականությունը շարունակում էր Անդրկովկասում՝ իր պետական սահմաններից դուրս: Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը այդ ցեղասպանության արդյունքում դրսից հիմնված պետություն էր: Բավական է ասել, որ միայն Բաքվում թուրքական զորքերն ու տեղական թուրք խաժամուժը կոտորեցին ավելի քան երեսուն հազար հայ:

Այսպես թե այնպես, Ազգերի լիգան չճանաչեց առաջին անգամ ասպարեզ մտած պետական նորագոյացության հավակնությունները, և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը 1920 թ. ապրիլին անցավ չգոյության գիրկը՝ այդպես էլ ձեռք չբերելով լեգիտիմ սահմաններ: Բայց թուրքերի կողմից կատարված քայլն անհետևանք չմնաց: Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կողմից Ազգերի լիգա ներկայացված տարածքային պահանջները փաստորեն հիմք դարձան, որպեսզի պատմականորեն բուն հայկական Նախիջևանը, Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը, որոնց նորանկախ Հայաստանի Հանրապետությունը դիտում էր որպես բնականորեն իրեն պատկանող երկրամասեր, Ազգերի լիգայի կողմից դիտվեն որպես վիճելի տարածքներ: Եթե նույնիսկ Ազգերի լիգայում այդ բոլորի մասին հրաշալի իմանային, նրանք այլ վճիռ չէին կարող ընդունել: Եվ ահա թե ինչու: Փլուզվող Ռուսական կայսրության հարավում՝ Անդրկովկասում, որտեղ նահանգների և գավառների վարչական սահմանները կանխամտածված ձևով շրջանցում էին էթնիկական սահմանները, ինքնիշխանության հայտ էին ներկայացրել երեք պետություն: Այդ պահին Լիգան չէր կարող ստանձնել սահմանների ճշգրտման դերը: Նա առաջարկեց այդ խնդիրը բանակցությունների ճանապարհով լուծել իրենց՝ նորանկախ պետությունների: Ահա թե ինչու նա այդ պետությունների դե-

յուրե ճանաչման հարցը հետաձգեց մինչև վիճելի տարածքային հարցերի լուծումը: Բայց գործը դրան չհասավ:

Միջազգային ճանաչման մերժում ստացած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, ինչպես նշվեց վերը, այդպես էլ առանց սահմաններ ձեռք բերելու լքեց պատմական ասպարեզը 1920 թվականի ապրիլին, երբ Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը մտավ Բաքու և հռչակեց այնտեղ խորհրդային իշխանություն: Նուրի փաշայի հրամանատարությամբ թուրքական բանակը հիմնեց Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, իսկ Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակը վերացրեց այն: Երրորդ երկրների կողմից ձեռնարկված ռազմական միջամտության արդյունքում ստեղծված ու տապալված պետության լեգիտիմության մասին հազիվ թե հնարավոր է լուրջ խոսակցություն վարել: Բայց գոնե հրապարակում մնացել է իրավական բնույթի այն կարևոր փաստը, որ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը պատմական ասպարեզը թողել է առանց սահմաններ ձեռք բերելու:

Բաքվում թուրքական բանակի կողմից դրված իշխանությունները տապալող Խորհրդային Ռուսաստանը 1920 թվականին ոչ մի կասկած չի ունեցել, որ Նախիջևանը հայկական տարածք է բոլոր իմաստներով: Միակ խնդիրը, որ լուծում էր պահանջում, թուրքական ռազմական ներխուժման հետևանքով Նախիջևանի հայ փախստականության վերադարձի խնդիրն էր: Բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը 1920-ի գարնանն ու ամռանը, միանգամայն հասկանալի պատճառներով, ակտիվ ձևով չէր արժարծում այդ հարցերը՝ սպասելով Հայաստանի խորհրդայնացմանը: Եվ այնուամենայնիվ, 1920 թվականի օգոստոսի 10-ին Խորհրդային Ռուսաստանի և (դեռևս ոչ խորհրդային) Հայաստանի Հանրապետության միջև կնքված պայմանագրում Մոսկվան, հետևելով Ազգերի լիգայի օրինակին, Նախիջևանը, Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչեց վիճելի տարածքներ ոչ խորհրդային Հայաստանի Հանրապետության և արդեն խորհրդայնացված Ադր. ԽՍՀ միջև (տես՝ "Из соглашения между Республикой Армения и правительством РСФСР" // Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Ер., 1992, стр. 574-575): Ակնհայտ էր հայկական հողերը վիճելի որակելու միջոցով Հայաստանի վրա ճնշում գործադրելու Մոսկվայի միտումը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը արագացնելու համար: Եվ իրոք, Երևանում խորհրդային իշխանության հաստատմանը անմիջապես հաջորդեց Խորհ. Ադրբեջանական Հանրապետության՝ Երևանին հեռագրով հայտնած (30 նոյեմբերի

1920 թ.) հռչակագիրն այն մասին, որ նա նշված, այսպես կոչված, վիճելի բոլոր տարածքները ճանաչում է Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս: Ղեկտեմբերի 1-ին Հայաստանում Խորհրդային իշխանության հաղթանակին նվիրված հանդիսավոր նիստում այդ հռչակագիրը հրապարակավ հայտարարվեց, բայց հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ին «Կոմունիստ» թերթում հրապարակվեց փոփոխված տեքստով: Նախիջևանը և Ջանգեզուրը, ինչպես և հռչակվել էր, ճանաչվում էին Խորհրդային Հայաստանի անկապտելի տարածքներ: Լեռնային Ղարաբաղի մասով հռչակագիրը, որի բնագիրը մինչ օրս էլ բացում թաքցնում է, խմբագրված էր: Թերթում հրապարակված տեքստի համաձայն Խորհրդային Ադրբեջանը ճանաչում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքը:

Թվում էր, Նախիջևանի հարցը լուծված էր վերջնականապես: Խորհրդային Հայաստանը 1920-1921 թվականներին տնտեսական ու վարչական միջոցառումներ էր իրագործում Նախիջևանում: Քաղաքական իրավիճակը Նախիջևանի շուրջ կտրուկ փոխվեց 1921-ի ձմռանը, երբ Մոսկվայում Խորհրդային Ադրբեջանը սկսեցին դիտել որպես սոցիալիստական հեղափոխությունը դեպի մահմեդական Արևելք տարածելու հենակետ: 1921 թվականի մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան Մոսկվայում կնքեցին պայմանագիր (տես՝ "Договор между Россией и Турцией" // Документы внешней политики СССР. Т. 3, М., 1959, стр. 597-604), ըստ որի Նախիջևանը հանձնվում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը: Միջազգային իրավունքի տեսակետից դա միանշանակ ապօրինի պայմանագիր էր: Երկու երկրներ իրենց իսկ կողմից ինքնիշխան ճանաչված մի երրորդ պետության տարածք հանձնում էին մի չորրորդ պետության՝ առանց նրանց մասնակցության և նույնիսկ կարծիքը հարցնելու: Պայմանագրի անօրինական լինելը ակնհայտ էր Մոսկվայի ու Անկարայի համար: Երկուսին էլ պարզ էր, որ այդ պայմանագիրը չի փոխում Նախիջևանի՝ որպես Խորհրդային Հայաստանի ճանաչված տարածքի կարգավիճակը: Նախիջևանը Խորհրդային Ադրբեջանի խնամակալության հանձնելը պահանջում էր Խորհրդային Հայաստանի համաձայնությունը: 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի 15-րդ կետով բուլղարիկյան Մոսկվան իր վրա վերցրեց Խորհրդային Հայաստանի վրա ճնշում գործադրելու պարտավորությունը՝ նրանից Նախիջևանի օտարման համաձայնությունը ստանալու համար: Արդեն իսկ պայմանագրի այդ կետը վկայում է, որ նրանով չէր լուծվում Նախիջևանը Հայաստանից պոկելու և Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը հանձնելու



խնդիրը: Պահանջվում էր նոր պայմանագիր՝ այս անգամ Խորհրդային Հայաստանի մասնակցությամբ: Այդ պայմանագիրը կնքվեց Կարսում նույն 1921-ի հոկտեմբերի 13-ին (տես՝ "Карский договор" // Документы внешней политики СССР. Т. 4, М., 1960, стр. 420-429): Կարսում ինչ-որ կերպ պետք է արդարացվեր նաև Մոսկվյան պայմանագիրը: Պրահամար նրա առաջին կետում փաստվում է, որ կողմերը անվավեր են համարում մինչ այդ կնքված բոլոր պայմանագրերը, բացառյալ Մոսկվյան պայմանագիրը: Կարևոր է նկատել, որ Կարսի պայմանագիրը կնքվել է մինչև ԽՍՀՄ ձևավորումը 1922-ի դեկտեմբերին, ինչից հետևում է, որ այն կնքված է Ռուսաստանի, Անդրկովկասի ինքնիշխան Խորհրդային հանրապետությունների և Թուրքիայի միջև:

Ի տարբերություն Մոսկվյան պայմանագրի՝ Կարսի պայմանագիրը, որի տակ դրված է նաև Խորհրդային Հայաստանի ստորագրությունը, Նախիջևանը հանձնում էր Խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը, այլ ոչ թե խնամակալությանը, ինչպես նախատեսվում էր ռուս-թուրքական երկկողմ պայմանագրով: Սա ավելի թույլ կապ է, քան խնամակալական կապը: Կարելի է ասել՝ հովանավորությունը զուտ բարոյական պարտավորություն է: Բոլոր դեպքերում Կարսի պայմանագրով Նախիջևանը չտրվեց Խորհրդային Ադրբեջանին որպես նրան պատկանող տարածք: Այստեղից էլ հասկանալի է դառնում Մոսկվային ուղղված Թուրքիայի պաշտոնական բողոքն այն բանից հետո, երբ 1923 թվականին Նախիջևանին ի խախտումն Կարսի պայմանագրի տրվեց ինքնավար հանրապետության կարգավիճակ ԱդրխՍՀ կազմում: ԽՍՀՄ ներսում Նախիջևանի կարգավիճակի փոփոխությունը

միակողմանի և ըստ էության «ներքին օգտագործման» ակտ էր, որը անդրադարձ չունեցավ Կարսի պայմանագրի վրա: Վերջինս շարունակում էր պահպանել իր ուժը և պահպանում է այն մինչ օրս: Թուրքական կողմը դա հաստատել է կառավարության 1991 թ. հունվարի 28-ի հատուկ հայտարարությամբ, որի մեջ գոհունակություն էր արտահայտվում այն բանի կապակցությամբ, որ Հայաստանի կառավարությունը ընդունել է Հելսինկյան փաստաթղթերից, Փարիզյան խարտիայից և ԵԱՀԿ փաստաթղթերից բխող պարտավորությունները, այդ թվում պետությունների տարածքային ամբողջականությանը վերաբերող պայմանները, ինչպես նաև 1921 թվականին կնքված Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ուժի մեջ մնալու փաստը: Իսկ 1996-ին, երբ ՀՀ արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը հրապարակավ արժարժեց Մոսկվայի և Կարսի պայմանագիրը չեղյալ հայտարարելու հարցը, թուրքական քաղաքական շրջանակները «Միլիտեթ» օրաթերթի հավաստմամբ (15 մարտի 1992 թ.) նորից անդրադարձան Կարսի պայմանագրին՝ այս անգամ առաջին պլան մղելով այն նորոգելու գաղափարը: Կարսի պայմանագրի ուժի մեջ մնալու հանգամանքը թե Ռուսաստանը, թե Թուրքիան 2004-ին նորից հաստատեցին աջարական դեպքերի կապակցությամբ, երբ Սահակաշվիլին կոտրում էր աջարների անջատողական փորձերը: Հարցին անդրադարձան նաև Վրաստանում: Վրաստանի խորհրդարանի արտաքին կապերի գծով կոմիտեն 2004-ի ապրիլին փակ նիստում պատմաբանների, քաղաքագետների ու ԱԳՆ աշխատակիցների մասնակցությամբ քննարկեց Կարսի պայմանագրի հարցը: Կոմիտեն հանձնարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը հիմնավոր կերպով զբաղվել Կարսի պայմանագրով՝ Թուրքիայի կամ Ռուսաստանի ռազմական հնարավոր միջամտությունը այդ պայմանագրով հիմնավորելու փորձերը կանխելու համար:

Որպես միջպետական բազմակողմ պայմանագիր՝ Կարսի պայմանագիրը, այսպիսով, գործում է և բովանդակային փոփոխություն չի կրել ԽՍՀՄ ներսում Նախիջևանին ինքնավար հանրապետության կարգավիճակ վերագրելու կապակցությամբ: Բոլոր առումներով նա մնաց անփոփոխ: Պայմանագիրը ստորագրած կողմերը չեն անդրադարձել նրան խորհրդային տարիներին, և դրա համար կային լուրջ հիմքեր: Բանն այն է, որ ցանկացած անդրադարձ պայմանագրին կնշանակեր Երևանին, Բաքվին և Թբիլիսիին վերադարձնել միջազգային պայմանագրեր ստորագրելու և այդպիսով միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ ներկայանալու իրավունք, ինչը արդեն խորհրդային հանրապետությունների

կողմից զիջված էր Մոսկվային: ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները խուսափում էին նման առիթներով հանրապետություններին դուրս բերել միջազգային հարաբերությունների դաշտ: Կարսի պայմանագիրը այդպես էլ մնաց անփոփոխ, մանավանդ որ 1923 թ. Թուրքիայի վերը հիշատակված բողոքից հետո պայմանագիրը ստորագրած կողմերից ոչ մեկը չէր բարձրացնում այն վերանայելու հարցը: Պայմանագրի վերանայման հարց չի բարձրացվել նաև ԽՍՀՄ լուծարումից հետո, չնայած դրա անհրաժեշտությունը կար: Ավելին, ինչպես նկատվեց վերը, աջարական դեպքերի կապակցությամբ Մոսկվան և Անկարան շտապեցին հայտարարել, որ Կարսի պայմանագիրը մնում է տարածաշրջանային հարցերը կարգավորող միակ փաստաթուղթը:

Եվ, այնուամենայնիվ, ԽՍՀՄ լուծարումը և Անդրկովկասում նորանկախ պետությունների հռչակումը Նախիջևանի մասով Կարսի պայմանագրի վրա իրավական բնույթի անդրադարձ ունեցավ, որը սակայն անուշադրության կամ լուռության է մատնված պայմանագրի հետ կապված երկրների կողմից: Առաջին հայացքից թվում է, թե ԽՍ լուծարումը և Անդրկովկասում նորանկախ պետությունների հայտնվելը որևէ կերպ չափտի փոխեր պայմանագրի բնույթը, նրանից բխող հետևանքները: 1921-ին մինչ ԽՍՀՄ հիմնումը փաստաթուղթը ստորագրել են անկախ խորհրդային հանրապետություններ և, թվում է, ուղիղ 70 տարի անց պայմանագիրը հայտնվում է հենց այն իրավաքաղաքական իրավիճակում, որում այն ստորագրվել է: Սակայն հենց Նախիջևանի կապակցությամբ անհետևանք չի կարող մնալ հետևյալ հանգամանքը:

1991 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Բաքվում որոշել են հրաժարվել Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից և վերականգնել 1918 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. ապրիլ ամիսները թուրքական ռազմական միջամտությամբ ստեղծված Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականությունը: Բաքուն 1991 թ. հոկտեմբերի 18-ի Պետական անկախության սահմանադրական ակտով Ադրբեջանի խորհրդայնացումը որակեց որպես Ադրբեջանի զավթում և բռնակցում Խորհրդային Ռուսաստանին:

Պետական այդ ակտի գլխավոր իրավական հետևանքն այն եղավ, որ առանց իրավահաջորդի դադարեց գոյություն ունենալ հենց այն պետական կազմավորումը, որը ստորագրել էր Կարսի պայմանագիրը և որի հովանավորությամբ էր հանձնվել արդեն որիորդային Հայաստանի անկապտելի մաս ճանաչված Նախիջևանը: Պայմանագրի կողմերից մեկի ոչ ևս լինելը չի կարող անհետևանք լինել բոլոր դեպքերում: Բայց այս դեպքում դա հենց այն կողմն է, որի հովանավորությամբ

եր հանձնվել պայմանագրի կողմերից մեկի տարածքը: Փաստորեն 1991 թ. օգոստոս-հոկտ. ամիսներին նորանկախ Ադրբեջանական Հանրապետությունը ԱդրեսՄՀ իրավահաջորդությունից հրաժարվելու ակտով կորցրեց միակ իրավական հիմքը, որով նա կարող է առնչություն ունենալ Նախիջևանի հետ (ի դեպ, դա վերաբերում է նաև Լեռնային Ղարաբաղին, որը որոշակի պայմաններով նույն 1921-ի հուլիսին մտցվել է ԱդրեսՄՀ սահմանները): Կարևոր է նկատել, որ եթե 1991 թ. Ադրբեջանական Հանրապետությունը չհրաժարվեր ԱդրեսՄՀ իրավաքաղաքական ժառանգությունից և իրեն հռչակեր նրա իրավահաջորդը, գործող Կարսի պայմանագրի համաձայն Նախիջևանը հետխորհրդային պայմաններում կմնար հովանավորության հանձնված տարածքի կարգավիճակով: Բայց մեջտեղ է գալիս իրավական տեսակետից ավելի կարևոր մի երկրորդ հանգամանք, որը նույնպես գրեթե դուրս է մղված դիվանագիտական շրջանառությունից:

Բաքուն 1991-ի աշնանը ուշի ուշով հետևում էր նորանկախ Հայաստանի Հանրապետության քաղաքական քայլերին, այդ թվում և ԱդրեսՄՀ սահմաններում հայտնված հայկական տարածքների (Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի) կապակցությամբ: Երևանը ոչ մի խոսք չարտաբերեց Նախիջևանի կապակցությամբ,

ինչից սակայն չէր հետևում, որ նա հրաժարվում է Կարսի գործող պայմանագրից կամ նոր պայմաններում նրանից բխող հետևանքներից: Բաքվի անհանգստության նշաններից պետք է համարել 1989-ի աշնանը Նախիջևանի անկախության հռչակումը: Երևանի անտարբերությունը Բաքվի այդ քայլերի նկատմամբ դարձյալ տարբեր կերպ կարող էր մեկնաբանվել: Ի վերջո, Նախիջևանի այդ քայլը ոչ

մեկի կողմից լուրջ բանի տեղ չդրվեց և ուղղակի անտեսվեց: Նախիջևանի հարցով Երևանի լռությունը տարբեր մեկնաբանություններ կարող է ստանալ: Բաքվին անհրաժեշտ էր բացահայտել Երևանի իրական մտադրությունները և դրա համար նա ինքը նախաձեռնություն ցուցաբերեց նախիջևանյան հարցը Ղարաբաղյան կոնֆլիկտի կարգավորման համատեքստ բերելու համար: Ադրբեջանական դիվանագիտությունը բարձրացրեց Մեդրիի միջանցքով Նախիջևանի հետ

ցամաքային կապի հարցը: Հայտնի չէ, թե փակ դռների հետևում ընթացող բանակցություններում հատկապես ինչ վարք է ցուցաբերել Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող Ռոբերտ Քոչարյանը, բայց հայտնի է, որ պաշտոնապես հայկական կողմը մեջտեղ չի բերել նոր պայմաններում Կարսի պայմանագրից բխող իրավական փաստարկն այն մասին, ըստ որի Նախիջևանը Ադրբեջանական Հանրապետության կողմից օկուպացված տարածք է:

Ինչո՞ւ է հայ դիվանագիտությունը լռում այդ մասին: Փաստի բացատրությունը տանում է հիմնախնդրի աշխարհաքաղաքական խորքը և արտաքին քաղաքական այն մարտավարության գնահատումը, որ Հայաստանը որդեգրել է իրենից խլված տարածքների հարցում:

ՍԱՌ-ՅԱԼԵՌ-ԱՆ ՍՏՈՐԶՐՅԱՆ ՄԱՍԸ

Դիվանագիտության մեջ, ինչպես հայտնի է, ամեն ինչ չէ, որ ասվում է ուղղակի տեքստով: Ասվածն ու արվածը, եթե պատկերավոր ասելու լինենք, դիվանագիտական սառցալեռան երևացող մասն են: Չասված մասում, որ սառցալեռան ստորջրյա մասի հետ կարելի է համեմատել, իրական մտա-



դրություններն են և հաճախ շախմատային բազմաքայլ կոմբինացիաներ են հիշեցնում: Սառցալեռան վերջրյա մասով շատ դժվար է լինում դատել այն մասին, թե ինչ կա այնտեղ՝ նրա ստորջրյա մասում: Մեկնաբանական, հերմենևտիկական հնարքների մի ամբողջ զինանոց է պետք ունենալ կարդալու, կռահելու, վերծանելու համար այն, ինչի մասին դիվանագետը լռում է: Ժամանակի ընթացքում, երբ դեպքերը հայտնվում են այնպիսի հեռավորության վրա, որ

ազդեցություն չեն ունենում ընթացիկ քաղաքականության վրա, երբ բացվում են արխիվները, գաղտնիության քողի տակից շատ բան է պարզվում: Բայց հաճախ՝ ոչ ամեն ինչ:

Նախիջևանի հիմնախնդրի դեպքում Բաքվի ու Անկարայի դիվանագիտական քայլերի ընթերցումը առանձին դժվարություն չի ներկայացնում: Ամեն ինչ ըստ էության տեղավորվում է Մեծ Թուրանի կառուցման թուրքական ծրագրի շրջանակներում հայկական գործոնը տարածաշրջանից դուրս

մղելու քաղաքականության հունում: Քաղաքական ու դիվանագիտական որևէ քայլ այս ծրագրի շրջանակներից դուրս չի մնում: Հայերի՝ բուն Օսմանյան կայսրությունում իրագործված ցեղասպանությունը, դրան հաջորդած հայ խաղաղ բնակչության զանգվածային ջարդերը 1918 թվականին Թուրքիայի պետական սահմաններից դուրս գտնվող Անդրկովկասում, այդ թվում և Նախիջևանում, Հայաստանի տնտեսական ու քաղաքական շրջափակումը մեր օրերում՝ այս բոլոր գործողությունները, անկախ դրանց քարոզչական քողարկման ձևերից, նույն քաղաքականության իրագործման տարբեր դրսևորումներն ու փուլերն են: Ակնհայտ է (եթե, իհարկե, ցանկություն կա դա տեսնելու) նաև դերերի բաժանումը Թուրքիայի և Ադրբեջանական Հանրապետության միջև նույն քաղաքականության իրագործման հունում հետխորհրդային շրջանում: Եվրոմիություն մտնելու խնդիր ունեցող Թուրքիան հակահայ իր քայլերը քողարկում է իր բարեկամ երկրի՝ Ադրբեջանական Հանրապետության տարածքային ամբողջականությունը «հայկական ագրեսիայից պաշտպանելու» փաստարկով: Եվ այդ փաստարկը հաճախ Բաքվի կողմից ակընկալվող ներգործություն ունենում է, քանի որ արդեն քչերին է հայտնի, որ հենց Թուրքիան է 1918-ին հիմնել Ադրբեջան անունով պետություն և որ այսպես կոչված ադրբեջանցիները նոր էթնոնիմ յուրացրած նույն թուրքերն են, որոնց 1918 թվականին բազմազգ երկրամասում քաղաքական իշխանության է բերել Թուրքիայի կանոնավոր բանակը: Այսպես թե այնպես, քսաներորդ դարում տարածաշրջանում հայկական գործոնը ոչնչացնելու քաղաքական ուղեգիծը ընթեռնելի է դարձնում Թուրքիայի և Ադրբեջանական Հանրապետության դիվանագիտական վարքը:

Ավելի դժվար խնդիր է ծագում, երբ գործը հասնում է Ռուսաստանի արտաքին քաղաքական ու դիվանագիտական վարքի ընթրմանը: Այդ վարքը գրեթե «անընթեռնելի է դառնում», երբ քննության առարկան խորհրդային իշխանության առաջին տարիներին Թուրքիայի ու Հայաստանի նկատմամբ նրա վարած քաղաքականությունն է: Ինչո՞ւ ազգերի հավասարության ու սոցիալական արդարության կարգախոսները որդեգրած Խորհրդային Ռուսաստանը այդքան բարեհաճ գտնվեց ցեղասպանություն իրագործած Թուրքիայի նկատմամբ: Ինչո՞ւ նա Ռուսական կայսրության տարածքները նվիրաբերեց մի երկրի (խոսքը դարձյալ Թուրքիայի մասին է), որի անբարեհուսությունը ապացուցված էր ռուս-թուրքական հարաբերությունների ամբողջ պատմությամբ: Ինչո՞ւ նա այդպես հեշտությամբ ու անհաշվենկատ կերպով շրջանցեց տարածաշրջանում հենց հոգուտ իրեն հայկական գործոնը ուժե-

ղացնելու հնարավորությունը: Մինչ օրս մասնագետները, այդ թվում և ռուս մասնագետները, այս հարցերի հստակ պատասխանները չունեն (տես մասնավորապես՝ Александр Иголкин "Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет". ИАН РАН, Историко-филологический журнал, 2002, 1): Սովորաբար ռուսական արտաքին քաղաքական վարքի բանական մեկնաբանման դժվարությունները շրջանցվում են «Ռուսաստանը անկանխատեսելի է» հերթապահ փաստարկով: Եվ, այնուամենայնիվ, հնարավոր բացատրությունների մեջ առավել հավանական են հետևյալ մեկը մյուսից անկախ և մեկը մյուսին բացառող բացատրությունները:

Առաջին. բոլշևիկյան Մոսկվան հայկական տարածքները Թուրքիային ու ԱդրԽՍՀ-ին նվիրաբերեց հանուն սոցիալիստական համաշխարհային հեղափոխության հաղթանակի: Մոսկվան այս տեսակետի համաձայն անկեղծորեն համոզված էր, թե կարմիր հեղափոխության ալիքը շատ ավելի հեշտությամբ կարելի է տարածել մահմեդական Արևելքում և թե հանուն այդ համաշխարհային-պատմական գործի կարելի է զոհաբերել Հայաստանը: Մոսկվան անկեղծորեն հավատացած էր, թե Թուրքիան ու Ադրբեջանը կարող են դառնալ Արևելքում սոցիալիստական հեղափոխության առաջադիրքերը, և պատմական արդարացում ունի նրանց որպես կաշառք հայկական տարածքներ տալը:

Երկրորդ. բոլշևիկյան Ռուսաստանի նոր քաղաքագետները ուղղակի հայտնվեցին փորձառու թուրքական դիվանագիտության սարքած ծուղակներում: Թուրքերը ուղղակի խաբեցին ռուսներին հեղափոխական ֆրազներով համեմված խոստումներով: Այս երկրորդ բացատրությունը նույնական չէ առաջինին: Թե այս, թե նախորդ դեպքում թուրքերը պետք է որ խաբեին ռուսներին: Բայց առաջին տարբերակում ենթադրվում էր, թե բոլշևիկյան դիվանագիտությունը անկեղծորեն առաջնորդվում էր աշխարհի հեղափոխական վերափոխության գաղափարախոսությամբ և հանուն դրա զոհաբերում հայկական հողերը: Այս երկրորդ դեպքում ենթադրվում է, թե ռուսական պետական շահերը հետին պլան չէին մղված, և նոր գաղափարախոսական ֆրազները լոկ նոր շղարշ էին բոլշևիկյան կայսերապաշտական նկրտումների համար: Այլ կերպ ասած՝ բոլշևիկյան Ռուսաստանը շարունակում էր Ռուսիայի ծավալապաշտական քաղաքականության դարավոր ուղեգիծը նոր քողի տակ, և հայկական տարածքների զոհաբերությունը ոչ թե գաղափարախոսական, այլ նոր պայմաններում մեծապետական նոր քաղաքականության իրագործման բացատրություն է ստանում:

Երրորդ. նոր Ռուսաստանը հավատարիմ մնաց «Հայաստանը Ռուսաստանին պետք է առանց հայերի» բանաձևին, քանի որ իր համար հայկական գործունը ավելի վտանգավոր էր դիտում, քան թուրքականը:

Չորրորդ. բուլղարական Մոսկվայի արտաքին քաղաքականությունը որոշում էին ազգությամբ ոչ ռուս քաղաքական գործիչները, որոնց խորթ էին թե Ռուսաստանի, թե Հայաստանի ազգային շահերը:

Ջուտ տրամաբանորեն գրեթե անհնար է թվարկված վարկածներին որևէ նոր տարբերակ ավելացնելը: Բայց ինչպիսին էլ լինեն հնարավոր վարկածներն ու դրանց բացատրությունները, ակնհայտ է մի բան՝ Խորհրդային Ռուսաստանի 20-ական թվականներին կատարած քայլերը ունեցան Թուրքիայի ու թուրքերի (այդ թվում և Անդրկովկասի թուրքերի) համար նպաստավոր ու շահեկան, իսկ հայերի համար աննպաստ արդյունքներ:

Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականությունը նույնպիսի բացատրությունների կարոտ անորոշություններ ունի նաև մեր օրերում: Ընդհուպ մինչև վերջերս հենց ռուս քաղաքագիտական միտքը լայնորեն շրջանառում էր այն դրույթը, թե հետխորհրդային Մոսկվան Անդրկովկասում ընդհանրապես չունի մշակված արտաքին քաղաքական ուղեգիծ: Այնպես որ, Ռուսաստանի կովկասյան ուղղության քաղաքականության «ստորջրյա մասը» այսօր էլ մնում է պղտոր ու հարցականներով լի: Օրինակ, որպես Մոսկովյան և Կարսի պայմանագրերը ստորագրած կողմ՝ Մոսկվան կարող էր բարձրաձայնել կամ գոնե ակնարկել, որ Նախիջևանը չի կարող դիտվել Խորհրդ. Ադրբեջանի իրավահաջորդությունից հրաժարված Ադրբեջանական Հանրապետության տարածք: Դա, իհարկե, կնշանակեր հակադրվել Անկարային և Բաքվին: Բայց Մինսկի խմբի համանախագահ Մոսկվան դա չի անում: Լռում է, և դա կարող է տարբեր կերպ մեկնաբանվել: Ո՞րն է ամենահավանական պատասխանը, որ ռուս դիվանագետը կտար ի պատասխան նման հարցադրման: Ես կարծում եմ, այն պիտի հնչեր մոտավորապես հետևյալ կերպ՝ «Իսկ ինչո՞ւ Ռուսաստանը պիտի բարձրացնի այդ հարցը, երբ Հայաստանը լռում է այդ մասին»: Իրոք, ինչո՞ւ պիտի Ռուսաստանը իր հարաբերությունները փչացնի Բաքվի ու Անկարայի հետ Նախիջևանի հարցով, եթե կշեռքի մյուս նժարին իր ռազմավարական դաշնակից, բայց փոքրիկ Հայաստանն է:

Այս և նման հարցադրումները հրատապ են դարձնում Նախիջևանի հարցում մեր գրաված դիրքի, ավելի ճիշտ՝ մեր կողմից դրսևորվող լռության, բացատրությունն ու գնահատումը: Խնդիրը ուղիղ գծով տանում է դեպի Մոսկովյան և

Կարսի պայմանագրերի՝ որպես Նախիջևանի կարգավիճակի հետ կապված միջազգային փաստաթղթերի, իրավական ու քաղաքական գնահատումը մեր իսկ կողմից: Մեր պաշտոնական վերաբերմունքը, ինչպես նշվեց վերը, դրսևորվում է մեկ անփոփոխ ձևով՝ լռությամբ: Բայց մինչ դրա հնարավոր մեկնաբանություններին անցնելը նպատակահարմար է անդրադառնալ այն տեսակետներին, որ հրապարակավ արտահայտվում են մեր քաղաքագիտական շրջանակներում: Դրանք տարբեր են, բայց խմբվում են երկու մոտեցման շուրջ:

Առաջին մոտեցման կողմնակիցները անմիջապես ելնում են պատմական այն իրողությունից, որ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերն իրենց կնքման պահին ունեցել են անթաքույց հակահայ ուղղվածություն և պահանջում են Հայաստանի իրավասու պետական մարմիններից դիմել Ռուսաստանին այդ պայմանագրերն անվավեր հայտարարելու պահանջով: Ըստ այս մոտեցման տարբերակներից մեկի՝ Կարսի պայմանագիրը ստորագրած Խորհրդային Հայաստանը (ինչպես և Խորհրդային Ադրբեջանական Հանրապետությունը) ինքնիշխան պետություն չի եղել, հետևաբար չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ, ինչից և հետևում է այդ պայմանագրի անիրավագործությունը: Նույն մոտեցման մեկ այլ տարբերակով առաջին պլան է մղվում այն իրողությունը, որ Կարսի պայմանագիրը Խորհրդային Հայաստանը ստորագրել է արտաքին ճնշման տակ, ինչը դարձյալ նշվում է որպես այդ պայմանագիրը անիրավագործ ճանաչելու հիմք: Այսպիսով, այս մոտեցման գլխավոր գաղափարը (և նպատակը) Կարսի պայմանագիրը անիրավագործ ճանաչելու պահանջն է: Պետք է նկատել, որ հարցին անդրադարձած մեր քաղաքագետներն ու իրավաբանները գրեթե համատարած պաշտպանում են այս մոտեցումը: Ավելին, եղել են այս տեսակետը առաջ մղելու գործնական քայլեր: Երեք տարի առաջ հայ մտավորականները հատուկ մի հավաք կազմակերպեցին՝ Կարսի պայմանագիրը անվավեր հայտարարելու պահանջով Ազգային ժողովին դիմելու համար:

Երկրորդ մոտեցումը, որ առաջադրել են ինքս, սխալ է համարում առաջին մոտեցման ելակետային այն դրույթը, թե եթե իր կնքման պահին Կարսի պայմանագիրը ունեցել է հակահայ ուղղվածություն, ապա այդ լիցքը անփոփոխ կերպով պահպանվում է նաև հետխորհրդային իրողությունների պայմաններում:

Այս մոտեցումը պահանջում է հաշվի առնել ԽՍՀՄ լուծարման ընթացքում ԱդրխՍՀ-ի՝ որպես պայմանագրի կողմերից մեկի, անհետացումը միջազգային քաղաքական դաշտից: Հայտնի է, որ 1991 թ. օգոստոս- հոկտեմբեր ամիսներ

րին համապատասխան պետաիրավական ակտերով մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը հրապարակավ հրաժարվել է լինել պատմության թատերաբեմը թողած ԱդրԽՍՀ իրավահաջորդը և, վերադառնալով 1918-1920 թթ. իրողություններին, վերականգնել է Թուրքիայի կողմից ստեղծված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պետականությունը և դարձել նրա իրավահաջորդը: Ադրբեջանում 1991 թ. հոկտեմբերին հռչակված «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտում 1920 թվականի ապրիլին խորհրդային իշխանության հաստատումը Բաքվում որակվեց որպես խորհրդային Ռուսաստանի կողմից Ադրբեջանի զավթում: Նույն սահմանադրական ակտով, Ադրբեջանի մասով, չեղյալ հայտարարվեց 1922 թվականի դեկտեմբերի 30-ի ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը: Ադրբեջանը խորհրդային տարիներին պետություն չի եղել, այլ եղել է բռնազավթված տարածք. միջազգային իրավունքի տեսակետից սա է 1991-ի աշնանը Բաքվում ընդունված հիմնարար ակտերի իմաստը:

Երևանում, ի տարբերություն Բաքվի, խորհրդային շրջանի իրավահաջորդությունից հրաժարվելու մասին հրապարակային որևէ հայտարարություն ԽՍՀՄ լուծարման ընթացքում չի արվել: Հակառակը, իշխանության անցած նոր քաղաքական կազմակերպությունը՝ ՀՀԸ-ն, ամեն կերպ ջանում էր, որպեսզի ԽՍՀՄ-ից դուրս գալու գործընթացը առավելագույնս համապատասխանի ԽՍՀՄ օրենքներին: Չանք չէր խնայվում, որպեսզի Երրորդ հանրապետության կայացումը այդ տեսակետից լինի անբասիր: Դրանով է, մասնավորապես, բացատրվում այն փաստը, որ 1991-ի ամռանը, անտեսելով 1989 թ. դեկտեմբերի 1-ի վերամիավորման մասին համատեղ որոշումը, ՀՀԸ-ն ընդունեց քաղաքական որոշում՝ ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին հանրաքվեն անցկացնել խորհրդային Հայաստանի սահմաններում (առանց ԼՂ այն մասի, որ այդ պահին գտնվում էր Բաքվի փաստացի վերահսկողությունից դուրս):

Բաքուն 1991-ին անկասկած կոպիտ վրիպում է թույլ տվել՝ հրաժարվելով ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից: Բանն այն է, որ, ինչպես ասվեց վերը, Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, որի իրավահաջորդ իրեն հռչակեց մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը, պատմության բեմը թողել է այդպես էլ առանց լեգիտիմ սահմաններ ձեռք բերելու: Թե՛ Նախիջևանը, թե՛ Լեռնային Ղարաբաղը նրա մասը չեն կազմել: Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա Ադրբեջանի հետ կապող միակ քիչ թե՛ շատ օրինական փաստաթուղթը Կարսի պայմանագիրն է: Եվ այդ

կապն այն է, որ և Բաքվի, և Մոսկվայի կողմից արդեն խորհրդային Հայաստանի մաս ճանաչված Նախիջևանը տրվել է խորհրդային Ադրբեջանի հովանավորությանը: Հրաժարվել ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից նշանակում է դադարել Կարսի պայմանագրի կողմ լինելուց և կորցնել Նախիջևանի հետ հունեցած որևէ իրավական առնչություն: Կարսի մինչ օրս գործող պայմանագրից ուղղակիորեն հետևում է, որ Նախիջևանը մերօրյա Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածք է: Ավելին, այդ պայմանագրից անմիջապես բխում է, որ Նախիջևանը Բաքվի կողմից օկուպացված տարածք է:

Համեմատելով այս երկու մոտեցումները, դժվար չէ նկատել, որ նրանց գլխավոր, քաղաքական ու իրավական տեսակետից սկզբունքային տարբերությունը նախիջևանյան հարցում հանգում է այն բանին, թե ընդունո՞ւմ ենք արդյոք Կարսի պայմանագիրը որպես խնդրի կարգավորման հիմք, թե մերժում ենք այն որպես կնքման պահից առ ոչինչ, անիրավազոր, միջազգային իրավունքին հակասող փաստաթուղթ:

ԻՐԱՐԱՄԵՐԺ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԵՆՈՒՔՆԵՐԻ ՆԺԱՐՆԵՐԻՆ

Ակնհայտ է, որ Կարսի պայմանագիրը իրավազոր կամ անիրավազոր որակելը միևնույն իրավական փաստերի տարրընթերցումների ու տարբեր «քաղաքական տրամաբանությամբ» կատարված եզրակացություններ են:

Կարսի պայմանագրի իրավազորությունը մերժող մասնագետները ելնում են հետևյալ կանխադրույթներից:

Առաջին. պայմանագրի ոչ մի կողմ միջազգային հանրության կողմից ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտ չի եղել: Այդպիսիք չեն եղել պայմանագրի իրական հեղինակները՝ Թուրքիան ներկայացնող քեմալականները և խորհրդային Ռուսաստանը: Իրապես ինքնիշխան պետություններ չեն եղել Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի կողմից օկուպացված և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները, այդ թվում և խորհրդային Հայաստանը: Դրանց ավելի շուտ համապատասխանում է *օկուպացված երկրներ* հասկացությունը:

Երկրորդ. Կարսի պայմանագիրը կնքվել է «ի կատարումն» բացահայտ հակաիրավական ռուս-թուրքական մուսկոլյան պայմանագրի և իր տեքստում հենվում է ապօրինի այդ պայմանագրի վրա:

Երրորդ. Կարսի պայմանագիրը Խորհրդային Հայաստանին բռնությամբ պարտադրված պայմանագիր է: Արտաքին հարկադրանք կիրառելու մասին վկայությունը բաց տեքստով շարադրված է ռուս-թուրքական մոսկովյան պայմանագրում:

Այս փաստարկներից ցանկացած մեկը, ըստ պայմանագրի անիրավագործությունը շեշտող մասնագետների, բավարար հիմք է, որպեսզի հետխորհրդային իրողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետությունը պնդի նրա անվավեր հայտարարելու պահանջը:

Թվում է, ամեն ինչ ասված է ճիշտ: Թվում է, փաստարկներն անկասելի են և հայանպաստ: Դրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է պատմական փաստին՝ վերցրած պատմական պահի կոնկրետության մեջ և հետագա զարգացումների համատեքստից դուրս: Բայց և այնպես, այդ փաստարկների մի մասը վիճարկելի է միջազգային իրավունքի տեսակետից կամ առնվազն թույլ է տալիս այլընտրական և ոչ պակաս համոզիչ մեկնաբանություններ:

Սկզբում առաջին փաստարկի մասին: Ճիշտ է, որ պայմանագիրը ստորագրած կողմերը միջազգային հանրության կողմից ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտներ չեն եղել: Բայց նախ նկատենք, որ ճանաչումը ոչ թե իրավական, այլ քաղաքական ակտ է: Այսպես թե այնպես, ճանաչման քաղաքական ակտը հարուցում է նաև իրավական հետևանքներ: Սակայն դա չի փոխում ճանաչման ակտի՝ որպես այդպիսին, բնույթը. ճանաչումը քաղաքական ակտ է և չի կարելի նրան վերագրել իրավական իմաստ ու նշանակություն, ինչպես հաճախ առարկություն չվերցնող տոնով դա արվում է: Նկատել է պետք, որ Կարսի պայմանագիրը կնքած կողմերը հենց փաստաթղթի ստորագրման փաստով փոխադարձաբար ճանաչել են միմյանց և երրորդ երկրների կողմից նրանց ճանաչելու կամ չճանաչելու քաղաքական փաստը իրավական որևէ անդրադարձ չէր կարող ունենալ կնքված քառակողմ պայմանագրի վրա: Այսպիսով, զուտ ձևական տեսակետից կողմերի փոխադարձ ճանաչման քաղաքական ակտը արձանագրված է հենց փաստաթղթի ստորագրության փաստում: Կարևոր է նաև ընդգծել, որ պայմանագրի ստեղծման գործում վճռական դերակատարություն ունեցած Խորհրդ. Ռուսաստանը և քենալական Թուրքիան որոշ ժամանակ անց ստացան միջազգային ճանաչում, դարձան միջազգային իրավունքի սուբյեկտներ, և միջազգային հանրությունը նրանց ճանաչելու համար Մոսկովյան ու Կարսի պայմանագրերի վերանայման որևէ պայման նրանց առջև չդրեց: Ընդ որում, միջազգային ճանաչման պահին Խորհրդային Ռուսաստանը և անդրկովկասյան խորհրդային հանրապետությունները ար-

դեն միավորված էին խորհրդային տիպի դաշնության՝ ինքնիշխան հանրապետությունների մեկ միասնական միութենական պետության մեջ: Միջազգային հանրությունը կասկածի տակ չի դրել խորհրդային միութենական հանրապետությունների դաշնագրի իրավագործությունը՝ դիտելով այն որպես նրանց ներքին գործ: Մենք, իհարկե, այսօր կարող ենք արձանագրել, որ Մոսկվան այդ դաշնագրով նվազագույնի հասցրեց հանրապետությունների ինքնիշխանությունը: Սակայն դրա շուրջը ցայսօր տարված կամ հետագայում տարվելիք բանավեճերը հազիվ թե պարզություն մտցնեն խնդրո հարցում: Միութենական հանրապետությունները, կամավոր կամ «կամավոր» ձևով պետականության որոշ գործառույթներ զիջելով միութենական իշխանություններին ու որոշակի ատրիբուտներից զրկվելով հանդերձ, կարող էին դիտվել որպես ինքնիշխան պետական կազմավորումներ, թե՞ ԽՍՀՄ Սահմանադրությամբ նրանց վերագրվող ինքնիշխանությունը զուտ ձևական, դեկլարատիվ բնույթ ուներ և կոչված էր քողարկելու այդ կազմավորումների ինքնիշխանության բացարձակ ֆիկտիվությունը: Նրանք, ովքեր գտնում են, որ միութենական հանրապետությունները եղել են խորհրդային տիպի պետականություններ, իրենց փաստարկների փաթեթում ունեն ոչ միայն խորհրդային տարիներին հանրապետությունների տնտեսական, մշակութային ու ժողովրդագրական ցուցանիշները, այլև իրավական բնույթի այնպիսի փաստեր, ինչպիսին հանրապետությունների ու ինքնավար կազմավորումների ներկայացված լինելն է ԽՍՀՄ բարձրագույն իշխանության մարմիններում: Նման փաստարկին ընդդիմախոսները սովորաբար հակադարձում են՝ ընդգծելով խորհրդային տիպի պետականությունների ձևական բնույթը: Օրենքներով ու Սահմանադրության մեջ գրվում էր մի բան, իսկ իրական կյանքում կատարվում բոլորովին այլ բան: Իրականում ամեն ինչ կանխապես որոշվում էր ԽՍՀՄ բարձրագույն օղակներում՝ կուսակցության Կենտկոմում կամ Քաղբյուրոյում: Նման հարցադրումները ի վերջո տանում են դեպի ԽՍՀՄ՝ որպես պատմականորեն ունիկալ պետականության իրավաքաղաքական համակարգի քննությանը, որտեղ բանավեճի երկու կողմերն էլ կարող են գտնել բավարար քանակությամբ փաստարկներ սեփական տեսակետի հիմնավորման և հակառակ տեսակետի մերժման համար: «Կողմ» և «դեմ» փաստարկների նման հարաբերակցությունը օբյեկտիվորեն բարձրացնում է քաղաքական նկատառումների դերը քննարկվող հարցում այս կամ այն տեսակետը ընդունելու կամ մերժելու ընթացքում: ԽՍՀՄ լուծարման նախօրեին Արևմուտքը հենց քաղաքական նպատակահարմարության

նկատառումներով որդեգրեց հետխորհրդային զարգացումներում ԽՍՀՄ ներքին վարչաքաղաքական սահմանները որպես նրա տրոհման ապագա իրավական սահմաններ ճանաչելու դիրքորոշումը: Արդեն 1991-ի աշնանը Երևան ժամանած ԱՄՆ պետդեսպարտամենտի քարտուղար Բեյքերը հայտարարեց, որ ԱՄՆ-ը հետխորհրդային տարածքում նորանկախ երկրները կճանաչի նախկին խորհրդային միութենական հանրապետությունների սահմաններում: ԱՄՆ-ում, իհարկե, հիանալի գիտեին, որ միութենական հանրապետությունների սահմանները տոտալիտար ԽՍՀՄ-ում գծվել են կամայականորեն և որ դրանք սառեցված կոնֆլիկտների սահմաններ են: Բայց 1991-ին նման հարցեր մեջտեղ բերելը կնշանակեր հարցականի տակ դնել ԽՍՀՄ-ը «առանց գլխացավի» և ամենաեթեման ձևով լուծարելու ավարտական փուլ մտած գործողությունը: Այնպես որ, նորանկախ հանրապետությունները նախկին խորհրդային հանրապետությունների սահմաններում ճանաչելու Արևմուտքի վճիռը բացառապես քաղաքական շարժառիթներ ուներ: Բայց այդ քայլով Արևմուտքը փաստորեն հաշվի նստեց ԽՍՀՄ իրավական ժառանգության հետ և ճանաչեց այն իբրև հետխորհրդային տարածքում հարցերի կարգավորման միակ և նույնիսկ օրինական հիմք:

Եթե հարցը Արևմուտքի համար քաղաքական բնույթ ունի, ապա մեզ համար առավել ևս: Կարսի պայմանագրի կապակցությամբ այն հանգում է հետևյալին՝ ո՞ր դիրքորոշումն է մեզ համար քաղաքական իմաստով նպատակահարմար նախիջևանյան հարցի հայանպաստ արժարժման ու լուծման համար: Ընդունել, որ խորհրդային Հայաստանը Կարսի պայմանագիրը ստորագրել է որպես ինքնիշխան պետություն և դրանով իսկ ընդունել պայմանագրի իրավագործությունը, թե՞ պայմանագրի ստորագրման պահից շուրջ յոթանասուն տարի անց խորհրդային Հայաստանը համարել Ռուսաստանի կողմից օկուպացված երկիր, այդ հիման վրա պնդել պայմանագրի անիրավագործության մասին դրույթը և պահանջել, որ այն չեղյալ հայտարարվի:

Ինչպես ցույց տրվեց վերը, իրավական փաստարկների դաշտում այս հարցի միանշանակ լուծման անհնարինությունը հարցը տեղափոխում է քաղաքական հարթություն, որտեղ այն «իրեն բացահայտում է» հետևյալ տեսքով՝ *ո՞րն է քաղաքական իմաստով մեզ ձեռնտու՝ պայմանագրի ստորագրման պահին խորհրդային Հայաստանը դիտել իբրև Ռուսաստանի կողմից օկուպացված տարածք, թե՞ ինքնիշխան պետություն և, հետևաբար, պայմանագրի լիարժեք կողմ*: Հարցի քաղաքականացումը թույլ է տալիս ավելի բաց ու անկեղծ ձևակերպել այն՝ ո՞ր դեպքում ենք մենք շահում կամ հարցի ո՞ր պատասխանն է մեզ ձեռնտու:

տասխանն է մեզ ձեռնտու:

Առաջին պատասխանը երկրորդից ձեռնտու կլիներ, եթե մինչխորհրդային շրջանում Նախիջևանի հարցով Հայաստանի Հանրապետության հետ կնքված լիներ իր ուժը պահպանած մեկ այլ պայմանագիր (իմա՝ իրավական մեկ այլ հիմք), որից հնարավոր լիներ Նախիջևանի մասով ստանալ մեզ համար ավելի նպաստավոր իրավական հետևանքներ, քան այն, որ հետևում է Կարսի պայմանագրից: Ընդ որում, քանի որ խոսքը նախախորհրդային շրջանի մասին է, ցանկալի կլիներ, որ պայմանագրի կողմեր լինեին հենց այն երկրները, որոնց ստորագրությունները կան Կարսի պայմանագրի տակ: Այսպիսով, պահանջվում է վերը նշված պայմաններին բավարարող մեկ այլ, ավելի նպաստավոր իրավական հիմք: Ժամանակագրական սահմանները ավելի որոշակիացնելով, կարելի է ասել, որ այն պետք է վերաբերի 1918 թ. մայիսից (մեր Առաջին հանրապետության հռչակումից) մինչև 1920 թ. նոյեմբերն (Երևանում խորհրդային իշխանության հռչակումը) ընկած ժամանակահատվածին: Մի հանգամանք ևս արժե նկատել: Քանի որ Նախիջևանը այսօր ճանաչվում է իրեն Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը հռչակած մերօրյա Ադրբեջանական Հանրապետության մաս, և մենք նպատակ ունենք վիճարկել հենց դրա օրինականությունը, առավելագույնս արդյունավետ կլիներ, եթե Կարսի այլընտրանքի որոնումներում մեր տրամադրության տակ լիներ հենց այնպիսի մի պայմանագիր, որի տակ լիներ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ստորագրությունը:

Միանգամից նկատենք, որ նման իրավական հիմք (նման երկկողմ կամ բազմակողմ պայմանագիր), որի կողմը (կամ կողմերից մեկը) լիներ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը և որից բխեին Նախիջևանի հարցով մեզ համար ավելի նպաստավոր հետևանքներ, ուղղակի չկա: Այդ տարիներին Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը հավակնություններ ուներ Հայաստանի մեծ մասի, այդ թվում՝ Նախիջևանի նկատմամբ: Ազգերի լիզա ներկայացված այդ հավակնությունների արդյունքում, ինչպես հայտնի է, Նախիջևանը, Ջանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչվեցին որպես վիճելի տարածքներ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության միջև: *Նախիջևանը միջազգայնորեն ճանաչված է որպես վիճելի տարածք Ռուսական կայսրության փլուզման հետևանքով իրենց անկախությունը հռչակած Հայաստանի ու Ադրբեջանի միջև՝ սա մեզ համար այն առավելագույն նպաստավոր հետևանքն է, որ կարելի է բխեցնել այդ շրջանի այն*

փաստաթղթերից, որոնցում որպես կողմ ներկայացված է մերօրյա Ադրբեջանական Հանրապետության իրավանախորդը՝ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը:

Նույն այդ ժամանակաշրջանին է վերաբերում Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքված և նախաստորագրված 1920 թ. օգոստոսի 10-ի պայմանագիրը, որտեղ Խորհրդային Ռուսաստանը իր կողմից օկուպացված տարածքները, այդ թվում Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը Ազգերի լիգայի օրինակով ճանաչեց որպես *վիճելի տարածք* Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության միջև:

Այս երկու փաստաթղթերից ոչ մեկը Նախիջևանը անվիճելի ձևով չի համարում Հայաստանի Հանրապետության մաս: Մեզ համար նպաստավոր դրանց ներուժը միայն այն է, որ մի դեպքում միջազգային հանրությունը՝ ի դեմս Ազգերի լիգայի, մյուս դեպքում Խորհրդային Ռուսաստանը Նախիջևանը չճանաչեցին մի դեպքում Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության, իսկ երկրորդ դեպքում՝ Խորհրդային Ադրբեջանի մաս:

Մեզ մնում է դիտարկել 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրերը: Դրանք երկուսն են՝ Բաթումի, որ կնքվել է 1918 թ. հունիսի 4-ին, և Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ստորագրված 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի գիշերը: Առաջին պայմանագրով, ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետությանը թողնվում էր ընդամենը 10.000 քառակուսի կիլոմետր տարածք Երևանի գավառի շուրջ, և հասկանալի է՝ առանց Նախիջևանի: Ալեքսանդրապոլի պայմանագրով Նախիջևանը ժամանակավորապես՝ մինչև այդտեղ հանրաքվեի անցկացումը, հայտարարվում էր Թուրքիայի պաշտպանության տակ գտնվող տարածք: Հանրաքվեից հետո, ինչպես արձանագրված էր պայմանագրում, պետք է հաստատվեր «հատուկ վարչակարգ», որի գործերին անկախ հանրաքվեի արդյունքներից հայկական կողմը իրավունք չուներ միջամտելու: Փաստ է, որ պայմանագիրը Նախիջևանի մասով աննպաստ էր Հայաստանի համար, քանի որ երկրամասը չէր ճանաչվում նրա անկապտելի մասը: Պայմանագրի իրավագործությունը վիճարկելի է, քանի որ հենց ստորագրության պահին Երևանում արդեն Խորհրդային կարգեր էին հաստատված և Ալեքսանդրապոլում հայկական կողմից բանակցությունները վարող անձինք չէին ներկայացնում գործող իշխանությունը:

Նշված փաստաթղթերին դիմելը, եթե դրանք նույնիսկ հայանպաստ լինեին, կապված է վիճահարույց մեկ այլ հանգամանքի հետ, որը հնարավոր բանակցություններում կարող

է դառնալ անհաղթահարելի դժվարությունների աղբյուր: Բանն այն է, որ այդ պայմանագրերը երկկողմ են և ոչինչ չեն պարտավորեցնում խնդրի հետ առնչություն ունեցող մյուս երկրներին:

Հայաստանի նախախորհրդային շրջանի մյուս փաստաթուղթը, որ կարող է օգտագործվել հայկական դիվանագիտության կողմից, Սևրի պայմանագիրն է: Բայց այդ պայմանագիրը վերաբերում է Հայաստանի արևմտյան սահմաններին և անդրադարձ չունի Նախիջևանի խնդրին:

Իհարկե, կարելի է Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Հայաստանի հետ 1918-1921 թվականներին կնքված բոլոր պայմանագրերը, այդ թվում և Կարսի պայմանագիրը, հայտարարել անիրավագոր, քանի որ կնքվել են հայկական կողմի վրա գործադրված բռնության պայմաններում: Խնդիրը կտեղափոխվի նախախորհրդային իրավաքաղաքական իրողությունների դաշտ, երբ հայկական անկախ պետականություն չկար և Արևելյան Հայաստանը գտնվում էր Ռուսական կայսրության կազմում՝ մի մասը (Արցախը) Ելիզավետպոլի նահանգի, իսկ մյուսը՝ Նախիջևանով հանդերձ՝ Երևանի նահանգի սահմաններում:

Այսպիսի մոտեցումը փաստորեն իրենից ներկայացնում է իրավական փաստարկներից ընդհանրապես հրաժարվելու և հարցը պատմական փաստարկների դաշտ տեղափոխելու առաջարկ: Բայց բոլորիս քաջ հայտնի է, որ միջազգային հանրությունը, հանձինս հակամարտությունների կարգավորման լծակները իրենց ձեռքում պահող խոշոր տերությունների, վճռականորեն դեմ է մերօրյա հակամարտությունների լուծման հիմքերն ու ուղիները փնտրել «պատմական հեռվում»: Նրանք դա համարում են անհուսորեն անարդյունավետ, ոչ կառուցողական և իրողություններից ու իրատեսությունից կտրված մոտեցում: Այսօր նրանք հակված են քաղաքականացնելու անխտիր բոլոր հակամարտությունները դրանցից իրենց համար օգուտներ կորզելու համար և «դժվար են ուտում» նույնիսկ անկասելի իրավական փաստարկները:

Այդ հանգամանքը մեզնից պահանջում է Նախիջևանի հետ կապված փաստաթղթերի ու իրավական փաստարկների ընտրությունը կատարել ամենայն բժախնդրությամբ: Մենք պետք է առաջադրենք հնարավորինս անառարկելի փաստարկներ: Վերը հիշատակված բոլոր փաստաթղթերը որպես իրավական փաստարկներ անհարմար են ոչ միայն հնարավոր առարկությունների, դրանց ներսում «դրված» տարաբնույթ մեկնաբանությունների հնարավորությունների առատությամբ, այլև մեզ համար բացահայտ աննպաստ ձևակեր-

ս ուժների իմաստով: Դրանցից ոչ մեկը չի ելնում Նախիջևանի Հայաստանին պատկանելու դրույթից: Ինչ-որ իմաստով նույնիսկ լավ է, որ դրանք չեն կարող դրվել Նախիջևանի հարցի շնորհիվ հիմքում: Ի դեպ, դրանք անհրաժեշտ դիտելու բավարար հիմք է հանդիսանում հենց Կարսի պայմանագիրը, որի առաջին կետով բոլոր կողմերը անվավեր ճանաչեցին մինչ այդ իրենց միջև կնքված բոլոր նախորդ պայմանագրերը՝ բացառությամբ Մոսկովյան պայմանագրի: Բայց հենց այստեղ ճիշտ տեղն է Կարսի պայմանագիրը ավելի մանրամասն դիտարկելու: Ընթերցողը պետք է պատրաստ լինի մտքի ոչ սովորական ընթացքի ու անակնկալ հետևությունների:

ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԵՐ ՕԳՏԻՆ ԵՐՋԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին հայացքից անհավանական է թվում մեր օգտին շրջել մի պայմանագիր, որը իր մտահղացմամբ, նպատակադրումներով ու բուն բովանդակությամբ ուղղված է եղել հայի ու Հայաստանի դեմ: Անկախ դրդապատճառներից՝ դա եղել է հայկական հողերի առուծախ ու թալան՝ իրագործված այնպիսի պայմաններում, երբ բոլշևիկ հայը ստիպված է եղել իր ստորագրությունը դնել պայմանագրի տակ: Նման գնահատականներ այնքան են շրջանառել մեզանում, որ հազիվ թե հնարավոր լինի նույն հունում որևէ բան ավելացնել արդեն ասվածին: Այս մտայնության սահմաններում ուրվագծվում են մարտավարական երկու ուղեգիծ:

Առաջին մարտավարական ուղեգիծ: Պաշտոնապես դիմել առաջին հերթին Ռուսաստանին և Թուրքիային Կարսի պայմանագիրը անվավեր հայտարարելու պահանջով, պայմանագիր, որն այդ երկրները համարում են օրինական ու մինչ օրս գործող: Ի դեպ, պայմանագրի իրավագործությունը ընդունում է մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը, որը Նախիջևանի ինքնավար հանրապետության սահմանադրության նախաբանում հղում է կատարել Մոսկովայի ու Կարսի պայմանագրերին: Այս առաջին մարտավարությունը ենթադրում է հակադրվել միաժամանակ Ռուսաստանին և Թուրքիային, որոնք նույն դիրքորոշումն ունեն Կարսի պայմանագրի հարցում և գտնում են, որ այն առայժմ տարածաշրջանային հարցերի կարգավորման միակ միջազգային իրավական փաստաթուղթն է: Պարզ է, որ այս մարտավարությունը ենթադրում է միջազգային հանրությանը ուղղված եռանդուն բացատրական աշխատանք՝ տեղ հասցնելու համար պայմա-

նագրի՝ Խորհրդային Հայաստանին պարտադրված լինելու փաստը և ստանալու համար պայմանագիրը անհրաժեշտ ճանաչելու նրա աջակցությունը:

Երկրորդ մարտավարական ուղեգիծ: Կարսի պայմանագիրը ապօրինի ճանաչելու պահանջով Ռուսաստանին և Թուրքիային միաժամանակ իրավական պատերազմ հայտարարելը քաղաքական իմաստով նպատակահարմար չէ և ոչ մի լավ բան չի խոստանում: Ավելին, ռեալ վտանգ կա, որ դա կարող է դառնալ խնդրի և դրա սահմաններից դուրս այդ երկրների դիրքորոշումների մերձեցման շարժառիթ, քանի որ մենք նրանց աշխարհին պիտի ներկայացնենք որպես ապօրինի և հրեշավոր մի գործարքի համահեղինակներ: Մյուս կողմից՝ Ղարաբաղի խնդիր ունեցող Հայաստանը այդ ձեռնարկության մեջ ծախողելու դեպքում ձեռք կբերի հարևան երկրներին անհիմն տարածքային պահանջներ ներկայացնողի կերպար: Այս վերջին մտավախությունը նկատի ունեն մեր Երրորդ հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածում հակադրվում էր վերոնշյալ առաջին մարտավարության ջատագովներին, գտնելով, որ Կարսի պայմանագիրը անվավեր ճանաչելու պաշտոնական պահանջը միջազգային հանրության աչքում ավելի կփչացնի Հայաստանի Հանրապետության առանց այն էլ տատանված վարկը: Առաջին մարտավարության այս բոլոր հնարավոր անբարենպաստ հետևանքների հաշվառումը և պայմանավորում է երկրորդ մարտավարության ընտրությունը՝ լռության մատնել Կարսի պայմանագրի հետ կապված հարցերը: Սպասել գլոբալ իրադրության մեզ համար բարենպաստ փոփոխությանը:

Այս երկրորդ մարտավարությունը իր հիմքում ունի իրատեսական և չբարձրաձայնվող այն միտքը, թե եթե մեր ուժը պատեր, մենք ետ կբերեինք Նախիջևանը և միջազգային հանրությունը ըմբռնումով կընկալեր ապօրինի մի պայմանագրի հիման վրա մեր զավթված տարածքի ազատագրումը: Այս «ըմբռնումով ընկալելը», իհարկե, ցանկալի ենթադրություն է միայն, քանի որ Ղարաբաղյան խնդրի միջազգային արժարժումը մեր օրերում այնքան էլ վստահելի հիմքեր չի տրամադրում, թե աշխարհի հզորները երբևիցե վեր կկանգնեն տարածաշրջանում իրենց քաղաքական շահերից և ըմբռնումով կընկալեն արդարության վերականգնումը:

Վերը շարադրված երկու մարտավարությունները, թվում է, տեղ չեն թողնում այլընտրական մոտեցման համար: Բայց պարզվում է, որ այլընտրանք կա և այն կապված է Կարսի պայմանագրի նոր ընթերցման հետ:

Նախ այն մասին, թե ինչ առավելություններ ունեն իր կնքման պահին Կարսի պայմանագիրը մինչ այդ մեր ոչ խորհրդային Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև կնքված պայմանագրերի համեմատությամբ: Թվարկենք դրանք:

Առաջին առավելություն. Կարսի պայմանագրի կնքման նախօրյակին Նախիջևանը ճանաչվել էր Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս: Եվ առաջինը դա արել էր Խորհրդային Ադրբեջանը՝ Կարսի պայմանագրի կողմերից մեկը, 1920 թվականի դեկտեմբերի մեկի հռչակագրով: Մոսկվան հավանություն է տվել Բաքվի այդ քայլին: Թուրքիան չի բողոքարկել: 1921 թվականի մարտին ռուս-թուրքական բանակցությունների ժամանակ կողմերը ելնում էին Նախիջևանը Խորհրդային Հայաստանի մաս կազմելու փաստից: Արդեն իսկ այն հանգամանքը, որ Անկարան և Մոսկվան որոշեցին Նախիջևանը հանձնել ԱդրԽՍՀ խնամակալությանը, ինքնին հաստատում էր երկրամասը Խորհրդ. Ադրբեջանին չպատկանելու իրողությունը: Խնամակալության ինստիտուտը ինքնին ենթադրում է, որ խնդրո առարկա տարածքը չի պատկանում այն պետությանը, որի խնամակալությանը այն հանձնվում է: Սեփական տարածքը խնամակալության չեն հանձնում իր տիրոջը: Այն հանգամանքը, որ Կարսի պայմանագրի կողմերը Նախիջևանը համարել են Խորհրդ. Հայաստանին պատկանող տարածք, երևում է նաև Մոսկվայի պայմանագրով նախատեսված Ռուսաստանի պարտավորությամբ՝ ապահովել Խորհրդային Հայաստանի համաձայնությունը՝ Նախիջևանը ԱդրԽՍՀ խնամակալությանը հանձնելու հարցում:

Երկրորդ առավելություն. պայմանագրով Նախիջևանը չի հանձնվում որիորդային Ադրբեջանին որպես նրան պատկանող տարածք: Նախիջևանի երկրամասը տրվում է ԱդրԽՍՀ հովանավորությանը: Եվ միայն այդքանը: Երկրամասին ինքնավար հանրապետության կարգավիճակ է տրվել ԽՍՀՄ իրավաբաղաբական իրողությունների համատեքստում՝ որպես ԽՍՀՄ ներքին հարց, ինչը չի անդրադարձել Կարսի բազմակողմ միջազգային պայմանագրի բովանդակության վրա: ԽՍՀՄ լուծարումից հետո պայմանագիրը որպես ինքնիշխան պետությունների կողմից կնքված իրավական փաստաթուղթ վերադարձել է, եթե կարելի է այսպես ասել, իր ելակետային դիրքին: Նախիջևանի մասով փաստաթուղթը ստորագրած չորս երկրներից երեքը հանդիսանում են այն երկրները կան նրանց իրավահաջորդները, ովքեր կնքել են պայմանագիրը: Այսպիսով, Կարսի գործող պայմանագրի համաձայն Նախիջևանը մերօրյա Ադրբեջանական Հանրապետության մաս

չի կարող դիտվել: Ըստ անժամկետ այդ պայմանագրի՝ երկրամասը կարող էր պահպանել հովանավորության հանձնված տարածքի իր կարգավիճակը, եթե 1991 թ. աշնանը ԽՍՀՄ լուծարման գործընթացում մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը մնար Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը, այն պետական կազմավորման իրավահաջորդը, որի հովանավորությանն է հանձնվել Նախիջևանը: Բայց, ինչպես արդեն նշվել է, 1991 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Բաքվում ընդունվեցին Ադր ՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու պետական ակտեր, որոնց հետ կապվում է Կարսի պայմանագրի հայանպաստ մեկ այլ առավելություն:

Երրորդ առավելություն. Կարսի պայմանագիրը միակ փաստաթուղթն է, որտեղ կողմերը պարտավորվել են լուծել Նախիջևանի հայ փախստականների վերադարձի հարցը: Ծիշտ է, այդտեղ խոսվում է ոչ թե հատկապես հայ փախստականության, այլ ընդհանրապես փախստականների հարցի կարգավորման մասին: Բայց որևէ կասկած չկա, որ նկատի է առնվել հենց հայ փախստականների հարցի լուծումը, քանի որ այլ փախստականներ չեն եղել: Բացի այդ, քսանական թվականներին ԽՍՀՄ և ԱնդրՖեդերացիայի ղեկավար մարմիններին միայն հայերն են դիմել իրենց տները վերադառնալու պահանջներով ու խնդրագրերով: Կան Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների մերժումները՝ անհեթեթ հիմնավորումներով: Խորհրդային տարիներին Նախիջևանահայությանը ոչ միայն արգելվեց վերադառնալ իր բնօրրանը, այլև տեղում մնացած հայերի նկատմամբ իրագործվեց ազգային իրավունքների ոտնահարման, տնտեսական ու քաղաքական հալածանքների քաղաքականություն, որը 1988-ին ավարտվեց զանգվածային բռնությունների միջոցով երկրամասից նրանց դուրս մղմամբ: Փաստորեն Նախիջևանում իրագործվել է ցեղասպանության անթաքույց քաղաքականություն: Եվ Կարսի պայմանագիրը դառնում է այն միակ բազմակողմ միջազգային պայմանագիրը, որը հիմք կարող է դառնալ Նախիջևանի հայ փախստականների վերադարձի և այդ երկրամասում իրագործված ցեղասպանության հետևանքները վերացնելու հարցը իրավական հիմքով քննարկելու համար:

Չորրորդ առավելություն. այս մեկը անմիջապես չի բխում Կարսի պայմանագրի այն տեքստից, որ ընդունվել է 1921-ին և անփոփոխ մնացել մինչ օրս: Այն կապված է, ինչպես կարելի է հեշտությամբ կռահել, 1991 թվականի աշնանը անկախացման գործընթացում ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու Բաքվի ընդունած պետական ակտերի հետ: Դրանք են՝ 1991-ի օգոստոսի 30-ին ընդունած «Պետա-

կան անկախության վերականգնման մասին» հռչակագիրը և նույն թվականի հոկտեմբերի 18-ին ընդունած «Պետական անկախության մասին» սահմանադրական ակտը: Ինչպես նկատվեց, եթե ԽՍՀՄ լուծարման ընթացքում մերօրյա Ադրբեջանական հանրապետությունը չիրաժարվեր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդությունից, այսօր ըստ Կարսի պայմանագրի Նախիջևանը կշարունակեր մնալ նրա հովանավորությանը հանձնված հայկական տարածք: Բայց ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու ակտը իրավական նոր իրավիճակ ստեղծեց նախիջևանյան հարցում: Փաստորեն դադարեց գոյություն ունենալ Խորհրդային պետական այն կազմավորումը, որի անժամկետ հովանավորությանն էր հանձնվել Նախիջևանի երկրամասը: Ադրբեջանական Հանրապետությունը գործող Կարսի պայմանագրի համաձայն լեզվաբանորեն կապ Նախիջևանի երկրամասի հետ չունի: Այն ԽՍՀՄ լուծարման ընթացքում առաջացած նոր պետական կազմավորում է, որի հետ Նախիջևանը որևէ իրավական առնչություն չունի: Նախիջևանը մաս չի կազմել նաև Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության, որի իրավահաջորդն է իրեն հռչակել Ադրբեջանական Հանրապետությունը: Ավելին, 1918-1920 թթ. գոյատևած և 1991-ին վերականգնված պետականությունը, ինչպես հայտնի է, չի ունեցել հաստատված ու ճանաչված սահմաններ: Այնպես որ, Կարսի պայմանագրից և ԽՍՀՄ լուծարման ընթացքում Բաքվում ընդունված պետական իրավական ակտերից ցանկացած անկողմնակալ փորձագիտական հանձնաժողով կարող է գալ այն հետևության, որ Նախիջևանն այսօր Բաքվի կողմից օկուպացված տարածք է: Խորհրդային Հայաստանի իրավահաջորդ Հայաստանի Հանրապետությունը, անկասկած, կարող է դիմել միջազգային դատարան՝ Կարսի գործող պայմանագրից բխող իր իրավունքները երկրամասում վերականգնելու համար: Բայց դա ենթադրում է ընդունել, որ Հայաստանի Հանրապետությունը Կարսի պայմանագիրը ստորագրած Խորհրդային Հայաստանի իրավահաջորդն է:

Ինչպես տեսնում ենք, պայմանագիրը մեր օգտին չրջելու հնարավորությունը կապված չէ նրա մեկուսի քննարկման հետ: ԽՍՀՄ լուծարման ընթացքում Բաքվում ընդունված իրավական հիմնարար փաստաթղթերը փոխել են պայմանագրով Նախիջևանի համար սահմանված կարգավիճակը: Ադրբեջանական Հանրապետությունը այլևս այն պետությունը չէ, որի հովանավորությանը հանձնվել է Նախիջևանը: Եվ հենց այդ համատեքստում խնդրի դիտարկումն է բերում իրավական այն հետևության, որ Նախիջևանը այսօր օկուպացված տարածք է:

Այժմ մենք կարող ենք մեր մոտեցումը իրավական ու քաղաքական դիտակետերից համեմատել նախորդների հետ: Եթե ընտրում ենք Կարսի պայմանագիրն անիրավազոր ճանաչելու պահանջով Ռուսաստանին ու Թուրքիային (կամ գոնե Ռուսաստանին, ինչպես հաճախ հնչեցվում է) դիմելու մարտավարությունը, ապա մենք իրականում իրավական պատերազմ ենք հայտարարում նրանց և առիթ ենք տալիս նրանց դիրքերի մերձեցման: Մեր կողմից առաջարկվող մոտեցման դեպքում մենք չենք հակադրվում նրանց, այլ առաջարկում ենք հավատարիմ մնալ գործող պայմանագրին, որից բխում է Բաքվի կողմից Նախիջևանի օկուպացված լինելու մասին իրավական եզրակացությունը: Եթե առաջին դեպքում մենք փորձում ենք հասնել որոշակի նպատակի՝ առճակատման մեջ մտնելով Ռուսաստանի և Թուրքիայի հետ, ապա երկրորդ դեպքում մենք նույն նպատակին հետամուտ ենք լինում՝ չհակադրվելով նրանց: Ավելին, համաձայնելով նրանց հետ, նրանցից հետևողականություն ենք պահանջում պայմանագրը հարգելու և նոր իրադրության մեջ նրանից բխող հետևանքները հաշվի առնելու հարցերում: Չենք հակադրվում ոչ պայմանագրին, ոչ էլ այն ստորագրող կողմերին, բայց հետապնդում ենք այն նպատակը, որին, թվում էր, կարելի է հասնել միայն փաստաթուղթը բեկանելու և կողմերի հետ հրապարակավ գժտվելու ճանապարհով:

Հենց սա է Կարսի պայմանագիրը մեր օգտին շրջելու այն հնարավորությունը, որն իմ կարծիքով տեսանելի է անգեմ աչքով:

ՆՈՐ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Ընդդիմադիր տեսակետի ջատագովներն իսկույն կնկատեն. «Իսկ Մոսկովյան պայմանագիրը: Չէ՞ որ դա է ընկած Կարսի պայմանագրի հիմքում»: Պարզվում է՝ Մոսկովյան պայմանագրի մասին մեզ պաշտոնապես խոսել ընդհանրապես պետք չէ: Եվ ահա թե ինչու. Կարսի պայմանագիրը՝ որպես բազմակողմ միջազգային պայմանագիր, Նախիջևանի մասով իր մեջ ներառում է այն ամենը, ինչ նշված է Մոսկովյան պայմանագրում: Կարելի է, իհարկե, անընդհատ բարձրաձայնել այն իրոք ճիշտ միտքը, թե Մոսկովյան պայմանագիրը միջազգային իրավունքի տառին ու ոգուն հակասող, ապօրինի, իր կնքման պահից անիրավազոր փաստաթուղթ է: Բայց եթե մենք, ինչպես ասացինք, շրջում ենք Կարսի պայմանագիրը մեր օգտին, Մոսկովյան պայմանագիրը ինքնին դառնում է գործի հետ կապ չունեցող փաստաթուղթ: Մոսկ-

վան ու Անկարան կարող են որոշել, թե ինչպես վարվեն դրա հետ: Դա երկկողմ փաստաթուղթ է: Թող վարվեն ինչպես ուզում են: Այն չի ազդում հետխորհրդային իրավաքաղաքական իրողությունների համատեքստում Կարսի պայմանագրից բխող իրավական այն հետևանքի վրա, ըստ որի Նախիջևանը այսօր Ադրբեջանական Հանրապետության կողմից օկուպացված տարածք է:

Մեզ, անկասկած, առաջին հերթին հետաքրքրում է Ռուսաստանի՝ որպես ռազմավարական մեր դաշնակցի (այդպես է պաշտոնապես որակվում հետխորհրդային Ռուսաստանի և Հայաստանի քաղաքական հարաբերությունը), արձագանքը Նախիջևանի կապակցությամբ հնարավոր մեր հարցադրումների վերաբերյալ: Մեծ դիվանագետ պետք չէ լինել կռահելու համար, որ Մոսկովյան և Կարսի պայմանագրերը անիրավագոր ճանաչելու Ռուսաստանին ներկայացված պահանջը նոր Ռուսաստանը կընդունի անախորժությամբ: Ի վերջո այդ պահանջը չի կարող չունենալ Մոսկվային ներկայացվող մեղադրանքի իմաստ, որին Մոսկվան չի կարող չտալ կոշտ պատասխան: Ի դեպ, այդ պատասխանը արդեն իսկ տրված է որպես պատասխան Սևրի և Մոսկովյան պայմանագրերի հարցով Սուրեն Այվազյանի կողմից ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինին և ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված բաց նամակին: «Գոլոս Արմենիի» խմբագրությունը այդ պատասխանը «Ռեցենզենտի պատասխան» վերնագրով, անստորագիր նամակի տեսքով, ստացել է 2003 թվականի փետրվարի 7-ին և տպագրել:

Ես չեմ բացառում, որ Մոսկվան դեռևս Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության տարիներին Երևանին դիմած լինի խնդրանքով, որպեսզի հայկական կողմը չարձարժի և պաշտոնապես չբարձրացնի Մոսկվայի և Կարսի պայմանագրերի անիրավագորության հարցը: Այդ խնդրանք-առաջարկը նա, բնական է, պետք է աներ իբրև Հայաստանի Հանրապետության հետ հատուկ հարաբերություններ ունեցող բարեկամ երկիր: Չի բացառվում նաև, որ այդ խնդրանք-առաջարկը ունեցել է ճնշման ձև և արվել է նույն Մոսկովյան պայմանագրի 15-րդ կետի համաձայն: Եթե ընդունենք, որ դա այդպես է եղել, ապա բացատրություն է ստանում Նախիջևանյան հարցով Հայաստանի Հանրապետության լռությունը հետխորհրդային տարիներին: Բայց սա միայն ենթադրություն է, քանի որ այս հարցում մեզ դեռևս տեսանելի չէ հետխորհրդային հայ-ռուսական հարաբերությունների «սառցալեռան ստորջրյա մասը»: Հնարավոր է, որ նման խնդրանք-պահանջ չի եղել: Իսկ եթե եղել է, ապա խոսքը կարող էր վերաբերել միայն

նրան, որ Երևանը չպահանջի անիրավագոր ճանաչել խնդրառարկա պայմանագրերը և իր ռազմավարական դաշնակցին չդնի անհարմար վիճակի մեջ: Թեման միայն այդ իմաստով կարող էր արձարժվել, քանի որ հետխորհրդային շրջանում հայաստանյան քաղաքական շրջանակներում և մամուլում միայն այդ և միայն այդ կտրվածքով էր հարցը քննարկվում:

Իսկ եթե մենք նման պահանջ չենք ներկայացնում և, հակառակը, ընդունում ենք Կարսի պայմանագրի (խոսքը միայն Կարսի պայմանագրի մասին կարող է լինել, քանի որ միայն նրա տակ է դրված Խորհրդ. Հայաստանի ստորագրությունը) իրավագործությունը և պնդում ենք հետևել հետխորհրդային պայմաններում նրանից բխող իրավական հետևանքների՞ն: Սա տրամագծորեն այլ պահանջ-առաջարկ է և կապված չէ Ռուսաստանին որևէ մեղադրանք ներկայացնելու հետ: Ավելի քան համոզված եմ, որ մենք չենք արել նման առաջարկ, քանի որ Կարսի պայմանագիրը հետխորհրդային պայմաններում նորովի մեկնաբանելու բուն գաղափարը չկար: Եվ դա երևում է Լևոն Տեր-Պետրոսյանի արդեն հիշատակված «Պատերազմ, թե՞ խաղաղություն» հոդվածից: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մեր պաշտոնական դիվանագիտությունը հետխորհրդային իրողությունների պայմաններում Կարսի պայմանագրի մեկնաբանության հարցում մնացել է նույն դիրքերի վրա:

Ընդդիմախոսները կարող են բերել նոր հակափաստարկ: Ռուսաստանը դեմ կլինի նաև նոր (վերը իմ կողմից շարադրած) ձևով Նախիջևանյան հարցը մեջտեղ բերելուն՝ այն հիմնավորումով, որ միջազգային հանրությունը մերօրյա Ադրբեջանական Հանրապետությունը ճանաչել է նախկին ԱդրԽՍՀ սահմաններում՝ ներառյալ Նախիջևանը: Սա ենթադրություն է այն մասին, թե իբր պայմանագրին անմիջապես առնչվող կողմերից մեկը՝ Մոսկվան, ընդհանրապես դեմ է որևէ տարբերակով խնդրին անդրադառնալուն և շարունակում է ճնշում գործադրել «ռազմավարական իր դաշնակցի» վրա՝ նրանից պահանջելով լռության մատնել հարցը: Նախկին ԱդրԽՍՀ սահմաններում Ադրբեջանական Հանրապետության միջազգայնորեն ճանաչված լինելու փաստը այդ պարագայում նա կարող է օգտագործել որպես իր կեցվածքն արդարացնելու հարմար փաստարկ:

Անձամբ վստահ չեմ, թե հնարավոր տարբերակների մեջ հենց դա է իրողությունը: Բայց ենթադրենք, թե իրողությունը «սառցալեռան ստորջրյա մասում» հենց այդպիսին է: Մենք այդտեղից արդյո՞ք պիտի եզրակացնենք, թե ամեն ինչ անհուսալի է, և մեզ անգործության մատնենք՝ անօգուտ դիտելով խնդրի միջազգային հնչեցումը: Բնավ: Ազգային կամ պե-

տական որևէ խնդիր, որ կապված է այլ ազգերի ու պետությունների շահերի հետ, չի լուծվում միայն պաշտոնական դիվանագիտության խողովակներով: Բարձր դիվանագիտական մշակույթ ունեցող երկրները սովորաբար պաշտոնական դիվանագիտությամբ միայն եզրափակում են խնդրի լուծումը: Նախապատրաստական փուլում հետամուտ են լինում հանրային կարծիքի ձևավորման, ընդդիմախոսին կամ հակառակորդին տեղեկատվական ու քարոզչական դաշտում հաղթելու, նրան միջազգային կառույցներում մեկուսացնելու նպատակներին: Դրանց մեծ մասը չի արվում պաշտոնական դիվանագիտության անունից: Դրա համար կան տեղեկատվական միջոցներ, քարոզչական ծրագրեր, ժողովրդական դիվանագիտության խողովակներ: Բաքուն այսօր դրսևորում է բոլոր այդ միջոցներին տիրապետելու և դրանք ամենաարդյունավետ ձևով գործադրելու նախանձեղի նպատակաուղղվածություն և վարպետություն: Մենք այդ հարցում զլուխ գոլվելու բան չունենք: Եվ դա ամենից առաջ պայմանավորված է գիտականորեն մշակված արտաքին քաղաքական հայեցակարգի բացակայությամբ: Առանց դրա հնարավոր չէ հաջողություններ արձանագրել մեզ պարտադրված տեղեկատվական պատերազմում կամ մեզ համար նպաստավոր ձևով փոխել խնդրի տեղեկատվական կերպարը: Գիշտ տեղն է որոշակի օրինակի վրա բացատրելու:

Եթե մենք ինքներս պնդում ենք, թե գրավել ենք Ադրբեջանական Հանրապետությանը օրինաբար պատկանող տարածքներ կամ ինքներս հավասարության նշան ենք դնում աշխարհագրական Լեռնային Ղարաբաղի ու նրա մի մասի վրա ստեղծված ԼՂԻՄ վարչական միավորի միջև կամ, վերջապես, եթե ԼՂՀ շրջափակմանը կամ նրա դեմ սանձազերծված պատերազմին մասնակցած ադրբեջանցիներին ինքներս անվանում ենք փախստականներ, ապա հազիվ թե հնարավոր լինի դիմակայել Բաքվի տեղեկատվական ու քարոզչական գրոհներին: Եվ պաշտոնական դիվանագիտությունը պետք է ձախողության մատնվի, ինչպես և մատնվում է:

Նույնը Նախիջևանի կապակցությամբ: Եթե մենք Խորհրդային Հայաստանը չենք համարում հայ ժողովրդի արյունով նվաճված պետականություն, մտադրվում ենք պահանջել Կարսի պայմանագրի (պայմանագիր, որից անմիջապես բխում է Բաքվի կողմից Նախիջևանի օկուպացված լինելու փաստը) դեմոնստրացիան, եթե մենք

լռության ենք մատնում նախիջևանահայության ցեղասպանության, հայ փախստականության իրավունքների վերականգնման հարցերը, ապա հազիվ թե հնարավոր լինի շահել մեզ պարտադրված տեղեկատվական ու քարոզչական պատերազմը: Շահող հայեցակարգի ու արտաքին քաղաքական մարտավարության բացակայության պայմաններում խնդիրը լռության մատնելը դառնում է լավագույն (իմա՝ ճարահատյալ) դիվանագիտական վարքը: Եվ ես հակված եմ այն մտքին, որ իրերի վիճակը հենց այդպիսին է, և մեր պաշտոնական լռությունը հենց այդ բացատրությունն ունի:

Կա սակայն խնդրի՝ նշվածներից տարբեր մեկ այլ տեսանկյուն՝ կապված նախիջևանահայության հետ: Նույնիսկ ամենալավ հայեցակարգը անհնար է գործողության մեջ դնել, եթե փախստականության վիճակում հայտնված նախիջևանահայությունը անտարբերություն ցուցաբերի իր ճակատագրի հանդեպ: Այստեղ էլ, ցավոք, մենք *նրանցից* (մեր ընդդիմախոսներից) ընդօրինակելու շատ բան ունենք: Տեսեք ինչպիսի կազմակերպվածությամբ, նպատակասլացությամբ ու կրքով են գործում Դրիմի թաթարները կամ մեսխեթցի թուրքերը: Նախիջևանահայությունը նույնպես ունի հայրենակցական միություն, թերթ ու ամսագիր: Սակայն խոստովանել է պետք, որ մինչ օրս նրան չի հաջողվել իր օրինական իրավունքներին տալ միջազգային հնչեղություն կամ իր հարցերը տանել միջազգային կառույցներ: Պատճառների մեջ կարևորագույնը հայեցակարգի և նրանից բխող գործողությունների հստակ ծրագրի բացակայությունն է:

Սույն հոդվածը ես համարում եմ մի քայլ այդ հայեցակարգի մշակման ճանապարհին: Եվ ոչ ավելին:





ՍԵՐՔԱԿԱՆ ՆԱԽԻՋԵՎԱՆԸ



ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունում

Սերբիայի Հանրապետության Պատվո հյուպատոս

Կոստվոյի (մարզի լրիվ անունը՝ Կոստվո և Մետոխիա) մասին շատ ու բազմաբնույթ հրապարակումներ են եղել մանավանդ վերջին տարիներին: Փետրվարի 17-ին, Կոստվոյի անկախացումից հետո, համաշխարհային մամուլը հեղեղվեց նոր ու իրարամերժ հրապարակումներով և գնահատականներով: Որքանով մենք՝ հայերս ականջալուր եղանք այդ հրապարակումներին, ինչպիսի՞ որակումներ տվեցինք կոստվյան իրադարձություններին: Վստահորեն կարելի է ասել, որ հայ ընթերցողը անտեղյակ է Կոստվյան հիմնախնդրին, քանի որ հայաստանյան մամուլում հիմնարար ու արժեքավոր հրապարակումներ առ այսօր չեն եղել, եղածներն էլ՝ դեսուդեմից վերցրած ոչ լիարժեք ու ոչ արժանահավատ աղբյուրներից են:

Այս հրապարակումը պատրաստելուց առաջ երկար են խորհել, փորձել ավելի խորությամբ ընկալել կոստվյան ողբերգությունը: Հրապարակման շարժառիթը ոչ սերբասիրությունն է, ոչ էլ համակրանքս սերբ ժողովրդի նկատմամբ: Պատճառներն ավելի քան խորքային են: Ցանկացել են հայ ընթերցողին, առավել ևս քաղաքականությամբ զբաղվողներին մեկ անգամ ևս հիշեցնել, որ յուրաքանչյուր հարցի լուծում պահանջում է նյութի լավ ու հստակ իմացություն, իսկ որոշումներ կայացնելուց առաջ՝ արդարամտություն:

Ամբողջ աշխարհը ականատես եղավ Կոստվոյի ողբերգությանը: Իրեն առաջադեմ համարող մարդկությունը

երես թեքեց ճշմարտությունից, գերտերությունները վերջապես իրականացրին իրենց դիվային ծրագրերը՝ վերածնեցին Սերբիայի քարտեզը՝ սերբերից խլելով նրանց բնօրրանը՝ Կոստվոն, որի արմաքամ հողը ավելի քան 600 տարի տնքացել և շարունակում է տնքալ օսմանցու դաշույնի պատճառած վերբերից: Տեղի ունեցավ նույնը, ինչ անցյալ դարի 20-ական թվականների սկզբին, երբ Հայաստանից բռնի անջատվեցին Ղարաբաղն ու Նախիջևանը:

Աշխարհագրական բարենպաստ դիրքի շնորհիվ Կոստվոն միշտ էլ կարևոր նշանակություն է ունեցել Սերբիայի պատմության մեջ: Կոստվո անունը հիշատակվում է դեռ 12-րդ դարում: Ռաշկայի իշխան Ստեֆան Նեմանյայի տիրապետության օրոք: Մինչև Բալկաններում թուրքական նվաճողական արշավանքներն ընկած ժամանակահատվածում այստեղ զարգացում են ապրել ճարտարապետական մեծաթիվ ու նշանավոր կոթողներ ունեցող քաղաքներ՝ Պրիշտինան, Յանկոն, Վուչիտրնը, Տրեպչան, Զվեչանը և այլն: Կոստվոյում և Մետոխիայում այսօր էլ հրաշքով կանգուն են միջնադարում կառուցված արժեքավոր բազում հուշարձաններ, որոնցից ամենանշանավորներն են Գրաչանիցան, Դեչանին, Լեիշկա Աստվածածինը, Բանյսկան և, առաջին հերթին, սերբական ուղղափառության սիրտը՝ 13-րդ դարում հիմնադրված Պեչի պատրիարքարանը՝ սերբերի էջմիածինը: Այդ հոյակերտ հուշարձանները ոչ հեռավոր ապագայում կարող են դառն ճակատագիր ունենալ՝ քանդվել կամ վերածվել մզկիթների: Հիշենք, թե

ինչպես շքեղաշուք Սուրբ Սոփիայի տաճարը Կոստանդնուպոլսում օսմանցին վերաշինեց, մահմեդականացրեց ու անվանեց Այա Սոփիա: Ի՞նչ դժվար բան է թուրքի համար եկեղեցին վերածել մզկիթի:

Օսմանյան արշավանքների հետևանքով կտրուկ փոխվեց Սերբիայի բնօրրանի պատկերը: 1389 թվականին սերբերը իշխան Լազարի գլխավորությամբ ազգային-ազատագրական պայքարի ելան սուլթան Մուրադի մեծաթիվ զորքի դեմ: 1389-ի Կոսովոյի ճակատամարտը բախտորոշ էր սերբերի համար, քանի որ իշխան Լազարի բանակից բացի չկար մեկ այլ ուժ, որ ունակ լիներ դիմակայելու թշնամու զորքին: Օսմանյան լծի շուրջ 500 տարիների ընթացքում մեծ չափերի հասավ Կոսովոյի սերբերի արտագաղթը՝ շարունակվելով մինչև թուրքական լծից Սերբիայի վերջնական ազատագրումը՝ 1912 թվականը: Կոսովոն Սերբիային և Չեռնոգորիային միացավ միայն

1912 թվականին: 1878-ի Բեռլինի վեհաժողովում, որը բացասական առումով ճակատագրական եղավ հայերի համար, Սերբիան և Չեռնոգորիան անկախություն ձեռք բերեցին և հռչակվեցին ինքնիշխան պետություններ: Նույն տարվա հունիսի 10-ին կոսովաբնակ բոլոր ալբանների 300 ներկայացուցիչներից Պրիզրենում, որ սերբ Դուշան արքայի օրոք սերբական միջնադարյան պետության մայրաքաղաքն էր, հիմնադրվեց «Պրիզրենյան լիգան»: Ակտիվացավ ալբանների շարժումը: Օսմանյան թուրքիային այդ լիգայի ներկայացրած պահանջի էությունն այն էր, որ Ստամբուլը նպաստի տարածաշրջանի ալբանաբնակ բոլոր մարզերին ինքնավարություն տալուն: Մերժում ստանալով՝ Կոսովոյի ալբանները 1879-ի հուլիսին իրենց ձեռքը վերցրին իշխանությունը քաղաքների մեծ մասում, իսկ 1905-1912 թվականներին թուրքական իշխանությունների դեմ նույնիսկ մի շարք խռովություններ կազմակերպվեցին:

Սերբիան բազմազգ պետություն է, բնակչության գերակշիռ մասը սերբեր են: Ապրում են նաև ավելի քան 20 ազգեր ու ազգություններ ներկայացնող փոքրամասնություններ՝ հունգարներ, ռումիներ, սլովակներ, ռուսիներ,

բուլղարներ, ռուսներ, ուկրաինացիներ, գնչուներ, ալբաններ, թուրքեր: Ազգային փոքրամասնությունները միշտ էլ հնարավորություն են ունեցել կուսակցություններ ստեղծել, լիարժեք մասնակցել երկրի քաղաքական կյանքին: Այդքանից հետո ասել, թե Սերբիայում, մասնավորապես Կոսովոյում, ալբանները, որպես ազգային փոքրամասնություն, հալածվել և զրկվել են իրենց իրավունքներից, անարդար կլինի: Ազգային բոլոր փոքրամասնություններից ամենից շատ թերևս իրենց իրավունքներից օգտվել են ալբանները: Փաստերը վկայում են, որ Կոսովոյում ալբաններն լեզվով մի քանի թերթ է լույս տեսել, հեռարձակվել են ալբաներեն հեռուստահաղորդումներ: Հանրակրթական դպրոցներում նրանց հնարավորություն է տրվել սովորելու մայրենի լեզվով: Կոսովոյի և Մետոխիայի ալբանները, սակայն, այլ կերպ են պատկերացրել հարցի լուծումը:

Նրանց վաղեմի երազանքն էր ստեղծել «Մեծ Ալբանիա»՝ Սերբիայի, Հունաստանի, Մակեդոնիայի տարածքների հաշվին: Այդ գաղափարը ձևավորվել է դեռ 19-րդ դարում, իսկ 20-րդ դարում դրա եռանդուն մարտիկը եղավ Ալբանիայի նախագահ Էնվեր հոջան, որն իր կենդանության օրոք վարում էր բացառապես հակասերբական և հակահարավսլավական քաղաքականություն՝ նպատակ ունենալով ինչ գնով էլ լինի Կոսովոն և Մետոխիան միացնել Ալբանիային: Այդ ամենին իր մեծ «ավանդը» բերեց նաև Հարավսլավիայի երկարամյա նախագահ Յոսիպ Բրոզ Տիտոն, որ Էնվեր հոջայի հետ ձեռք-ձեռքի տված իրականացրեց սերբերի «խաղաղ» տեղահանումը Կոսովոյից: «Մեծ Ալբանիա» ծրագիրը Հարավ-արևելյան Եվրոպան թուրքերի կողմից նվաճելու և հիմնականում թուրքերի դեմ Եվրոպական քրիստոնյաների պատերազմելու անմիջական հետևանք է:

Թուրքիայի Եվրոպական հատվածի քրիստոնյա բնակչությունը և, առաջին հերթին, Հին Սերբիայի ու այսօրվա Մակեդոնիայի հյուսիսային մասը, հուսավառված միացան Եվրոպական ուժերին՝ նպատակ ունենալով 1683 թվականին, Վիեննայի պաշարումից հետո, թուրքերին դուրս քշել Եվրոպայից: 1690-ին քրիստոնեական դաշինքի պարտությունից հետո, ի նշան վրեժի, սերբ բնակչությունը եղեռնի զոհ



դարձավ: Մի խոսքով, ալբան խաշնարած ցեղերն իրենց երկրի լեռնոտ վայրերից միայն 18-րդ դարի վերջին սկսեցին զանգվածաբար փոխադրվել Կոստվոյի և Մետոխիայի բերրի հողատարածքները, որտեղ ուղղափառ սերբերը մեծամասնություն են կազմել, ինչպես նաև արևմտյան Մակեդոնիայի հատվածները՝ Սկոպլեից մինչև Բիտոլ, որոնք բնակեցված են եղել սերբերով և մակեդոնացիներով: Կոստվոյում և Մետոխիայում ազգագրական կազմի փոփոխությունները մի կողմից օսմանյան նվաճողական քաղաքականության, մյուս կողմից՝ Եվրոպայի քրիստոնյաների ազգային ընդլզումների ու բախումների արդյունք են:

Բալկանների նկատմամբ այսօր էլ, ինչպես միշտ, չափազանց մեծ հետաքրքրություն են տածում գերտերությունները, մասնավորաբար ԱՄՆ-ը: Քաջ գիտակցելով, որ Կոստվոն ոչ միայն Սերբիայի, այլև Բալկանյան թերակղզու ողնաշարն է, Արևմուտքը դեռ տասնամյակներ առաջ հստակ ռազմավարություն էր մշակել՝ նպատակ ունենալով կոտրել ու մասնատել Հարավսլավիայի Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը, որի բանակն իր հզորությամբ չորրորդն էր գերմանականից, ֆրանսիականից ու անգլիականից հետո: Այդ առումով Ֆեդերատիվ Հարավսլավիայի տրոհումը ձեռնտու էր Արևմուտքին: Արդյունքում հարավսլավական վեց հանրապետություններից ծնունդ առած նորաստեղծ՝ ռազմական առումով ոչ հզոր պետությունների ճակատագրով պիտի «մտահոգվեր և զբաղվեր» ատլանտյան դաշինքը: Արևմուտքին հարկավոր էր թույլ Սերբիա, որի հետ, իր կարծիքով, հեշտ կլիներ «հաշիվ մաքրել»: Նախագահ Սլոբոդան Միլոշևիչի վարչակարգի՝ այսպես կոչված «հակաալբանական» քաղաքականությունը դատապարտելու պատրվակով, Արևմուտքը որոշեց պատժել ըմբոստ ու անհնազանդ սերբերին: Այդպես էլ եղավ: 1999 թվականի մարտի 24-ին ՆԱՏՕ-ի օդուժը ժամանակակից հրթիռներով կործանիչ հարվածներ հասցրեց Սերբիային՝ փորձելով ծնկի բերել նրան: 78 օր շարունակ մահաբեր հրթիռներ էին տեղում սերբական հողին: Դիվային այդ ծրագրի հեղինակներն ու ջատագովներն էին ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերը: Թե Արևմուտքն այդքան քաջություն ուներ, թող ցամաքային պատերազմ մղեր սերբերի դեմ, ոչ թե օդից ռումբեր թափեր Սերբիայի խաղաղ քաղաքների վրա: Լավ գիտեր, որ ցամաքային պատերազմում սերբերի հետ կռիվ տալը խաղ ու պար չէ և այդ պատերազմից պարտված պիտի դուրս գար: Դժվար է ասել, ինչ շահեց դրանից Արևմուտքը,

բայց անվարան կարելի է ասել, որ սերբերը պատմության մեջ արդեն որերորդ անգամ ցույց տվեցին իրենց անկոտրում կամքը, արդար պայքար մղելու և բռնությանը դիմակայելու իրենց վճռականությունը:

1999-ից առ այսօր Կոստվոյի ողջ տարածքը հսկվում է ՆԱՏՕ-ի ռազմական դաշինքի կողմից: 2008-ի փետրվարի 17-ին Կոստվոյի ինքնահռչակումն ավելի է արծակել ալբանների ձեռքերը: Ալբանները սերբական ճարտարապետական մեծարժեք տասնյակ վանքեր ու եկեղեցիներ են եղծել ու ավերել: Մեզ՝ հայերիս ծանոթ ձեռագիր է: Նույն կերպ օսմանցին 1915-ին հայերի հանդեպ գործած աննախադեպ ոճիրների ժամանակ ավերեց նաև մեր սրբությունները, ամայացրեց մեր պատմական հայրենիքը՝ զրկելով հային իր նախնյաց երկրում ապրելու և արարելու հնարավորությունից, բայց անկարող եղավ մեր մտքից ու հոգուց հանել պատմական հիշողությունը:

Կոստվոյան ճգնաժամի պատճառներից մեկն էլ միջազգային հանրության անտարբեր վերաբերմունքն է: Սկսած 1371 թվականի Մարիցայի, իսկ ավելի ուշ՝ 1386-ի և 1389-ի Կոստվոյի ճակատամարտերից (վերջինս կարելի է սերբական Ավարայր կոչել), սերբերը կյանքի ու մահու կռիվներում փորձել են կանխել օսմանյան հրոսակների խուժումը Եվրոպա: Այն ժամանակ էլ նույն Արևմուտքը կույր ու համր էր ձևանում՝ չհասկանալով, որ Սերբիան, Կոստվոն՝ մասնավորապես, անառիկ պարիսպ են եղել՝ պաշտպանելով Եվրոպան օսմանյան կործանարար արշավանքներից: Պետություն ստեղծելու սերբերի ազգային ու երազապաշտ գաղափարները Արևմուտքը միշտ էլ դիտել է որպես ազգայնամոլություն ու մեծապետականություն:

Ի՞նչ են տալիս մեզ՝ հայերիս, կոստվոյան ճգնաժամի ներկայիս դասերը, որքանով են դրանք համահունչ դարաբաղյան հիմնահարցի լուծմանը: Այսօր հաճախ կարելի է լսել շրջանառվող ու ծեծված այն կարծիքը, թե իբր Կոստվոյի հիմնահարցի լուծումը կարող է բարենպաստ մթնոլորտ ստեղծել և լավ նախադեպ լինել Արցախի ինքնորոշման համար: Ոչ ավելի ու ոչ պակաս պիտի միամիտ լինել հավատալու այդ «անհեթեթ նախադեպին»: Ցավոք, շրջանառվող այս թյուր տեսակետը մամուլում ու եթերում թութակի նման շարունակ կրկնող լրագրողները սեփական կարծիք չունեն Կոստվոյի անցյալի ու ներկայի մասին: Մենք՝ հայերս, պահանջում ենք, որ տասնամյակներ շարունակ մեր հիմնախնդիրներից երես թեքած աշխարհը շտկի մեր հանդեպ գործված անարդարությունը, հարգի մեր պատմական հայրենիքը վերագտնելու և այնտեղ ապ-



Փետրվար, 2008 թ. Բելգրադ

րելու հայի իրավունքը: Այդ պայքարը շիտակ է, պատմականորեն փաստարկված ու արդարացի: Արցախի անկախությունն ու ինքնիշխանությունը անքննելի հարց է: ԼՂՀ-ի անկախությունը ճանաչել չցանկացող գերտերություններն անգամ լավ են հասկանում, որ Արցախի անկախությունն անքննելի է: Այդ անկախությունը իայ ժողովուրդը ապահովել է ոչ թե Արևմուտքի կամ Արցախի ճակատագրով «մտահոգված» եվրոկառույցների համար, այլ՝ ապագա սերունդների, որոնք պիտի շարունակեն ապրել նախնյաց հողում:

Արցախն ինքնիշխան է դարձել համաձայն միջազգային բոլոր չափանիշերի դեռ 1992-ին, երբ Կոստվոյի անկախության մասին խոսք անգամ չկար, ուստիև համեմատությունը Արցախի հետ անտրամաբանական է: Մեր որոշ քաղաքական ու պետական գործիչներ, ցավոք նաև գիտության բնագավառի աշխատողներ կարծում, հաճախ նաև պնդում են, որ Կոստվոյի անկախությունը կարող է լավ նախադեպ լինել Արցախի ինքնորոշման համար: Ազգամիջյան հարաբերությունների հարցում, մանավանդ երբ պահանջատիրության խնդիր կա, չի կարելի առաջնորդվել կարծիքներով, այլ անհրաժեշտ է ունենալ հիմնարար և կայուն գիտելիքներ: Մինչդեռ, շատերը չիմանալով ոչ Կոստվոյի տեղը, ոչ էլ նրա պատմությունը, անընդհատ առաջ են տանում նախադեպի անհիմն ու վտանգավոր գաղափարը: Կոստվոյի ու Արցախի միջև ընդհանուր ոչինչ չկա և

չի կարող լինել: Նախադեպ փնտրելու փոխարեն ճիշտ կլիներ ծանրանալ մեր ազգային խնդիրների վրա: Մեր գերխնդիրը պիտի լինի ամուր ու կայուն պահել Արցախի անկախությունը, որն այլևս անշրջելի իրողություն է: Թող լավ գիտակցեն նախադեպի գաղափարից չիրաժարվողները, որ արցախահայությունը արյան գնով, ավելի ուշ՝ նաև հանրաքվեով է արտահայտել ազատ ու անկախ ապրելու իր կամքը՝ դրանով շտկելով պատմական անարդարությունը: Ի տարբերություն Արցախի, Կոստվոյի անկախությունն իրականացվել է բռնի ձևով, Արևմուտքի թողտվությամբ ու հովանավորությամբ, որպեսզի ապահովվի վերջինիս ազդեցության ոլորտը Բալկաններում: Թող այնպես չթվա, թե Արևմուտքը համակրում ու սիրում էր ալբաններին և մտահոգված էր նրանց ազատել ու փրկել այսպես կոչված «սերբական լծից»: Ամենևին: Արևմուտքին անհրաժեշտ էր քանդել Բալկանյան վերջին անառիկ բերդը՝ Սերբիան՝ նրանից անջատելով սերբերի մայր բնօրրանը՝ Կոստվոն: Արևմուտքն, ինչպես նախկինում, այս անգամ էլ չհասկացավ, որ անհնար է ծնկի բերել ըմբոստ ու արժանապատիվ սերբերին: Դա հասկանալու համար Արևմուտքն ինքը արժանապատիվ կեցվածք պետք է դրսևորեր՝ արդար լուծում տալու ազգամիջյան հակամարտություններին:

Աշխարհը քաջատեղյակ է, որ 1921 թվականին տեղի է ունեցել պատմական անարդարություն, առանց հայի

կարծիքը հաշվի առնելու նրանից խլվել է պատմական հայրենիքի մի հատվածը և սկուտեղի վրա մատուցվել երբեք գոյություն չունեցած և 20-րդ դարի 20-ական թվականներին ծնունդ առած ադրբեջանական նորաթուխ պետությանը: Ինչո՞ւ այն ժամանակ միջազգային հանրությունը սատար չեղավ Հայաստանին ու չհարգեց նրա տարածքային ամբողջականությունը: Բա էլ ո՞ւր մնաց «քաղաքակիրթ աշխարհի» բարոյականությունը:

Ինչ վերաբերում է Կոսովոյին, ապա դա սերբական միջնադարյան պետության բնօրրանն է, որտեղ մինչև 18-րդ դարի վերջը ալբաններ չեն եղել և որը սերբերը չեն խլել ալբաններից, ովքեր երազել են սերբական պատմական տարածքների հաշվին ձևավորել ու հռչակել Կոսովոյի անկախ պետությունը, որն էլ ապագայում պիտի միավորվի ու մաս կազմի «Մեծ Ալբանիայի», այն նույն կերպ, ինչպես թուրքերը չեն հրաժարվում ուրիշների տարածքների հաշվին «Մեծ Թուրան» ստեղծելու գաղափարից: Եթե այսօր ալբաններն Արևմուտքի թողտվությամբ ու հովանավորությամբ կեղծ ու շինծու պետություն են ստեղծել սերբական պատմական տարածքների հաշվին, հեռու չէ ժամանակը, երբ նրանք նման ախորժալի պահանջատիրությամբ ռազմատենչ հայտարարություններ կուղղեն Հունաստանին, Չեռնոգորիային, Մակեդոնիային՝ Ալբանիային հարևան երկրներին, ուր մեծ թվով ալբաններ են ապրում:

Քաղաքականությունից հեռու մարդուն էլ քաջ հայտնի է, որ յուրաքանչյուր հակամարտություն ունի իր ծագումը, զարգացումը և, բնականաբար, դրանց լուծման ուղիներն էլ տարբեր պիտի լինեն: Դժվար չէ նկատել, որ գերտերությունները երկակի չափանիշների քաղաքականությամբ առաջնորդվելով՝ մի դեպքում ճանաչում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, մյուս դեպքում՝ անտեսում Սերբիայինը: Ելնելով աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերից, Արևմուտքը մի դեպքում սատար է լինում ալբանական անհիմն անջատողականությանը՝ դրանով վիրավորելով սերբերին, ովքեր բռնի ձևով վտարվել են իրենց մայր բնօրրանից վերջին մի քանի տարվա ընթացքում, իսկ մեկ այլ դեպքում՝ խոչընդոտում է Արցախի անկախության ճանաչմանը, որն այլևս կայացած ու անշրջելի իրողություն է: Կոսովոյի պարագայում խոսքը ոչ միայն վտարված սերբերի, այլև Կոսովոյում բարբարոս ալբանների ձեռքով քանդված սերբական բազում վանքերի, եկեղեցիների, եղծված սրբավայրերի ու գերեզմանոցների մասին է, որոնց թիվը անցնում է հարյուրից:

Այս ամենը մեզ հիշեցնում է հայոց Նախիջևանի ոչ հեռավոր անցյալի ողբերգական ճակատագիրը: 1988-ի արցախյան հակամարտության ընթացքում հարկադրված իրենց տները լքեցին առանց այն էլ ոչ մեծ թիվ կազմող նախիջևանահայերը, քարուքանդ եղան մեր հոգևոր մշակույթի մասունքներն ու սրբատեղիները:

Իսկ Ջուղան... մեր շքեղաշուք Ջուղան, որ խաչքարերի ինքնատիպ, իր նմանը չունեցող մի բացառիկ թանգարան էր, քարուքանդ եղավ, իսպառ ավերվեց...

Ջուղայի անկրկնելի խաչքարերը սրբապիղծ աղըրբեջանցի բաշիբոզուկների արյունոտ ձեռքերով փշուրփշուր եղան և հավերժ կորան Արաքսի վշտաշաղ ջրերում: Այդ խաչքարերի տակ հանգչող լուսահոգի մնջեցյալները դարեր անց կրկին «նահատակվեցին»՝ այս անգամ դառնալով անանուն ու անշիրիմ...

Աշխարհն այս անգամ էլ քար լռությամբ վերաբերվեց ադրբեջանցիների իրականացրած մշակութային եղեռնին:

Հիմա փորձենք նախադեպ գտնել, ինչպես դա սիրում են անել հայաստանաբնակ որոշ քաղաքագետներ ու գիտնականներ: Եթե շատ են ցանկանում նախադեպերով լուծել հայկական դեռևս լուծում չստացած հարցերը, ապա Կոսովոն թող համեմատեն հայոց Նախիջևանի հետ: Նախիջևանում այսօր հայեր չկան, ավերված ու իսպառ վերացված են հայոց գոյության հետքերը՝ վանքերը, եկեղեցիները, սրբավայրերը:

Կոսովոյի ողբերգությունը Նախիջևանի ճակատագրի կրկնությունն է: Կոսովոն կարելի է կոչել սերբական Նախիջևան: 1921-ին ո՞վ հաշվի առավ հայերի կարծիքը, երբ մեզնից խլվեցին պատմական հայրենիքի հատվածները և բռնակցվեցին ադրբեջանական նորաստեղծ պետությանը: Այդ նույն ձևով աշխարհն արհամարհեց սերբերի կարծիքը և Կոսովոն սկուտեղի վրա մատուցվեց օտարներին: Շահարկելով Արցախի և Կոսովոյի միջև նախադեպի առկայությունը, մենք վտանգում և հարվածի տակ ենք դնում Արցախի անկախությունը: Արցախն ինքնորոշվել է դեռ 1992-ին, երբ նախադեպի նախադրյալներ անգամ չկային: Ի տարբերություն Արցախի, Կոսովոյի ինքնորոշումն իրականացրել են արտաքին ուժերը, որոնց ջանասիրությամբ ստեղծվել է Կոսովոյի սահմանադրությունը, հսկայական գումարներ են տրամադրվել այդ նպատակով: Այս գործընթացը նախապատրաստվել ու մշակվել է տասնամյակներով, ապա դարձել իրականություն: Ալբանները

պարբերաբար ահաբեկել են մեծամասնություն կազմող տեղաբնակ սերբերին՝ ստեղծելով վախի ու սարսափի մթնոլորտ: Արդյունքում՝ շատ սերբեր ստիպված էին լքել իրենց պապենական հողերը, որի հետևանքով Կոսովոյում կտրուկ փոխվեց ազգագրական կազմը: Թուրքի քաղաքականություն է. սկզբից գալիս են ուրիշի երկիրը հյուրի կարգավիճակով, ավելի ուշ պահանջում են հավասար իրավունքներ, վերջում՝ դառնում են պահանջատեր, բռնի մեթոդներով խլում ուրիշների ստեղծածը: Այդպես մենք կորցրինք Նախիջևանը, սերբերը՝ Կոսովոն: Էլ ինչ նախադեպի մասին է խոսքը: Փոխարենը գիտակցենք, որ չիրականացած երազներ ունենք՝ Նախիջևան, Արևմտյան Հայաստան, նաև Ջավախք, մենք արհեստականորեն խնդիրներ ենք ստեղծում՝ հույսը դնելով նախադեպերին՝ կասկածի տակ առնելով Արցախի ինքնորոշումը: Հոգեհարազատ սերբերի հետ համագործակցության ուղիներ որոնելու փոխարեն, մենք ջուր ենք լցնում մեր դարավոր թշնամու՝ թուրքի ջրաղացին, նույն թուրքի, որն իսկույն շտապեց ճանաչել Կոսովոյի արհեստածին անկախությունը՝ մոռացավ, որ Կոսովոյից շատ առաջ Արցախը միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան ինքնորոշվել էր: Ուղղակի չցանկացավ վիրավորել ադրբեջանցի արյունակիցներին:

Արևմուտքի մեծավորները, ովքեր չեն կրում կորուսյալ հայրենիքի ծխացող ցավը, ուն համար խորթ է կարոտի զգացումը, անսիրտ օտարականի կեցվածքով մեր դարավոր թշնամու հետ բանակցելու ու բարեկամանալու կոչեր են անում՝ այդպես էլ չհասկանալով, որ անհնար է բարեկամանալ խաչքար ու վանք ոչնչացնողի, ոսկեծեռիկ մատյաններ այրողի, սրբություններ ու շիրիմներ եղծողի հետ:

Ինչպես բարբարոս ալբանների, այնպես էլ ադրբեջանցիների համար հաշվեհարդար տեսնելու հիմնական միջոց եղել և մնում են դաշույնն ու կացինը, որոնց զոհ են դառնում ոչ միայն մեր հոգևոր սրբությունները, այլև՝ ծեր ու մանուկ, ինչու չէ՞ նաև օտարության մեջ խաղաղ առաքելությամբ ծառայող հայ սպա: Նենգ ու տմարդի ալբանների ու ադրբեջանցիների նկարագիրն է դա՝ ամեն ինչ իրագործել այն պահին, երբ զոհն անտեղյակ է ոճրին, անպաշտպան է ու անզեն: Հիշում են Կոսովոյում 14-րդ դարում կառուցված Գրաչանիցա եկեղեցու որմին պատկերված սերբ թագուհի Սինոնիդային: Թե հրաշքով կենդանանար թագուհին, եկեղեցու որմից հոգու աչքերով պիտի նայեր մարտիրոսավող սերբ ժողովրդին... ասում են հոգու աչքերով, քանզի հեռավոր անցյալում վայրագ մի առնաուտ (թուր-

քերն այդպես են կոչել ալբաններին) գիշերվա ուշ ժամին, երբ մարդիկ քուն են մտել, դաշույնով փորել ու որմնանկարից հեռացրել է նրա երկնագույն աչքերը:

Սերբերի նկատմամբ Արևմուտքի թշնամանքն ակնհայտ է ու անթաքույց: Սերբիան, ըստ էության, Եվրոպայի անառիկ միակ բերդն է, որն այդպես էլ ծնկի չեկավ Արևմուտքի առջև: Ամբողջ պատմության ընթացքում սերբերը հերոսության փայլուն օրինակներ են ցույց տվել՝ ապացուցելով, որ անհնար է կոտրել իրենց, նսեմացնել արժանապատվությունը, մտքից ու հոգուց հանել Կոսովո սրբազան անունը: Ասվածիս վառ օրինակներ են 1389-ի Կոսովոյի ճակատամարտը, 1878-ի Բեռլինի վեհաժողովը, 1914-ին սերբ ուսանող Գավրիլո Պրինցիպի ձեռքով Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը, 1941-45 թվականների պարտիզանական շարժումները Հարավսլավիայում ու էլի շատ սխրանքներ, որոնք սերբական անմեռ ու ընդվրզուն ոգու լավագույն դրսևորումներ են: Այս ամենը, անշուշտ, երբեք էլ Արևմուտքի սրտով չի եղել: Դա էր պատճառը, որ Սերբիան ու սերբերը 20-րդ դարավերջին կրկին հայտնվեցին զոհասեղանին, իսկ զոհասեղանն այս անգամ Հաագայի կեղծ ու շինծու դատարանն էր, որն ասես ստեղծված էր սերբերին պատժելու և նրանց արժանապատվությունը վիրավորելու համար: Եվ այս ամենից հետո զարմանք են հարուցում Հաագայի դատարանի նախ-



կին դատախազ, Հարավսլավիայի հարցերով զբաղվող Կառլա դել Պոնտեի՝ վերջերս արած հայտարարություններն այն մասին, թե ինչպես են անկախացած Կոսովոյի ներկայիս ղեկավարները առևանգել սերբերին ու հարըստացել նրանց ներքին օրգանների վաճառքով: Կառլա դել Պոնտեն պնդում է, որ կոսովցի 300 սերբերի Ալբանիա են տարել՝ ներքին օրգանները հանելու նպատակով: Նախկին դատախազը այդ հրեշավոր գործողությունները համեմատում է նացիստական ճամբարներում գործված ոճիրների հետ՝ նշելով, որ գլխավոր հանցագործները Կոսովոյի ազատագրական բանակի ալբան առաջնորդներն են, որոնցից մեկը անկախացած Կոսովոյի ներկայիս վարչապետ Հաշիմ Թաչին է: Ահա թե ինչ է ասել Կառլա դել Պոնտեն իր «Որս. ես և պատերազմի հանցագործները» գրքում. «Եթե ալբանացիների ոճիրները հայտնի դառնային, Կոսովոյի անկախության մասին խոսք անգամ չէր կարող լինել»: Ինչ ասել է՝ «եթե ալբանացիների ոճիրները հայտնի դառնային»: Այդ ոճիրները հայտնի են եղել, պարզապես լռեցվել է արդարության ծայրը, Արևմուտքի մեծավորները գերադասել են աչք փակել ու մոռացության մատնել սերբերի հանդեպ ալբանների գործած դաժանությունները: Հիմա, երբ գնացքը վաղուց հեռացել է, Կառլա դել Պոնտեի հուզացունց գիրքը և արված հայտարարությունները ի գորու չեն ետ բերել Կոսովոն: Ուշացումով մեղա գալը չի կարող դարձանել ու փարատել սերբերին Արևմուտքի պատճառած վիրավորանքները: Շատ տեղին է հիշել նաև կոսովյան իրադարձությունների ամենաթեժ շրջանում, երբ Սերբիայի վրա ռումբեր էին թափվում, ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հայտարարությունը. «Այստեղ, Կոսովոյում, սերբերի մեծ մասին մենք ապահովել ենք հավերժական հանգիստ» (վերցված է սերբական մամուլից): Իսկ «հավերժական հանգիստ» ասվածը՝ խոշտանգված ու մորթված սերբերի գերեզմաններն են, որոնք այնքան ավելացան, որ սերբերի պատմական բնօրրանը՝ Կոսովոն հավերժ հանգստատեղի դարձավ: Այ քեզ «ամենաժողովրդավար երկրի» տիկին պետքարտուղար...

Կոսովոյի ճակատագիրը տնօրինող Արևմուտքի ներկայիս մեծավորներին հարց տվող լինի՝ ինչպե՞ս կվերաբերվեն այլ երկրներում բնակվող ալբանների տարածքային պահանջատիրությանը: Պատասխանը պարզից էլ պարզ է՝ կվիժեցնեն ու արժանի հակահարված կտան ալբանական անջատողականությանը: Արևմուտքը հեշտ ու հանգիստ վերածնունդ ու առատածեռնորեն բաշխում է ուրիշի տարածքները, իր իսկ սեփական տարածքներից մի

թիզ անգամ չի տա ոչ ոքի: Այս հոգեբանությամբ Արևմուտքը ուրիշներին ժողովրդավարության դասեր է տալիս՝ չմտածելով սեփական բարոյական չափանիշների մասին: Ժողովրդավարությունը, ցավոք, գործում է առանձին ազգերին վերջնագրեր ներկայացնելու, նրանց պատժելու, ծնկի բերելու նպատակով:

Կոսովոն ոչ միայն սերբերի պատմության ամենաթանկ վավերագիրն է, այլ՝ մշակույթի ու գրականության, բանասիրության ու ազգային ավանդույթների բնօրրանը, որը, որպես սրբապատկեր, դաջված է ամեն սերբի հոգում, թրթռում է նրանցից յուրաքանչյուրի երակներում՝ հիշեցնելով, որ հողը զուտ ֆիզիկական ու աշխարհագրական տարածք չէ, այլ, առաջին հերթին, հոգևոր հայրենիք, որ սնող ու ժողովուրդ պահող ակունք է: Եթե նախկին Հարավսլավիայում, Բրոզ Տիտոյի վարչակարգի օրոք, Կոսովոյում նսեմացվել են սերբերի իրավունքները և միտումնավոր փոխվել է մարզի ազգագրական կազմը, ապա դա անկախանալու իրավունք չի տալիս այսօր մեծամասնություն կազմող եկվոր ալբաններին, ովքեր ընդհանուր ոչինչ չունեն Կոսովոյի հետ, ինչպես ընդհանուր ոչինչ չկա հայոց Նախիջևանի ու այնտեղ ապրող եկվոր ադրբեջանցիների միջև: Բրոզ Տիտոյի հակասերբական քաղաքականության ջատագովներից էր նաև Ալբանիայի երբեմնի նախագահ Էնվեր Խոջան, որը տասնամյակներով Կոսովոն ալբանացնելու քաղաքականություն էր վարում և ամեն կերպ ջանում էր սերբական այդ տարածքը դարձնել «Մեծ Ալբանիայի» մասը:

Դեռ 1999 թվականին Արևմուտքը Սերբիայի նախագահ Սլոբոդան Միլոշևիչից պահանջում էր կանխել սերբերի կողմից ալբանների հանդեպ գործված այսպես կոչված «ոճիրները»: Ինչո՞ւ նույն առաջադեմ Արևմուտքը չփորձեց կանխել 1997-98 թվականներին Կոսովոյում սերբերի հանդեպ միջնադարյան մեթոդներով ալբանների գործած աննախադեպ ոճիրները, ու նաև չկանխեց 1999-ին Սերբիայի նկատմամբ իրականացված ռմբակոծությունները, որոնց հետևանքով զոհվեցին հազարավոր մարդիկ, ավերվեցին բազմաթիվ տներ, կամուրջներ, վարչական ու կառավարական շենքեր:

Գաղտնիք չէ, որ Արևմուտքին հարկավոր է լարված պահել բալկանյան՝ առանց այն էլ պայթյունավտանգ տարածաշրջանը, որպեսզի մեկ անգամ էլ վերածնվի ու վերակառուցվի Եվրոպայի սիրտը՝ իր իսկ չափած-գծածով: Հողը, սակայն, նվեր չէ, որ հենց այնպես տրվի ինչ-որ մեկին: Հողը Աստծո պարգև է, որը վաղ թե ուշ վերադառնում է իս-

կական տիրոջը: Ժողովուրդն է հողի տերը, այլ ոչ թե աշխարհի քարտեզը վերածնող ու արհեստածին սահմաններ ստեղծող աշխարհակալ մեծավորները, ովքեր մեկընդմիջտ պիտի հասկանան, որ մարդ արարածի գեներտիկ համակարգում ամփոփված պատմական հիշողությունը հազարամյակներով ուղեկցում է մարդուն: Այդ հիշողությունը չես բանտի փշալարերով, չես ջնջի գենք ու զորքով, ոչ էլ՝ ավերելով ու կործանելով:

Սերբական Կոսովոյի անկախությունը վաղ թե ուշ գերեզմանափոր կդառնա Արևմուտքի համար, բայց արդեն ուշ կլինի: Հեռու չէ այն ժամանակը, երբ արևմտյան շատ երկրներ կունենան իրենց «կոսովոն»: Այդ ժամանակ միայն, երբ իրենք ևս խնդիրներ կունենան Արևմուտքին պահանջ ներկայացնող ալբանների հետ, լավ կհասկանան սերբերի անամոք ու ծխացող ցավը: Հիմա էլ, ուղիղ 130 տարի անց, այժմեական են հնչում հայ ժողովրդի իմաստուն զավակ Խրիմյան Հայրիկի խոսքերը՝ կապված «թղթե շերեփի» պատմության հետ: Հիացած 1878 թվականի Բեռլինի վեհաժողովում խիզախ ու արժանապատիվ սերբերով, որ արյունոտ սրերով էին ներկայացել Բեռլին՝ աշխարհին ցույց տալու, թե ինչպես պիտի ազատագրել հայրենիքը, նա դիմում է հայ ժողովրդին՝ ասելով, որ «թղթե շերեփով» հայրենիք ձեռք չի բերվում, հորդորում, որ գենք ձեռք բերեն, քանզի քաջ գիտակցում էր, որ ուժն է ծնում օրենք և միայն ուժով պիտի վերագտնել խլված հողն ու կորուսյալ երկիրը: Այսօր էլ, ինչպես Բեռլինի վեհաժողովում, հայերի ու սերբերի ճակատագրով, նրանց պատմական հայրենիքի սահմանների «ճշգրտմամբ» եվրոպական տարբեր վեհաժողովներ ու մեծավորներ են զբաղվում՝ փորձելով լուծում տալ արցախյան ու կոսովյան հարցերին: Այդ լուծումները ոչինչ չարժեն, եթե անտեսվի ժողովրդի պատմությունը, անտեսվեն անցյալի դառը դասերը, իր պատմական հայրենիքում ապրելու ժողովրդի կամքը:

Բեռլինի նշանավոր վեհաժողովը թող դաս լինի, որպեսզի այսուհետ չկրկնվեն անցյալի չարաղետ սխալները, որպեսզի միջազգային բանակցություններում մեր խոսքը ոչ թե «թղթե շերեփ» լինի, այլ՝ մեր հավաքական ուժը, չարին ու կեղծիքին ընդդիմանալու մեր ամուր կամքը, որը արդար պահանջատիրության միակ երաշխիքն է: Այդ նույն կերպ Բեռլինի վեհաժողովում սերբերն իրենց արյունոտ սրերով ցույց տվեցին ու ապացուցեցին, որ հայրենիքը պաշտպանելու միակ ուղին ուժն է:

Այսքանից հետո ստացվում է, որ եթե Հայաստանի

իշխանությունները ճանաչեն Կոսովոյի անկախությունը, կամա թե ակամա պիտի համագործակցեն հանցագործ վարչապետ Հաշիմ Թաչիի ու ալբան մյուս ղեկավարների հետ, ովքեր կազմակերպել են կոսովցի սերբերի սպանող, իրականացրել աննախադեպ ոճիրներ, քարուքանդ արել վանքեր ու եկեղեցիներ, որոնց մասին խոսելը մինչև վերջերս անցանկալի էր ու արգելված: Եվ, ահա, Կառլա դել Պոնտեն, Հաագայի միջազգային դատարանի նախկին դատախազը, որոշեց ի լուր աշխարհի հնչեցնել ճշմարտության ձայնը, խոսել սերբական տառապանքների, սերբերի հանդեպ գործված ոճիրների մասին:

Ի՞նչ կտա հայոց դիվանագիտությանը պաշտոնական երևանի կողմից Կոսովոյի անկախության ճանաչումը: Միանշանակ՝ ոչինչ: Հայաստանն էլ իր հերթին ոչինչ չի կորցնի, եթե անկախացած Կոսովոն մեր երկրի հետ չհաստատի դիվանագիտական հարաբերություններ: Թող դրանում վստահ լինեն մեր բարձրաստիճան այրերը և հիշեն, որ Հայաստանի կողմից Կոսովոյի անկախության ճանաչումը պատիվ չի բերի մեր դիվանագիտությանը, դրանով մենք կփակենք Նախիջևանը ետ բերելու բոլոր ուղիները: Աշխարհում կան հոգեհարազատ ժողովուրդներ, որոնց կարիքը մենք ավելի շատ ունենք, քան ալբանների, ովքեր իրենց նկարագրով ու պահվածքով ոչնչով չեն զիջում ադրբեջանցիներին:

Թվում է, թե Կոսովոյի անկախությունը ճանաչելուց առաջ Հայաստանի նորընտիր ղեկավարները լրջորեն պիտի խորհեն այս հարցի շուրջ, մտածեն դրանից բխող հետևանքների մասին, որովհետև հետո շատ ուշ կլինի, գուցե անհնար լինի ուղղել թույլ տված սխալը:

Ուստի անտրամաբանական է անընդհատ շահարկել ու շրջանառության մեջ դնել նախադեպի անհեթեթ գաղափարը: Դրանով ոչ միայն մոլորության ու թյուրիմացության մեջ են գցում մարդկանց, այլև վտանգում արյամբ ու զոհողություններով ձեռք բերված Արցախի անկախությունը:

Կոսովոն եղել և մնում է սերբերի գոյության խորհրդրդանիշը, նրանց սրբապատկերը, որի առջև ավելի քան ութ դար նրանք աղոթք են արել, ինչպես հայերն են մի քանի հազարամյակ նայել ու նայում սրբազան Արարատ լեռանը: Ինքն Արաքսից այն կողմ, հայացքը՝ հառած գետի այս ափին:

Աստծո ողորմածությամբ գալու է հատուցման ժամը: Գալու է վերադարձի բաղձալի օրը՝ Արարատի և Կոսովոյի աստեղային ժամը...

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

(ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ ՀԻՊՈԹԵԶԻ ԱՌԻԹՈՎ)

ԼԵՆԻՆ ՇԻՐԻՆՅԱՆ

Նոր աշխարհակարգի ձեւավորումը եւ նրա համատեքստում աշխարհի տարբեր մասերում ընթացող գործընթացները հետխորհրդային տարիներին դարձան ռազմավարության (երկրաքաղաքականության) ոլորտի տարբեր հեղինակությունների վերլուծությունների առարկան եւ զուգահեռաբար առաջադրվեցին գալիքի տարբեր նախագծեր:

Դրանցից մեկն էլ «քաղաքակրթությունների բախման» հանթինգթոնյան հիպոթեզն է, որը, նկատենք, դարձել է 20-րդ դարավերջի եւ մեր օրերի ռազմավարական մտքի կատալիզատորը՝ հարցադրումների նորարարությամբ եւ հաճախ լուծումների, ուղղակի ասենք, անսովորությամբ:

Ասվածի տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Սենյուել Ջանթինգթոնի՝ Ջայաստանին եւ հայ ժողովրդին վերաբերող դատողությունները, այդ շրջանակներում նաեւ Արցախի խնդրի շուրջ ընթացող քննարկումների տրամաբանությունը: Ինչպես մեզ է թվում, «հայկական թղթածրարի» հանթինգթոնյան իմացությունը, որը դրսևորվում է ինչպես նրա առանձին հոդվածներում¹, այնպես էլ 1996-ին լույս տեսած մենագրության մեջ², որոշակի լրացումների ու ճշգրտումների կարիք ունի, քանզի Ջանթինգթոնը սոսկ հետազոտող եւ շարքային քաղաքացի չէ, այլ ԱՄՆ-ի քաղաքական իսթեբլիշմենտի (establish-

ment) հեղինակավոր անդամ եւ policy-maker-ներից մեկը: Չէ որ Ջանթինգթոնի կարծիքի հետ հաշվի է նստում ամերիկյան քաղաքական ընտրանին, նրա տեսակետը քննարկվում է աշխարհով մեկ եւ ազդում է տարբեր ժողովուրդների քաղաքական ճակատագրի վրա: Իսկ եթե հաշվի առնենք նաեւ Ալ. Դուգինի կողմից Ջանթինգթոնի՝ որպես հանրապետականների խոսափողի որակավորումը, թե նա, Ջանթինգթոնը, բավական ճշգրիտ է արտացոլում երկու նորագույն երկրաքաղաքական (գեոպոլիտիկական) նախագծերից մեկի՝ նեոատլանտիզմի (պահպանողական ուղղություն) ելությունը³, ապա հետեւության պատկերն առավել պարզ կդառնա:

Ուստի եւ վերոշարադրյալի լույսի ներքո առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում քաղաքակրթությունների բախման հիպոթեզում հայոց տեղի ճշգրտումը՝ քաղաքակրթությունների դասակարգման նրա կիրառած գլխավոր չափանիշի՝ կրոնի եւ կրոնական պատկանելության հատկանիշով: Այսպես, «կրոնը,- գրում է նա,- քաղաքակրթության կենտրոնական, որոշիչ բնութագիրն է», եւ անմիջապես մեջ է բերում Քրիստոֆեր Դաուսոնի (Ch. Dawson) այն պնդումը, թե «մեծ կրոնները այն հիմքերն են, որոնց վրա հիմնվում են մեծ քաղաքակրթությունները»⁴: «Կրոնը,- կրկնում է մի այլ տեղ Ջանթինգթոնը,- քաղաքակրթության հիմնական որոշիչ հատկանիշն է...»⁵: Եվ մե-

խանիական նույնականություն տեսնելով Ուղղափառության եւ Արեւելյան եկեղեցիների միջեւ, Չանթինգթոնը հայերին «տեղադրում է» «ուղղափառ քաղաքակրթության» սանդղակում, ինչի հետեւանքով Չայաստանը հայտնվում է ուղղափառ-սլավոնական աշխարհի կազմում: Իսկ Ռուսաստանին վերագրելով «ուղղափառ քաղաքակրթություն», - նկատում է ռուս հետազոտող Նիկոլայ Յուստանովը,- նրա համար (հետեւաբար նաեւ Չայաստանի- L.C.) նախատեսում է «համագործակցության կրավորական ձեւ»⁶:

**Ա. ԿՐՈՆԸ ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇ.
ՀԱՆԹԻՆԳԹՈՆԻ ՏԵՍԱԿԵՏԸ**

Չայտնի է Չանթինգթոնի տեսակետն առ այն, որ հետերկրեւեռ աշխարհում լոկալ քաղաքականությունը դառնում է էթնիկական քաղաքականություն: «Գլոբալ քաղաքականությունը՝ դա քաղաքակրթությունների⁷ քաղաքականությունն է: Գերտերությունների մրցակցությունը վերաճում է քաղաքակրթությունների բախման: Առաջին անգամ պատմության մեջ,- ազդարարում է Չանթինգթոնը,- գլոբալ քաղաքականությունը դառնում է բազմաբեւեռ եւ բազմաքաղաքակրթական»⁸: Նկատենք, հարեւանցիորեն, ըստ Չանթինգթոնի, իրադրության բազմաբեւեռայնությունը անկանխատեսելի է⁹: Այս տեսակետը Չանթինգթոնը դարձնում է ելակետային իր հայտնի մեծագրության մեջ: Չետերկրեւեռ աշխարհում,- գրում է Չանթինգթոնը,- «լոկալ քաղաքականությունը էթնիկական քաղաքականությունն է. գլոբալ քաղաքականությունը՝ դա քաղաքակրթությունների քաղաքականությունն է: Գերտերությունների մրցակցությունը փոխարինվել է քաղաքակրթությունների բախումով»¹⁰: Ընդ որում, այդ նոր աշխարհում, Չանթինգթոնի կարծիքով, գլոբալ քաղաքականության կենտրոնական ու ամենավտանգավոր տեսանկյունը դառնում է տարբեր քաղաքակրթությունների միջեւ կոնֆլիկտը¹¹:



Չանթինգթոնն արձանագրում է, որ աշխարհն այլեւս չի բաժանվում ազատ աշխարհի, երրորդ աշխարհի եւ կոմունիստական բլոկի, իսկ աշխարհի պարզ բաժանումը աղքատ եւ հարուստ ճամբարների, կամ ժողովրդավարականի եւ ոչ ժողովրդավարականի արդեն բավարար չէ: Արդյունավետ է եւ ճիշտ աշխարհի երկրների բաժանումը այս կամ այն քաղաքակրթություններին պատկանելու հատկանիշով: «Մակրոմակարդակում խոսքը գնում է,- բացատրում է Չանթինգթոնը,- քաղաքակրթությունների բախման մասին, իսկ միկրոմակարդակում՝ տարբեր քաղաքակրթությունների պատկանող պետությունների ու ժողովուրդների միջեւ հատկապես ցավագին, տեսական եւ դաժան կոնֆլիկտների մասին»¹²: Իսկ պետություններն ավելի ու ավելի շատ են մտածում «քաղաքակրթությունների կատեգորիաներով» եւ այդ տեսանկյունով էլ,- եզրակացնում է Չանթինգթոնը,- որոշում *իրենց տեղն աշխարհում* եւ *իրենց շահերը*¹³: Սառը պատերազմին հաջորդող շրջանում,- ավելի է կոնկրետանում Չանթինգթոնը,- պետություններն «իրենց շահերը ավելի շատ են որոշում քաղաքակրթության հաշվառումով»¹⁴: Չանթինգթոնը ցույց է տալիս նաեւ համաշխարհային զարգացման միտումը՝

հանգեցնում էր կրթականության ոլորտում սկզբունքային նշանակության եզրահանգման. պետականության հզորության աճը, որը գերիշխում էր Արեւմուտքում, տեղափոխվում է դեպի ոչ արեւմտյան քաղաքակրթություններ: Գլոբալ քաղաքականությունը դարձել է բազմաբեւեռ եւ բազմաքաղաքակրթական¹⁵:

Եվ ընդհանրապես, իր հիպոթեզն ապացուցելու համար Հանթինգթոնը անդրադառնում է հիմնախնդրի տարբեր կողմերին եւ առաջ է քաշում նոր հիմնավորումներ: Այսպես, օրինակ, նա գտնում է, որ համաշխարհային քաղաքականությունը կթեւակոխի նոր փուլ, երբ երկրների ու ժողովուրդների միջեւ կոնֆլիկտի հիմնարար աղբյուրը գտնվի ոչ թե գաղափարախոսության ու տնտեսության բնագավառում, այլ «մշակույթի ոլորտում»: Գլոբալ քաղաքականության գլխավոր կոնֆլիկտները տեղի կունենան «տարբեր քաղաքակրթությունների երկրների ու ժողովուրդների միջեւ»: Քաղաքակրթությունների այդ բախումը կգերիշխի գլոբալ քաղաքականության մեջ¹⁶: Հետերկրեւեռ աշխարհում, բացատրում է Հանթինգթոնը, նախկին հարցը՝ «Ո՞ւմ կողմն էք դուք», փոխարինվել է ավելի սկզբունքային հարցով՝ «Ո՞վ էք դուք»: Հետեւապես, - կարծում է Հանթինգթոնը, - յուրաքանչյուր երկիր պետք է ունենա պատասխան: Այդ պատասխանը երկրի մշակութային ինքնությունն է եւ որոշում է նրա տեղը համաշխարհային քաղաքականության մեջ, նրա բարեկամներին ու թշնամիներին¹⁷:

Եվ այսպես, իր առաջադրած քաղաքակրթական հայեցակարգի շրջանակներում լուծելով նաեւ մեթոդաբանական կարեւորագույն խնդիրներ, Հանթինգթոնը հանգում է շատ ավելի առարկայական ու կոնկրետ կանխատեսումների: «Մոտակա տարիներին, - գրում է Հանթինգթոնը, - տեղական կոնֆլիկտները, հավանական է, կվերածեն խոշոր պատերազմների՝ ինչպես Բոսնիայում, այնպես էլ Կովկասում, բոլոր այն դեպքերում, երբ նրանք տեղի կունենան քաղաքակրթությունների բաժանման գծերում: Հաջորդ համաշխարհային պատերազմը, եթե այդպիսին տեղի ունենա, կլինի պատերազմ քաղաքակրթությունների միջեւ»¹⁸:

Իսկ ընդհանրապես սահմանելով, որ քաղաքակրթությունը մարդկանց մշակութային ընդհանրության ամենաբարձր ձեւն է եւ հատկանիշների ամենալայն տարրապատկերը (спектр), կանխատեսում է, որ աշխարհի պատկերը ավելի ու ավելի մեծ չափերով կորոշվի յոթ կամ ութ գլխավոր քաղաքակրթություններով՝ արեւմտյան, կոնֆուցիական, ճապոնական, իսլամական, հինդու, սլավոնաուղղափառ, լատինամերիկյան եւ, հնարավոր է, աֆրիկյան¹⁹: Ընդ որում, կարծում է Հանթինգթոնը, ամենաարյունոտ կոնֆլիկտները տեղի կունենան այդ մշակույթները բաժանող սահմանների երկայնությամբ²⁰: Այս եզրակացությունը, վերջին հաշվով, բխում է Հանթինգթոնի մշակութային կողմնորոշումից: Նա պնդում է, որ նոր աշխարհում ամենամասշտաբային, կարելու ու վտանգավոր կոնֆլիկտները տեղի կունենան... տարբեր մշակութային նույնականացման ժողովուրդների միջեւ²¹: Հանթինգթոնի մտահղացմամբ՝ այս հարցում կարեւորագույն, կարելի է ասել առաջնահերթ դերը պատկանում է կրոնին: Եվ քանի որ կրոնը հանդիսանում է քաղաքակրթության հիմնական որոշիչ հատկանիշը, «բեկման գծերի»²² երկայնքով պատերազմները գրեթե միշտ տեղի են ունենում տարբեր քաղաքակրթություններին պատկանող մարդկանց միջեւ²³:

Հանթինգթոնը պնդում է, որ այն դեպքում, երբ համաշխարհային քաղաքականության գլոբալ կամ մակրոմակարդակում հիմնական բախումը տեղի է ունենում Արեւմուտքի եւ մնացած աշխարհի միջեւ, ապա լոկալ կամ միկրոմակարդակում տեղի է ունենում իսլամի եւ մյուս կրոնների միջեւ²⁴: Ընդ որում, համաձայն Հանթինգթոնի, իսլամի սահմանները արյունոտ են: Այդպիսին էլ հավանաբար դրանք դեռեւս կմնան²⁵:

Հանթինգթոնն իր ռազմավարական նախագծերին միս ու արյուն տալու նպատակով, ինչպես մեզ է թվում, կիրառում է նաեւ ենթաքաղաքակրթությունների հասկացությունը: «Քաղաքակրթությունները, ակնհայտ է, միախառնվում են եւ մասնակիորեն համընկնում: Նրանք, - պարզաբանում է Հանթինգթոնը, - կարող են ընդգրկել ենթաքաղաքակրթություններ: Արեւմտյան քաղաքակրթությունն ունի երկու հիմնական տարբերակ՝ եվրոպական եւ հյուսիս-ամերիկ-

յան, իսկ իսլամը²⁶ ստորաբաժանվում է արաբականի, քյուրքականի եւ մալայականի: Եվ թեկուզ նրանց միջեւ սահմանները հազվագյուտ դեպքերում են լինում հստակ, այդ քաղաքակրթությունները իրական են: Նրանք ունեն վերելքներ ու անկումներ. նրանք բաժանվում են եւ միախառնվում: Ու, ինչպես հայտնի է պատմության գիտակների, քաղաքակրթությունները չքանում են»²⁷:


Հանթինգթոնը, դիմելով առանցքային պետություն²⁸ հասկացությանը, ուրվագծում է հիմնական քաղաքակրթությունների, այդ թվում նաեւ ուղղափառ քաղաքակրթության շրջանակները: Վերջինիս մեջ էլ, մասնավորապես, տեղավորում է Հայաստանը: «Ռուսաստանը,- գրում է Հանթինգթոնը,- մնում է համաշխարհային քաղաքակրթության առանցքային երկրներից մեկը, որը նույնականանում է ուղղափառ քաղաքակրթության հետ: Առ այսօր այդ քաղաքակրթության մեջ մտնում են նաեւ այնպիսի ուղղափառ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Բելոռուսիան, Բուլղարիան, Մակեդոնիան եւ Սերբիան, այնպիսի ուղղափառ ոչ սլավոնական պետություններ, ինչպիսիք են Վրաստանը, Հայաստանը եւ Ռումինիան, եւ խառը բնակչությամբ՝ ինչպես ուղղափառ, այնպես էլ ոչ ուղղափառ երկրներ, այնպիսիները, ինչպիսիք են Ուկրաինան եւ Ղազախստանը: Որպես առանցքային պետություն Ռուսաստանը կրում է հիմնական պատասխանատվություն ուղղափառ պետությունների ու երկրների շրջանում կարգի ու կայունության պահպանման համար»²⁹:

Ավելորդ չենք համարում մեջքերում անել նաեւ մեծագրության համապատասխան հատվածից: «Որոշ գիտնականներ,- հաղորդում է Հանթինգթոնը,- գատում են առանձին ուղղափառ քաղաքակրթության գոյությունը Ռուսաստան կենտրոնով, որը տարբերվում է արեւմտյան քաղաքակրթությունից իր բյուզանդական արմատներով, թաթարական տիրապետության երկու հարյուր տարով, բյուրոկրատական բռնակալությամբ եւ նրա վրա Վերածնու-

թյան, Ռեֆորմացիայի, Լուսավորչության եւ Արեւմուտքում տեղի ունեցած նշանակալից այլ իրադարձությունների սահմանափակ ազդեցությամբ»³⁰:

Այս եզրակացություններին Հանթինգթոնը հանգում է, ընդհանուր առմամբ, այն չափորոշիչների կիրառմամբ, որոնք բնութագրում են մշակույթները, քաղաքակրթություն-

ները: Մարդիկ,- գրում է Հանթինգթոնը,- իրենց նույնականացնում են կրոնի, լեզվի, պատմության, արժեքների ծագումով, սովորույթներով եւ հաստատություններով: Նրանք իրենց նույնականացնում են մշակութային խմբերով. ցեղերով, էթնիկական խմբերով, կրոնական համայնքներով, ազգերով եւ ամենալայն մակարդակով՝ քաղաքակրթություններով³¹: Ընդ որում, համաձայն Հանթինգթոնի, գալիքում երկրները կխմբավորվեն մշակույթի եւ քաղաքակրթության հատկանիշներով, հասկանալով



հատկապես, որ «քաղաքակրթությունների միջեւ տարբերությունները չափազանց խորն են, նրանք կապված են պատմությանը, լեզվով, մշակույթով, ավանդույթներով եւ, ամենագլխավորը, կրոնով: Քաղաքակրթություններն ունեն տարբեր տեսակետներ Աստծու եւ մարդու, քաղաքացու եւ պետության, ծնողների եւ զավակների, ազատության եւ իշխանության, հավասարության եւ ստորակարգության հարաբերությունների մասին: Այդ տարբերությունները հարյուրամյակների արդյունքներ են: Նրանք կչքանան ոչ շուտ»³²:

Եզրակացնելով, որ ժամանակակից պայմաններում ոչ արեւմտյան հասարակությունները (պետությունները) արդիականանում են, չարեւմտականանալով, եւ մեծացնում իրենց կարողականությունը, Հանթինգթոնը գրում է. «Համաշխարհային քաղաքակրթության կենտրոնական առանցքը, ամենից հավանականն է, կլինի կոնֆլիկտը Արեւմուտքի ու մնացածների միջեւ (The West and The Rest), եւ ոչ արեւմտյան քաղաքակրթությունների հակազդումը ուժեղ Արեւմուտքին ու նրա արժեքներին»³³: «Աշխարհի

քաղաքականության կենտրոնական առանցքը,- նկատում է մի այլ տեղ նույն Հանթինգթոնը,- «սառը պատերազմից» հետո արեւմտյան հզորության եւ քաղաքականության փոխհարաբերությունն է ոչ արեւմտյան քաղաքակրթությունների հզորության ու քաղաքականության հետ»³⁴: Ուստի եւ Արեւմուտքը հարկադրված կլինի ավելի շատ հարմարվել այդ ոչ արեւմտյան ժամանակակից քաղաքակրթություններին, որոնց ուժը կմոտենա Արեւմուտքի ուժին: «Դրա համար,- գտնում է Հանթինգթոնը,- պահանջվում է ավելի խորը հասու լինել մյուս քաղաքակրթությունների, կրոնների ու փիլիսոփայությունների, ինչպես նաեւ ժողովուրդների սովորույթների հիմքերին, ձգտել առանձնացնել արեւմտյան ու մյուս քաղաքակրթությունների ընդհանրության տարրերը»³⁵: Միաժամանակ, Հանթինգթոնն իր համերաշխությունն ու համակրանքն է հայտնում եվրոպական քաղաքական գործիչ ժակ Դելորի տեսակետի հետ, թե ավելի ակներեւ է դառնում, որ «գալիք կոնֆլիկտները կիրահրվեն ոչ թե տնտեսական կամ գաղափարախոսական, այլ մշակութային գործոններով: Արեւմուտքը պետք է սովորի խորապես հասկանալ մյուս քաղաքակրթությունների կրոնական եւ փիլիսոփայական հիմքերը»³⁶:

Սակայն պարզ է, որ ոչ միայն Արեւմուտքը, այլ ցանկացած ժողովուրդ, կարիք ունի հասկանալու այլ քաղաքակրթությունների կրոնական ու փիլիսոփայական հիմքերը, պատկերացնի իր տեղը քաղաքակրթությունների հանթինգթոնյան սանդղակում, քանզի այն առավելապես երկրաքաղաքական հայեցակարգ է: Օրինակ՝ ռուս հետազոտող Սերգեյ Պերեսլեգինը գտնում է, որ Հանթինգթոնի աշխատանքը թեկուզեւ ունի գիտական աշխատանքի որոշ գծեր եւ հրապարակախոսության բոլոր «ազգակցական հատկանիշները», այդուհանդերձ այն պետք է վերագրվի «ռազմավարության» բնագավառին: «Ըստ էության,- գրում է նա,- խոսքը իր սահմաններից դուրս ռազմաքաղաքական պլանավորման մասին է, երբ պետությունը/էթնոսը խաղում է նվազագույն մարտավարական միավորի դեր»³⁷: Թերեւս ճանաչողության տվյալ խնդիրը հրատապ է առաջին հերթին այն ժողովուրդների համար, որոնք ապրում են քաղաքակրթությունների, հանթինգթոնյան բնորոշմամբ, «բեկման գծում»:

Ակներեւ է, որ դրանցից է եւ հայ ժողովուրդը, որի հայրենիքը՝ Հայաստանը (Հայկական լեռնաշխարհը), գտնվում է քաղաքակրթությունների հանդիպման խաչմերուկում: Ահա թե ինչու է հրատապ Հանթինգթոնի հայեցակարգում «հայկական թղթածրարի» ճշգրտումը որպես ռազմավարական խնդիր դիտելը:

Բ. ՄԻԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՐՊԵՍ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԿԵՏ

Հայտնի է, որ ուղղափառությունը լինելով քրիստոնեության երեք ուղղություններից մեկը՝ կաթոլիկության եւ բողոքականության հետ միասին, բնութագրում է տեղական ինքնավար, ազգային եկեղեցիներին կամ արեւելաքրիստոնեության երկու խոշոր ընտանիքներին՝ Արեւելյան ուղղափառ եկեղեցիներ (Հայաստանյայց առաքելական եկեղեցի, Ասորի ուղղափառ եկեղեցի, Եթովպական ուղղափառ եկեղեցի, Ղպտի ուղղափառ եկեղեցի, Հնդկաստանի Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցի) եւ Ուղղափառ (օրթոդոքս) կամ երկաբնակ (քաղկեդոնիկ) եկեղեցիներ: Վերջիններս կոչվում են նաեւ հունադավան, քանի որ ծագում են հույն կամ բյուզանդական եկեղեցուց, ունեն նույն եկեղեցական ավանդությունը, արարողակարգը եւ համանման կանոնական կառույց: Ուղղափառ (օրթոդոքս) եկեղեցիներն այսօր չնայած իրենց մեջ պարփակում են ազգային ավանդություններ, լեզուներ եւ յուրահատկություններ, սակայն նրանք բոլորն էլ ունեն միեւնույն պատմական սկիզբը, այն է՝ բյուզանդական ուղղափառ քրիստոնեությունը:

Նրանք կազմավորվել են IX-XI դարերում որպես ավտոկեֆալ (ինքնագլուխ) երկաբնակ եկեղեցիներ, միավորվում են Ուղղափառ (Արեւելյան երկաբնակ) եկեղեցիներ անվան տակ: (Վրաց եկեղեցին կազմավորվել է ավելի վաղ, սակայն 608 թվականին անջատվեց Հայաստանյայց եկեղեցուց եւ դավանանքի ճանապարհով սկսեց մերձենալ Բյուզանդիային): Ուղղափառ երկաբնակ եկեղեցին ընդունում է յոթ ժողովների տիեզերական հեղինակությունը եւ նրանց վարդապետական սահմանումները, իսկ Կաթոլիկ

եկեղեցին՝ քսան: Այս երկու ուղղություններն էլ ընդունում են Քրիստոսի մեջ երկու բնությունները՝ Աստվածայինն ու մարդկայինը, որոնք գոյություն ունեն «անբաժան ու անխառն»: Երկաբնականությունը Քրիստոսի մեջ հստակ սահմանազատելով աստվածայինն ու մարդկայինը, դրանով իսկ բացառում է մարդկայինի աստվածացման հնարավորությունը, ուստի աստված մնում է լոկ որպես պաշտամունքի առարկա, սակայն եւ մյուս կողմից մարդուն ցույց է տրվում իր տեղը, սահմանվում նրա իրավասության շրջանակները³⁸: Իսկ ընդհանրապես, սոսկ պատմական իրողությունն է արձանագրում Գարեգին Բ կաթողիկոսը, երբ գրում է, որ եթե «Բյուզանդական եկեղեցին Արեւելքի արեւմտյան մասում հանդիսացավ *Սայր եկեղեցի* իր բնից շառավիղած *օրթոդոքս* եկեղեցիների մեջ, Արեւելքի արեւելյան մասում (Փոքր Ասիո հարավ-արեւելյան շրջանում) Հայոց եկեղեցին ունեցավ նույն դիրքը եւ կատարեց նույն կենտրոնական հաստատության հատուկ դերը Արեւելյան եկեղեցիների կյանքում»³⁹:

Եվ Հայաստանյայց առաքելական եկեղեցին պաշտպանելով իր հոգեւոր անկախությունը, որն, ի դեպ, հիմնադրվել է բյուզանդականից ավելի վաղ ու Քաղկեդոնից (451 թ.) հետո, նրա հակառակորդն է եղել, այդ ժողովից սկսած չի ճանաչել Տիեզերական հետագա ժողովների որոշումները, ընդունել է *միաբնականությունը*, որը պաշտպանում է Քրիստոսի՝ որպես Աստծու միասնական բնությունը: Հայ եկեղեցու քրիստոսաբանական վարդապետությունը պաշտպանելով միաբնականություն, Քրիստոսի մեջ աստվածային կողմն առհասարակ ավելի է շեշտում, սակայն «մի բնություն» ասելով՝ միայն աստվածայինը չի հասկանում եւ մարդկայինը անտեսում:

«Քրիստոս,- բանաձեւում է Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսը,- ոչ է սոսկ մարդ, բայց եւ ոչ Աստված մերկ, այլ՝ մանավանդ Աստված եւ մարդ միանգամայն»: Եվ ընդունելով աստվածայինի եւ մարդկայինի միասնությունը, միաբնակ եկեղեցին մարդու մեջ արթնացնում է իր ուժերի ու կարողությունների հանդեպ վստահություն, աստվածայինին հասնելու հույս եւ դրան ձգտելու ցանկություն, կամք ու զործունեություն: Եվ աստվածացնում է մարդուն:

Հայ եկեղեցու կողմից «միաբնականության» ընտրություն-


ընդ, գտնում է ռուս գրող, թարգմանիչ եւ գիտնական Վ. Միկուշեւիչը, իր ազդեցությունն ունեցավ հայկական մշակույթի անկրկնելի հատկանիշների վրա: «Հայաստանը,- ընդհանրացնում է Միկուշեւիչը,- ոչ միայն չի պարփակվել իր եկեղեցական մեկուսացվածության մեջ, այլեւ, ընդհակառակը, դրսեւորել է *ստեղծագործական ձգտումների հիրավի տիեզերական լայնություն*՝ յուրովի արձագանքելով այն բոլոր հոգեւոր միտումներին, որոնք այն ժամանակ տարածվում էին Հնդկաստանից մինչեւ Պիրենեյան թերակղզի»⁴⁰:

Անդրադառնանք այդ հաստատումներին:

Քննվող հիմնախնդիրների շրջանակներում որոշակի ապացուցողական նշանակություն են ձեռք բերում Ֆրիտյոֆ Նանսենի դիտարկումները Կիլիկյան Հայաստանի, հայ եկեղեցու (նրա դավանանքի) եւ առանձնապես համաշխարհային ճարտարապետության հետ հայկականի աղերսների վերաբերյալ: «Կիլիկիան,- գրում է Ֆ. Նանսենը,- երեք հարյուրամյակ, շրջապատված թշնամիներով, կարողանում է պահպանել իր անկախությունը թուրքերի աճող ուժերի եւ Բյուզանդիայի ոտնձգությունից: Հունաբյուզանդական եւ հռոմեական եկեղեցիների սիրաշահումներն ու սպառնալիքներն անհետեւանք են մնում նաեւ Կիլիկյայի հայերի համար: Նրանք եւս (ինչպես Մեծ Հայաստանում.- Լ. Շ.) հավատարիմ մնացին իրենց միաբնակ դավանանքին ու պահպանեցին իրենց եկեղեցին»⁴¹: Եվ կարծես թե քննվող հիմնախնդիրը նկատի ունի մշակույթի փիլիսոփայության լավագույն գիտակ, ակադեմիկոս Հ. Ա. Գեւորգյանը, երբ գրում է, որ երկրորդ հազարամյակի սկզբներին Հայաստանը եղավ «այն սակավաթիվ երկրներից մեկը, որը պահպանեց անտիկ մշակույթը եւ իրականացրեց նրա յուրահատուկ համադրումը քրիստոնեության հետ» եւ ունենալով «նույն հիմքը՝ անտիկ մշակույթի հետ քրիստոնեության համադրումը, հայկական մշակույթը իրեն ծավալեց եվրոպական քաղաքակրթությանը համահունչ մշակութային ձեւերի ամբողջ բազմազանության մեջ <...>, ինչպես նաեւ հանրային կյանքի կազմակերպման իրավական ու պետականության ձեւերի մեջ (հիշենք թեկուզ, թե ինչ ներդաշնակ կերպով Կիլիկյան Հայաստանը մտավ եվրոպական ազգերի համաշխարհի



մեջ)»⁴²: Ասվածի լույսի տակ ավելի հավաստի ու տարողունակ է այն պնդումը, թե հայ ժողովրդի «ի նքնատի պզարգացման ընթացքն իր էական ազդեցությունն է թողել ոչ միայն



Ադանա, Կիլիկիա, 1293 թ.

բյուզանդական, այլև արեւմտաեվրոպական մշակույթի վրա»⁴³, որ, մասնավորապես, «գոթական ոճը, որ միջնադարի համաշխարհային մշակույթի նշանակալից նվաճումներից է, իր սկզբնավորման շրջանում որոշակի ազդեցություն է կրել» հայկական մշակույթից⁴⁴:

Գ. ԿԻԼԻԿԻԱՆ ՈՐՊԵՍ ԵՎՐՈՊԱ-ԱՍԻԱԿԱՆ ՊԱՏՈՒՇԱՆ

Հայ ժողովրդի քաղաքակրթական «պատկանելության» հարցի լուսաբանման տեսակետից հույժ կարեւոր է թվում Կիլիկյան Հայաստանի (1199-1375) պատմական դերի գնահատականը եւ նրա տեղի պարզաբանումը, որն, ինչ խոսք, էական հետք է թողել հայոց հոգեւոր մշակութային զարգացման վրա: Հայտնի է, որ միջնադարում Միջերկրական ծովի արեւելյան ափերին Արեւելքի հետ Արեւմուտքի տարանցիկ առեւտուրն ու տնտեսական շփումը (ինչու չէ, նաեւ հոգեւոր հաղորդակցությունը) տեղի էին ունենում

այսպես կոչված Փոքր Հայաստանի՝ Կիլիկիայի տերիտորիայում⁴⁵: Նկատենք, որ Կիլիկիայի հայկական պետությունը 11-րդ դարից սկսած սերտ հարաբերություններ է ունեցել խաչակիրների եւ այդ ճանապարհով նաեւ Արեւմտյան Եվրոպայի հետ: Հռոմի Գրիգոր Գ պապն իր Էքլեսիա Ռոմանա կոնդակի մեջ (1384 թ.) ասում է. «Երբ ժամանակավ քրիստոնյա իշխաններն ու բանակները կերթան Սուրբ Երկիրը վերագրավելու, ո՛չ մեկ ազգ, ո՛չ մեկ ժողովուրդ այն-

չափ շուտափույթ եռանդով օգնության կհասնի մարդով, սնունդով, ձիերով, խորհուրդներով, որչափ հայերը. ա՛նոնք, իրենց բոլոր ուժերով, ամենամեծ քաջագործությամբ եւ հավատարմությամբ օգնած են քրիստոնյաներուն՝ այդ սուրբ պատերազմին մեջ»⁴⁶:

Բնականաբար, Կիլիկիայի հայկական պետությունը զերծ չէր եվրոպական ազդեցությունից: Սկսած հատկապես Լեւոն Բ-ի շրջանից Կիլիկիայի տնտեսական կապերը եվրոպական երկրների


հետ ուժեղացան: «Պետության քաղաքական կազմակերպությունը,- գրում է Վ. Մ. Քյուրքճյանը,- վարչական եւ այլ պաշտոնարանները, ինչպես նաեւ արքունի դարպասը, եվրոպականին համեմատ ձեւակերպվեցան: Հայ եւ եվրոպացի իշխանական ընտանիքներու միջեւ ամուսնական խնամիությունները բազմացան, եւ տեղացի կղերի ու լատին կրոնավորներու ձեռքով շատ մը ուսումնավայրեր հաստատվեցան»⁴⁷: Անիրազեկ մարդուն կարող է եւ զարմանալի թվալ, սակայն իրողությունն այն է, որ Եվրոպայի հետ Հայաստանի, տվյալ դեպքում Կիլիկիայի, հարաբերությունները իրականացել են ակտիվ փոխազդեցության պայմաններում: Հայտնի պատմաբան Ռենե Գրուսսեն (Rene' Grousset) հաղորդում է, որ խաչակիրների եւ Կիլիկիայի «միջեւ միաբանությունը անմիջական եղավ եւ տեսական. հարաբերությունները խարսխվեցին հավասարության վրա: Իշխանական կապակցությունները եղան անընդմեջ: 10-րդ դարի Լատին Արեւելքը իրականության մեջ եղավ ֆրանսա-հայկական (Franco-Arme'nien) մի Արեւելք»⁴⁸: Մի այլ հեղինակ, Փոլ դը Վյուն (Paul de Ve'ou), անդրադառնա-



Ռենե Գրոսսե (Rene' Grousset)

լով դեպի Քրիստոսի գերեզման խաչակիրների արշավներին հայերի օժանդակությամբ,


ուղղակիորեն գրում է. «Հայաստանը Ֆրանսիայի կնքամայրն է (merraine) Ասիայում»⁴⁹: Ահա այս գործընթացներն են հայ գիտնականին հանգեցրել այն եզրակացությանը, թե Կիլիկիայի ընդհանուր զարգացումը տեղի էր ունենում խաչածեվող ազդեցությունների պայմաններում⁵⁰:



Այն հայտ է, որ այդպիսի «խաչածեվող ազդեցությունների» օգտին է գործել հայ վաճառականական դասը, հատկապես XV-XVIII դարերում: Նա, ըստ էության, ստանձնել է Արեւելքի ու Արեւմուտքի կապող օղակի գործառույթը: Այդ դասը, նկատում է Ֆերնան Բրոդելը, իր ձեռքն էր վերցրել Եվրոպայից դեպի Օսմանյան կայսրություն ահռելի ապրանքահոսքի վրա գերիշխանությունը: Այդ սայլերի քարավանների պետերը, *քարավանբաշիները*, միշտ հայեր էին լինում: «Այս բեռնափոխադրումների հոսքը չէ միավորել արդյո՞ք մեկ ամբողջության մեջ ներկա հսկա ապարեզները՝ ոչ ավել, ոչ պակաս, Արեւելքը եւ Արեւմուտք...»⁵¹ հարցնելով հաստատում է Բրոդելը:

Դ. ՄԻՏԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵՎՈՐ (ԵՎՐՈՊԱԿԱՆ) ԿԱՄՈՒՐՋ

Հաստատենք նաեւ, որ հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կապը Եվրոպայի հետ 18-րդ դարից սկսած ավելի է սերտանում հայտնի Մխիթարյանների սվազցի Մանուկ Մխիթար վանականի հիմնած միաբանության ջանքերով, որը եւ շարունակվում է ցայսօր: Սկզբում Մխիթարն իր համախոհներով



Մանուկ Մխիթար վանական

գործում էր Կ.Պոլսում, ապա Մոռեայում: 1715 թվականին նրանք գնում են Վենետիկ, հաստատվում Սուրբ Ղազար կղզում եւ այնտեղ կառուցում մի փառահեղ վանք: 1712 թվականից Մխիթարյանները ընդունում են լատին եկեղեցու հովանավորությունը, որը սակայն չի խանգարում նրանց պահպանել կապը հայ ժողովրդի հետ: Մխիթարյանների բեղուն գործունեությունը խթանեց հայ մշակույթի, ազգային մտածելակերպի եւ ինքնաճանաչման վերածնունդը: Միաժամանակ, նրանց կատարած բարձրարժեատ քարգնանությունների շնորհիվ հայոց համար հասու է դառնում արեւմտաեվրոպական քնարերգությունը, գիտությունն ու մշակույթը: Եվ փոխադարձաբար:

Այսպիսով՝ պատմական իրողությունները եւ նույնիսկ նրանց հակիրճ վերլուծությունը ապացուցում են, որ ճիշտ չէ հայ ժողովրդին, հետեւապես եւ Հայաստանը տեղավորել «ուղղափառ-սլավոնական քաղաքակրթության» սանդղակում: Այն հակասում է ինչպես պատմական փաստերին, այնպես էլ հայոց մշակութային-քաղաքակրթական ինքնությանը: Եվ նա, ամենայն վստահությամբ, արեւելաքրիստոնեական քաղաքակրթության ուրույն ճյուղերից մեկն է, ինչը պակասում է Հանթինգթոնի սանդղակում:

Չ. Գ. - Արեւմտյան քաղաքակրթական սահմանումների մեջ ինքը՝ Չանթինգտոնը ցուցաբերում է պատմական մոտեցում, եւ այդ տեսակետից պատմականորեն է գնահատում Կաթոլիկ եկեղեցու տարածքը արեւմտյան քաղաքակրթու-



թյան առաջացման եւ զարգացման ընթացքի մեջ: Սակայն, բուն արեւմտյան քաղաքակրթության բնորոշման համար այդ հատկանիշները չէ, որ նրա հայեցակարգում դառնում են էական:

1. Huntington P. Samuel (Хантингтон Самюэль).

- Столкновение цивилизаций? – “Полис”, 1994, N 1, с. 33-46. (The Clash of Civilizations? – “Foreign Affairs”, Summer, 1993).

- Грядущее столкновение цивилизаций? (краткий вариант статьи “Столкновение цивилизаций?” из газеты “Нью Йорк Таймс”). – “США: экономика, политика, идеология”, 1994, N 3, с. 39-41.

- Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. – “США: экономика, политика, идеология”, 1994, N 4, с. 71-75. (If not civilizations, what? Paradigms of the Post-Cold War World.- “Foreign Affairs”, November/December, 1993).

- Столкновение цивилизаций и что она может означать для России. – “Общественные науки и современность”, 1995, N 3, с. 133-136.

- Будущее демократического процесса: от экспансии к консолидации. (The Future of Democratic Development: From Expansion to Consolidation).- “Мировая экономика и международные отношения”, 1995, N 6, с. 87-94.

- Запад уникален, но не универсален. – (“Foreign Affairs”, December, 1996), “Мировая экономика и международные отношения”, 1997, N 8, с. 84-93.

2. Столкновение цивилизаций. Пер с англ. М., ООО “Издательство АСТ”, 2003, 603 с. (The Clash of Civilizations and the Remaking of World Order, New York, Simon and Schuster, 1996, 368 p.).

3. Ств' Дугин Александр. Основы Геополитики. Геополитическое будущее России. Мыслить Пространством. Изд. 3-е, доп., М., 1999, էջ 115:

4. Хантингтон С. Столкновение цивилизаций. Пер. с англ., М., 2003, էջ 59-60:

5. Նույն տեղը, էջ 410:

6. Նույն տեղը, էջ 6:

7. «Քաղաքակրթությունը,- գրում է Չանթինգտոնը,- դա մարդկանց մշակութային ամենաբարձր ընդհանրությունն է եւ մշակութային նույնականացման ամենալայն մակարդակը, դրանից զատ՝ ինչը մարդուն տարբերում է մյուս կենսաբանական տեսակներից: Այն որոշվում է ինչպես առարկայական տարրերով, ինչպիսիք են լեզուն, պատմությունը, կրոնը, սովորույթները, սոցիալական հաստատությունները, այնպես էլ մարդկանց ենթակայական նույնականացումով» (Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 51): «Քաղաքակրթությունը,- շեշտում է Չանթինգտոնը,- որին պատկանում է մարդը, ամենաբարձր աստիճանն է, որը թույլ է տալիս նրան հստակորեն նույնացնել իրեն» (Նույն տեղը): «Սովորաբար քաղաքակրթության տակ հասկացվում է բարոյականության, կրոնի, կրթության, արվեստի, փիլիսոփայության, տեխնոլոգիաների, նյութական բարեկեցության, եւ հավանաբար, բազմաթիվ այլ բաների ավելի բարձր մակարդակի բարդ խառնուրդ» (Նույն տեղը, էջ 529):

8. Хантингтон С. Столкновение цивилизаций и что она может означать для России. – “Общественные науки и современность”, 1995, N 3, с. 134.

9. Ств' Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 346:

10. Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 24:

11. Նույն տեղը, էջ 7:

12. Хантингтон С. Если не цивилизации, то что? Парадигмы мира после холодной войны. – “США: экономика, политика, идеология”, 1994, N 6, էջ 72:

13. Ств'ս' նույն տեղը, էջ 73:

14. Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 36:

15. Նույն տեղը, էջ 27:

16. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций? – США: экономика, политика, идеология, 1994, թիվ 3, էջ 39:

17. Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 186:

18. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 39:
19. Մենագրության մեջ քաղաքակրթությունները ներկայացված են հետևյալ ճշգրտումներով ու հերթականությամբ. չինական (sinic), ճապոնական, հինդու, իսլամական, ուղղափառ, արեւմտյան, լատինաամերիկյան, աֆրիկական (հնարավոր է) քաղաքակրթություններ (Տե՛ս՝ Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 54-60): Մենք հետախուս կառաջնորդվենք այս շարադրանքով:
20. Նույն տեղը:
21. Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 24:
22. *Բեկման գիծ* - տարբեր քաղաքակրթությունների պատկանող հարեւան պետությունների, միեւնույն պետության մեջ տարբեր քաղաքակրթություններից խմբերի միջեւ գիծը:
23. Նույն տեղը, էջ 410:
24. Նույն տեղը, էջ 413:
25. Хантингтон С. Столкновение цивилизаций и что она может означать для России. - «Общественные науки и современность», 1995, թիվ 3, էջ 135:
26. Մենագրության մեջ իսլամի քաղաքակրթության մեջ Հանթինգթոնն ավելացնում է պարսկական ենթաքաղաքակրթությունը: Նա գրում է. «Իսլամի ներսում գոյություն ունեն բազմաթիվ առանձին մշակույթներ եւ ենթաքաղաքակրթություններ, ներառյալ արաբականը, թյուրքականը, պարսկականը եւ մալայականը» (Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 56):
27. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 39:
28. *Առանցքային պետություն* - Քաղաքակրթություններում սովորաբար կան մեկ կամ ավելի տեղեր, որոնք նրա անդամների կողմից դիտվում են այդ քաղաքակրթության մշակույթի հիմնական աղբյուրը կամ աղբյուրները: Սովորաբար այդպիսի աղբյուրները տեղավորված են մեկ առանցքային երկրում կամ քաղաքակրթությունների երկրներում, այսինքն՝ մշակութային առումով ամենահզոր եւ կենտրոնական երկրում կամ երկրներում (Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 203):
29. Хантингтон С., Столкновение цивилизаций и что она может означать для России, էջ 135:
30. Хантингтон С., Столкновение цивилизаций, էջ 57:
31. Նույն տեղը, էջ 133:
32. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 39:
33. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 39:
34. Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 26:
35. Хантингтон С. Грядущее столкновение цивилизаций?, էջ 41:
36. Хантингтон С. Если не цивилизации, то что?, էջ 75:
37. Переслегин С., Послесловие. О спектроскопии цивилизаций, или Россия на геополитической карте мира. - Хантингтон С. Столкновение цивилизаций, էջ 579:
38. Հանգամանորեն տե՛ս Միրզոյան Հր., Կրոնադավանաբանական պայքարը եւ հայ փիլիսոփայական միտքը. - Հայ իմաստասիրությունը հոգեւոր մշակույթի համակարգում. Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցերը (պատ. խմբ.՝ Ս. Ս. Արեւշատյան), Եր., 1992, էջ 69-81:
39. Փարեզին Բ Կաթողիկոս, Հայաստանյայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մեջ, Անթիլիաս, 1994, էջ 157:
40. Микушевич В. Целительный свет (Поэма Гр. Нарекаци “Книга скорбных песнопений”), - «Բանբեր Երեւանի համալսարանի», 1981, թիվ 3, էջ 62:
41. Նանսեն Ֆ., Խաբված ժողովուրդ. Ազգերի ընկերակցության գլխավոր հանձնակատարի հետազոտական ճանապարհորդությունը Վրաստան եւ Հայաստան (թարգմ. գերմ.), Եր., 2002, էջ 223:
42. Տե՛ս՝ Գեւորգյան Հ. Ա., Քրիստոնեության ընդունումը Հայաստանում պատմության փիլիսոփայության տեսանկյունից, «Հայկական բանակ», 2001, թիվ 1-2, էջ 20-21:
43. Նանսեն Ֆ., Խաբված ժողովուրդ, էջ 229:
44. Նույն տեղը, էջ 234:
45. Այդ մասին տե՛ս՝ Марко Поло. Путешествие. Пер. со старофр., Л., 1940, էջ 17:
46. Տե՛ս՝ Մորգան ժագ դը, Հայ ժողովրդի պատմությունը. Իր պատմությանց ամենաստույգ ժամանակներեն մինչեւ մեր օրերը: Թարգմ. ֆր., Պոսթըն, 1947, էջ 304:
47. Եյուրքեյան Վ. Ս., Հայկական Կիլիկիա, Նյու Յորք, 1919, էջ 13:
48. Տե՛ս՝ Փարեզին Բ Կաթողիկոս, Հայաստանյայց եկեղեցին իր «ծառայական կերպ»ին մեջ, էջ 151:
49. Նույն տեղը, էջ 152:
50. Տե՛ս՝ Պարրիեյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. II, Եր., 1958, էջ 110:
51. Бродель Ф., Материальная цивилизация, экономика и капитализм XV-XVIII вв., Пер. с фр., т. 2, М., 1988, էջ 146:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ.

հարևանները և գիտական համագործակցության խնդիրները

Մխիթար Գաբրիելյան

Ազգագրագետ, պատմ. գիտ. թեկնածու

Վերջին մեկուկես տասնամյակում տեղեկատվական ապահովվածության ու տեղեկատվության փոխանակության խնդիրը ծեռք է բերել կարևորագույն նշանակություն: Եվ պետական կառավարման մարմիններն ու գիտական հասարակայնությունը և հասարակությունն ընդհանրապես կարիք ունեն համակողմանի ու մատչելի տեղեկատվության:

ԶԼՄ-ներն ու այլ աղբյուրները տեղեկատվության ապահովման խնդիրն հիմնականում լուծում են. կանոնավոր տեղեկատվություն է մատուցվում աշխարհում ընթացող գործընթացների մասին: Սակայն, ինչպես ցույց են տալիս տարբեր ծրագրերի շրջանակներում գործուղումները ՀՀ մարզեր, ոչ միայն ողջ հասարակությունը, այլև վերջինիս առանձին հատվածներ կարիք ունեն ավելի մանրամասն «տարածաշրջանային տեղեկատվության»:



ՀՀ-ն տարածաշրջանում որպես հարևան ունի Ադրբեջանը, Վրաստանը, Թուրքիան և Իրանը: Ռազմավարական գործընկեր է ՌԴ-ն, աշխույժ են կապերը Մերձավոր Արևելքի արաբական ու այլ երկրների հետ: Նշված պետություններից ՌԴ-ն, Ադրբեջանն ու Վրաստանը կովկասյան պետություններ են, ընդ որում Հյուսիսային Կովկասն ամբողջությամբ մաս է կազմում ՌԴ-ին: Այսինքն, հանրությանը մատուցվող տարածաշրջանային տեղեկատվությունը պետք է լինի առնվազն երկմաս՝ *կովկասյան և մերձավորարևելյան*: Եվ առաջինը, և երկրորդը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն զուտ իմացաբանական տեսանկյունից:

Տարածաշրջանային գործընթացների, դրանց պատճառների ու հնարավոր զարգացումների իմացությունը կարևոր է նաև ՀՀ արտաքին և ներքաղաքական հնարավոր զարգացումների կանխատեսման առումով:

Կովկասյան տարածաշրջանը հնուց ի վեր գտնվում է քաղաքագետների, ուսումնասիրողների, ճանապարհորդների ուշադրության կենտրոնում, շարունակելով պարուրված մնալ խորհրդավորության շղարշով: Այսօր էլ այն աշխարհի բացառիկ տարածաշրջաններից է, որտեղ չափազանց մեծ է լեզուների և մշակույթների «խտությունը»: Կովկասը պատմաբանների, ազգաբանների, մշակութաբանների ու քաղաքագետների համար յուրօրինակ «գիտական լաբորատորիա» է, որը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն մերօրյա, այլև տարբեր ժամանակների պատմաքաղաքական ու հասարակական-մշակութային բազմաթիվ խրթին հիմնահարցեր: Պատահական չէ, որ այսօր ոչ միայն տարածաշրջանի, այլ նաև եվրոպական, ամերիկյան գիտական կենտրոններում ակտիվորեն շարունակում է զարգանալ կովկասագիտությունը՝ կովկասյան ժողովուրդների պատմության, մշակույթի, լեզվի, արդի քաղաքական զարգացումների և էթնիկ հակամարտությունների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը: Ակտիվորեն զարգանում են տեղական կովկասագիտական դպրոցները՝ հայկական, ադրբեջանական, վրացական, Հյուսիսային Կովկասում՝ դաղստանյան, ադրղական, օսական և այլն: ՌԴ-ում տնտեսական ու քաղաքական կայունացմանը զուգընթաց 1990-ական թթ.

մասնակիորեն խարխլված դիրքերը վերականգնում է ռուսական հզոր կովկասագիտական դպրոցը: Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի առաջավոր գիտական կենտրոններում տարեցտարի աճում է Կովկասին վերաբերող գիտական ուսումնասիրությունների թիվը:

Այս իրավիճակում բնական է հայ կովկասագետների առջև ծառայած նոր խնդիրների ի հայտ գալը: Բացի զուտ պատմագիտականներից, առաջնային են կիրառական ուղղվածության տարածաշրջանային ուսումնասիրությունները, հատկապես եթե հաշվի առնենք Կովկասում ինչպես պատմականորեն, այնպես էլ վերջին մեկուկես տասնամյակում հաստատված հայերի բավականին մեծ թիվը: Ըստ պաշտոնական վիճակագրության ՌԴ հյուսիս-կովկասյան կազմավորումներում հայերի թիվն ունի աճի միտումներ: Միայն Կրասնոդարի երկրամասում 2002 թ. մարդահամարի արդյունքներով բնակվում է շուրջ 280.000, Ստավրոպոլի երկրամասում՝ շուրջ 150.000 հայ¹:



Չափազանց խայտաբղետ է Կովկասը և հատկապես Հյուսիսային Կովկասը էթնիկ կազմի տեսակյունից. բուն կովկասյան էթնիկ հանրությունների թիվը մի քանի տասնյակ է: Նույնը կարելի է ասել Վրաստանի մասին, որտեղ բացի հայերից, ադրբեջանցիներից, քրդերից ու այլ էթնոսներից, վրացական էթնոսի կազմում դեռևս պահպանված

են տարբեր ներէթնիկ խմբեր: Ադրբեջանում ևս, չնայած խորհրդային շրջանի բռնի էթնոձուլման քաղաքականությանը, շատ են փոքրամասնությունները:

Կովկասն այսօր նաև աշխարհի ամենակոնֆլիկտային տարածաշրջաններից է: Վերջին մեկուկես տասնամյակում արձանագրվել է շուրջ մեկ տասնյակ հակամարտություն, շարունակում է բարձր մնալ տարածաշրջանի կոնֆլիկտային ներուժը: Միայն էթնիկ կոնֆլիկտների ոչ ամբողջական թվարկումը ցույց է տալիս, որ հայագիտության առանձին դիսցիպլինների համար կովկասյան տարածաշրջանի ուսումնասիրությունները պատմագիտական, հասարակագիտական, քաղաքագիտական ու ազգաբանական-մշակութաբանական տեսանկյուններից ունեն կարևոր նշանակություն: Վրաց-աբխազական, վրաց-հարավօսական, արցախյան, չեչենական, օս-ինգուշական. սա ոչ լրիվ ցանկն է վերջին մեկուկես տասնամյակում ծավալված հակամարտությունների, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի ազդում են նաև կոնֆլիկտի գոտում հայտնված հայ բնակչության վրա:

Հարավային Կովկասում հնարավոր լարվածության օջախ է շարունակում համարվել Վրաստանը՝ թուրք-մեսխեթցիների, ազգային փոքրամասնություններից հայերի և ադրբեջանցիների հանդեպ քաղաքականություն կառուցելու խնդիրների տեսանկյունից:

Ադրբեջանում հնարավոր լարվածության օջախներ են հարավ-արևելյան՝ թալիշաբնակ և հյուսիս-արևելյան՝ լեզգիաբնակ շրջանները: Լարվածություն առկա է նաև Ադրբեջանում բնակվող ավարների հանդեպ քաղաքականության հարցերում:

Կովկասի հակամարտություններից և ոչ մեկը դեռևս վերջնական լուծում չի ստացել: Վերլուծաբանները հնարավոր լարվածության օջախներ են համարում Ղարաչայ-Չերքեզական հանրապետությունը (ղարաչայների և չերքեզների փոխհարաբերություններում լարվածություն), Ադրդական հանրապետությունը (տիտղոսային էթնոսի՝ ադրդների և մեծամասնություն կազմող ռուսների փոխհարաբերություններ): Հնարավոր լուրջ կոնֆլիկտների գոտի է Դաղստանը:

Մշակույթը և էթնիկ կազմը ցանկացած տարածաշրջանի հիմնական այցեքարտերն են ի թիվս այլոց: Մշակույթն

այն կարևորագույն «բանալին» է, որի օգնությամբ հասկանալի ու ընկալելի է դառնում էթնոսը, կառուցվում են միջէթնիկ, միջխմբային ու միջամենային հարաբերություններ: Միաժամանակ, մշակութային արժեքների չիմացությունը/ոչ բավարար իմացությունը բազմաթիվ դեպքերում կարող է հանգեցնել լուրջ հակասությունների, սրվելու ու խորանալու դեպքում՝ հակամարտությունների:

Ի վերջո, այսօր, չնայած տեղեկատվական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացմանն ու տեղեկատվության աղբյուրների աճին, աշխարհում փոխադարձ ճանաչելիության լուրջ խնդիրներ գոյություն ունեն:

Ճանաչելիության ցածր մակարդակը բերում է ոչ միայն միջէթնիկ հարաբերությունների լարվածության, այլև ներէթնիկ ու մշակութային լուրջ խնդիրների:

Մշակույթը միշտ եղել և մնում է դինամիկ համակարգ, որի զարգացումները կախված են նաև արտաքին ազդակներից: Այն վերցնում, ձևափոխում, ստեղծագործաբար զարգացնում ու սեփական միջավայրին է հարմարեցնում արժեքներ, որոնք կարևոր են նշված դինամիկ զարգացումն ապահովելու համար: Հակառակ դեպքում աճում է մշակութային լճացման հավանականությունը: Արագ փոփոխվող աշխարհում մշակութային լճացումը ինքնամեկուսացման, նաև՝ զարգացումների տրամաբանությունից դուրս մնալու, մարգինալացման ճանապարհներից մեկն է: Հարկ չկա ասել, որ հայաստանյան հասարակության համար սա ամենամանցանկալի զարգացումն է:

Աշխարհում ճանաչելի լինելու համար պետք է ճանաչել աշխարհը: Ճանաչելի դառնալու համար պետք է կարողանալ սեփական մշակույթն ու պատմությունը ներկայացնել աշխարհին հասկանալի լեզվով: Ընդհանուր իմացությունից զատ, այստեղ կարևոր են դառնում հարևանների

Ethnolinguistic Groups in the Caucasus Region



ու տարածաշրջանը ճանաչելու գործընթացները: Հակամարտությունների մեծ մասը «կառուցվում է» էթնիկ ու մշակութային հիմքի վրա. շատ բախումներ առաջանում են այլ մշակույթը չհանդուրժելու (չճանաչելու) պատճառով: ՌԴ-ում վերջին տարիների ակտիվ այլատյացությունը, մասնավորապես՝ կովկասատյացությունը, ասվածի հիմնավորումներից է:

Հայաստանյան միջավայրում ևս տարածաշրջանային տեղեկատվությունը բավարար համարել չի կարելի: Կրթական համակարգում առկա են տարածաշրջանի իմացության լուրջ խնդիրներ:

Հայագիտությունն առանց տարածաշրջանային հետազոտությունների, համեմատական վերլուծությունների ու տարածաշրջանային զարգացումների խորքային իմացության զարգանալ չի կարող:

Նման միտումների գերակշռության պայմաններում այն դատապարտված է «պրովինցիալիզացիայի», «գավառայնացման»: «Գավառական» գիտությունն աշխարհի գիտական համակարգերում ներկայանալու սահմանափակ հնարավորություններ ունի: Այսինքն, տարածաշրջանի, ինչպես Կովկասի, իմացությունը անհրաժեշտ է ու կարևոր լայն, խորքային առումներով: Հայագիտության տարբեր ուղղությունների համար այն կարևոր է ինչպես գուտ գիտական, այնպես էլ գիտական-կիրառական ուղղվածության խնդիրներ լուծելիս, մանավանդ որ հայկական կովկասագիտական տարբեր դպրոցները բավականին լուրջ դիրքեր են ունեցել տարածաշրջանում:

Վերջին տարիներին հնարավորություն է եղել մասնակցել հարևան Վրաստանում ու Հյուսիսային Կովկասում անցկացված մի քանի կովկասագիտական գիտաժողովներ:

րի: Առաջին բանը, որ արձանագրվում է տանտերերի կողմից, Հայաստանին վերաբերող գիտական տեղեկատվության պակասն է: Գիտական շրջանակներում չկա բավարար իմացությունն այն մասին, թե ինչ է կատարվում հայագիտությունում: Կան տեղեկացված առանձին մասնագետներ ու համագործակցության օրինակներ: Սակայն համակարգված փոխանակություն որպես այդպիսին գոյություն չունի: Երկրորդ խնդիրն արդեն սեփական տեղեկացվածության պակասն է: Կովկասի տարբեր գիտական կենտրոններում տարեկան հրատարակվում են հարյուրավոր մենագրություններ ու հազարավոր հոդվածներ: Ռուս և կովկասցի մասնագետները զբաղվում են նաև հայոց պատմության ու Կովկասում հայերի ներկայացվածության խնդիրներով: Հարցեր, որոնք պարտադիր պետք է գտնվեն նաև հայ մասնագետների ուշադրության կենտրոնում: Ընդամենը վերջին 1-2 տարում է, որ ստեղծվում է համագործակցության դաշտ՝ գիտական գործուղումների ֆինանսավորմամբ: Սակայն դիպվածային շփումներով տեղեկատվության պակասը՝ և ստանալու, և փոխանցելու տեսանկյուններից, զգացնել է տալիս:

Այսինքն, տարածաշրջանի վերաբերյալ տեղեկատվությունը, որի մասին խոսեցինք, կիրառական տեսանկյունից ի գորու է լուծել մի քանի կարևոր խնդիր.

ա. կապահովի համակողմանի ու գիտական տեղեկություն տարածաշրջանի զարգացումների մասին, հնարավորություն տալով ոչ միայն կանխատեսել, այլև գիտականորեն համակարգել ու ուղղորդել դրանցում ՀՀ մասնակցության հիմնահարցերը:

բ. Գիտությունը, այդ թվում հայագիտությունը աստիճանաբար կդառնա պետական կառույցներն ու պետական քաղաքականությունը սպասարկող, ձեռք բերելով նաև կիրառական նշանակություն: Վերջին տարիներին այս մասին բավականին շատ է խոսվում ու գրվում: Գիտության զարգացման մասին խոսակցություններն ակտիվանում են հատկապես նախընտրական ու ետընտրական շրջաններում, մի դեպքում՝ որպես խոստումների ու ծրագրերի բաղկացուցիչ, մյուս դեպքում՝ որպես կանոն սեփական շահագրգռվածությունը ևս մեկ անգամ ի ցույց դնելու նպատակով: Գրեթե բոլոր կառավարությունները խոսել ու խոսում են գիտության արդյունքի «ապրանքայնացման, առևտրայնացման» անհրաժեշտության մասին: Շրջանա-

ռության մեջ են դրվում տարբեր ծրագրեր ու տարաբնույթ մոտեցումներ: Ավելին, տևական ժամանակ է, ինչ հայագիտության զարգացումը հայտարարված է գերակայություն: Նույնիսկ հայագիտության ձևավորման ու զարգացման պատմության ընդհանուր իմացությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն, բացի հայոց պատմության ուսումնասիրություններից, զարգացել է արևելագիտական, տարածաշրջանային դպրոցների շրջանակում, քանի որ հենց տարածաշրջանի տարբեր պետությունների պատմությունն է փոխադարձաբար ազդել կամ ազդվել հայերից ու հայկական մշակույթից: Ստեղծված է հզոր գիտական ժառանգություն, որը դեռևս կարողանում է «սպասարկել ու ապահովել» հայագիտության հեղինակությունը: Մեր օրերում էլ շարունակում են ստեղծվել լուրջ հայագիտական, մեծ առումով՝ տարածաշրջանային կարևորության հետազոտություններ:

Աշխարհի գիտական մտքի զարգացման միտումները, սակայն, ցույց են տալիս, որ արդյունքն ինքնին արդեն բավարար չէ գիտության տևական զարգացումն ապահովելու համար: Արդյունքի ներկայացման ձևերն ու եղանակներն են, որ ոչ միայն հանրայնացնում, այլև ընդունելի ու կիրառելի են դարձնում նույն այդ արդյունքը: Միայն կամ հիմնականում հայերենով հրատարակվող նույնիսկ լավագույն մենագրությունը սահմանափակ արդյունավետություն ունի, որովհետև հայաստանյան գիտական շուկան փոքր է, մասնագետները ճանաչում են միմյանց ու տեղյակ են միմյանց ընթացիկ, աշխատանքային հետազոտություններին, իսկ դրսում, լինի Կովկասը կամ Մերձավոր Արևելքը, հայերեն կարդում են հիմնականում հայերն ու սակավաթիվ հայագետներ:

գ. Գիտության, նաև՝ հայագիտության զարգացման արդի փուլում խիստ կարևոր է նաև «պատվիրատուի» հստակ որոշումն ու վերջինիս հետ գործնական հարաբերությունների կառուցման մեխանիզմների հստակեցումը: Այլ բան է, նույնիսկ կառավարության մակարդակում, գիտության զարգացման մասին խոսելը և բոլորովին այլ՝ գիտությունը որպես քաղաքականության «սպասարկող» դիտարկելը: Ի տարբերություն այլ գիտական ուղղությունների, հայագիտությունն ու վերջինիս առանձին դիսցիպլինները՝ պատմություն, լեզվաբանություն, բանասիրություն, հնագիտություն, ազգագրություն և այլն, այսօր սեփական

«արտադրանքի ապրանքայնացման» սահմանափակ հնարավորություններ ու դաշտ ունեն: Դրսում ավել կամ պակաս հաջողությամբ ներկայանում են առանձին գիտնականներ: Աշխարհի շատ երկրներում հասարակագիտական տարբեր ուղղություններ զարգանում են նաև պետական ֆինանսավորման հաշվին: Ոչ թե ընդհանրապես պետական, այլ որոշակի, ոլորտային պատվերների շրջանակներում: «Պատվիրատու-կատարող» հարաբերություններն այս դեպքում նաև պակաս միջնորդավորված են, քանի որ պետությունը պատվիրում է որոշակի «արտադրանք», վճարելով միայն բարձր որակի համար: Մրցակցության ու գիտական արտադրանքի որակի բարձրացումն այս դեպքում անխուսափելի է, քանի որ կատարված աշխատանքի արդյունքից են ուղղակիորեն կախված կատարողի ոչ միայն բարեկեցությունը, այլև գիտական վարկն ու հեղինակությունը, այսինքն՝ գումարի վերածվող գիտական կապիտալը: Երկրորդ տարբերակը մասնավոր սեկտորից, բիզնեսից եկող պատվերն է, ինչը Հայաստանում արտահայտվում է ընդամենը տարբեր մարքեթինգային ու մենեջմենթային հետազոտություններ պատվիրելով: Մինչդեռ աշխարհի գրեթե բոլոր խոշոր ընկերություններն ունեն մարդաբանների (ազգաբանների) խմբեր, որոնք շուկայի, վերջինիս միտումների ուսումնասիրությամբ զբաղվում են պարբերաբար: Ամերիկյան մարդաբանների կեսից ավելին ներգրավված է մասնավոր սեկտորում: Հայաստանում մասնավոր կառույցներում ներգրավված մարդաբաններ (ազգաբաններ) գրեթե չկան: Այդպիսիք չկան նաև պետական կառավարման համակարգում, իսկ ցանկացած գործընթաց հասկանալու ու վերլուծելու համար հարկավոր է ունենալ ազգաբանական ու մշակութաբանական բազային գիտելիքներ:

Հայաստանյան հիմնախնդիրների մեծ մասն այսօր գիտելիքի պակասի արդյունքում ձևավորված հիմնախնդիրներն են: Սեփական պատմության չիմացությունը (անբավարար իմացությունը) շարունակական սխալների համակարգի է վերածվում: Այլոց պատմության ոչ բավարար իմացությունը, զուգակցված սեփական պատմության իմացության նույն մակարդակի հետ, բերում է կամ սեփական գերկարևորման, կամ թերարժեքության բարդույթի: Զարգացած հայագիտությունը, կիրառական հետազոտությունների կարևորմամբ, այս խնդիրը լուծելու ամենա-

կարճ ճանապարհն է: Ներգրավվածությունը տարածաշրջանային՝ կովկասյան ու առաջավորասիական գիտական համակարգերում դինամիկ զարգացման կարևորագույն նախապայմանն է:

Վերջին շրջանում դարձյալ ակտիվացել են խոսակցությունները Հայաստանը տարածաշրջանային գիտական կենտրոնի վերածելու մասին: Մրան հասնելու լավագույն ճանապարհը տարածաշրջանը փայլուն իմանալն է: Մեր հարևաններն այս ուղղությամբ արդեն բավականին լուրջ քայլեր ձեռնարկել են, աստիճանաբար դուրս գալով միայն սեփական ժողովրդի պատմության ուսումնասիրության շրջանակներից ու նախապատվությունը տալով համեմատական վերլուծություններին: Մենք ցայսօր լրջագույն խնդիրներ ունենք նույնիսկ Սփյուռքի ամբողջական ուսումնասիրության առումով: Վերջին մեկուկես տասնամյակում հայ մասնագետները՝ ազգագրագետներ, բանագետներ, պատմաբաններ ու հնագետներ, գրեթե չունեն կովկասում աշխատելու հնարավորություն: Փոփոխվող աշխարհում էթնիկությունն ու էթնիկ ինքնությունը նույնպես բավականին արագ են փոփոխվում: Այլէթնիկ միջավայրում անհամեմատ ավելի մեծ է մշակույթը, լեզուն ու էթնիկությունը կորցնելու հավանականությունը: Տարածաշրջանային ամբողջական, նաև՝ գիտական տեղեկատվությունը, այս խնդիրները հասկանալու ու արդյունավետ քաղաքականություն կառուցելու կարևոր նախապայման են:

Միայն դինամիկ զարգացող հայագիտությունը կարող է նպաստել պետական քաղաքականության ամենատարբեր հիմնախնդիրների լուծմանը: Տարածաշրջանային զարգացումներում ակտիվորեն ներգրավված ու իր խոսքն ասող հայագիտությունը կարող է դառնալ ՀՀ-ն գիտական կենտրոնի վերածելու ճանապարհի կարևոր քայլերից մեկը: Այս զարգացումներից դուրս մնալու պարագայում անխուսափելի է գավառայնացումը, ինչն իր հերթին միանշանակ ազդելու է էթնիկության, էթնիկ ինքնության ու հայկական մշակույթի բոլոր համակարգերի ու ենթահամակարգերի վրա:

1 Սա պաշտոնական վիճակագրությունն է: Հյուսիսային կովկասում մշտապես կամ ժամանակավոր հաստատված, նաև ՌԴ քաղաքացիություն չունեցող հայերի թիվն առնվազն 2-3 անգամ ավելի մեծ է:

ՊՐՈՒԵՏԱՐՆԵՐԸ՝ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԱԳԵԼԻՍ

Լեհաստանի Լեմբերգից Ռուսաստանի Շեպետովկա մեկնող գնացքում կար մի ավստրիացի, ով կարողանում էր քիչ թե շատ անգլերեն խոսել:

Ես ասացի. «Ինձ համար բոլոր երկրները նման են մեկմեկու»:

Նա ասաց. «Ինչպե՞ս»:

«Նման են,- ասացի ես զգուշորեն:- Բոլոր երկրները»:

Գլխով ցույց տվեցի բնաշխարհը:

«Այո,- ասաց նա:- Ես սիրում եմ Ռուսաստանը»:

Յուցադրաբար, բայց քաղաքավարի, ես ոչինչ չասացի մոտ կես րոպե:


«Ինչքա՞ն եք ծրագրել մնալ Ռուսաստանում», - ասացի ես:

«Ինչպե՞ս», - ասաց նա:

«Քանի՞ օր», - ասացի:

«Ինչպե՞ս», - ասաց նա:

Մի խոսքով, ես սկսեցի ծիծաղել և խոսել անգլերեն, իսկ նա ծի-



ծաղեց և սկսեց խոսել գերմաներեն: Մենք այնպիսի մի աշխույժ զրույցի բռնվեցինք, որ թե նա, թե ես, ընդհանուր գծերով հասկացանք՝ նա ավստրիացի է ու գնում է Ռուսաստան, իսկ ես ամերիկացի եմ ու էլի գնում եմ Ռուսաստան, մենք նույն գնացքում ենք, և գրողը տանի, ինչի՞ մասին պիտի խոսենք, երբ ոչ նա, ոչ ես չենք հասկանում, թե ինչ ենք խոսում:

Նա ծխեց իմ լեհական սիգարետներից մեկը, իսկ հինգ րոպե անց ես ծխեցի նրա ավստրիական սիգարետներից ու վերադարձա իմ կուպեն:

Ուկրաինացի մի խոշորամարմին գեղջկուհի էր նստել իմ տեղում և փնջացնելով սև հաց էր ուտում: Ես նստեցի դիմացի նստարանին և հիշեցի, թե նա ինչպիսի աղմուկ էր բարձրացրել Ծեպետովկայի կայարանում, ինչպես էր փողն ու ինչ-որ լաթեր խցկում ստինքների արանքը, և պետք եղած պահին փող հանելիս ցուցադրում կուրծքը՝ ազնվականի անմեղ անտարբերությամբ, իսկ փողը՝ հարուստի հպարտությամբ, և տղամարդկանց հետ բարձրաձայն գոռալով ու քրքջալով՝ զամբյուղները բարձրացնում գնացք: Ակնհայտորեն, փառահեղ տիկին էր և նույն գնացքում նրա հետ լինելը մեծ պատիվ էր:

Սև հացով լիքը բերանով նա սկսեց հախտուն ձառախոսությունը՝ ձայնի արտահայտիչ ելևէջներով և դրամատիկ շարժումներով:

«Ես ռուսերեն չեմ հասկանում», - ասացի:

Նա մի տեսակ շշմած նայեց ինձ:

Ծատ անհարմար դրություն էր և, քչփորելով ձախ քթանցքն ու փնջացնելով, ինչը նույնն է բոլոր լեզուներով, նա վերադարձավ իր սև հացին:

Ես գնացի ձաշարան և անգլերեն լեզվով, բայց ռուսական արտասանությամբ նախաձաշ պատվիրեցի:

«Մուսկ,- գոռացի ես ռուսական սրտի խորքերից:- Մալլաթ: Խաց,- որ, հուսով եմ, նշանակում էր հաց:- Մյասո: Կոֆի:

Աղջիկն ասաց. «Դա, դա», և գնաց: Վերադարձավ մեկ րոպեից՝ բերելով մի բաժակ ջուր ու երեք կտոր սև հաց: Հիանալի է: Ես սկսեցի ուտել հացը և խմել ջուրը:

«Մի կտոր կարագ կբերե՞ք, ընկեր,- ասացի ես:- Հասկանո՞ւմ եք,- ասացի:- Կերրգ»: Արագ-արագ ասացի՝ մտածելով, որ ռուսերեն այդպես կհնչի:

Նա ռուսերեն պատասխանեց, թե հասկանում է ինչ եմ ուզում, և ես ասացի ինքս ինձ. «Այս երիտասարդ պրովետարները շատ խելացի են»:

Նա վերադարձավ սև խավիարի փոքրիկ պնակով:

Դե, դա մտքովս էլ չէր անցել, բայց ինձ դուր եկավ:

Խավիարը քսեցի հացին ու սրտանց կերա: Աղջկա ձեռքին ռուսական բանվորական սուպով ափսե տեսա: Ես մատնացույց արեցի սուպը: Բերեց:

Նրա ձեռքին մի ուրիշ բանվորական բան տեսա, որ նման էր համբուրգերի կտորի: Նորից մատնացույց արեցի և նա դրանից էլ բերեց:

Կարձ ասած, ուտում էի սրտանց: Հետո հայտնաբերեցի ռուսական խմիչք՝ ցիտրոն, թե ցիտրոն անունով: Նման էր սոդայաջրի, միայն ավելի փափուկ ու քաղցր և ավելի բնական համով, ոնց որ մրգահյութ, չնայած ընդամենը կարբոնացված ջուր էր՝ մի քիչ շաքարով ու համեմունքով: Համեմայն դեպս, հաճելի էր խմելը: Մի շիշը պարունակում է երկուս ու կես բաժակ: Գնի մասին գաղափար չունեմ: Ընդհանրապես, ոչ մի օտար երկրի գներից գաղափար չեմ ունեցել: Սովորաբար մի բուռ մետաղադրամ եմ պարզում և քաղաքավարի խնդրում, որ վերցնեն ձիշտ գումարը: Եվ համոզված եմ, որ երբեք չեմ խաբվել, և եթե խաբվել եմ էլ, ինչ փույթ, գրողը տանի, աշխարհում լիքը աղքատ մարդիկ կան, և եթե նրանք գոնե օտարականներից երբեմն մի քիչ թոցնեն, ինչ մեծ բան կփոխվի աշխարհում:

Երբ վերադարձա իմ կուպեն, խոշորակազմ ուկրաինուհին տխուր ուսումնասիրում էր դիմացի նստարանի ծայրին հանգստացող իր ոտքերը: Դրանք շատ կեղտոտ էին ու թեփոտ, իսկ խոշոր տիկինը՝ շատ մելամաղձոտ:

Նա ոչ մի ուշադրություն չդարձրեց իմ անկարևոր մուտքին, բայց քիչ անց տխուր հառաչեց, հավանաբար հիշելով հեղափոխության ժամանակ կորցրած իր երկու որդիներին, որոնք, եթե կենդանի լինեին, հիմա արդեն երեսունչորս կամ երեսունհինգի մոտ՝ պատկառելի տարիքում կլինեին, իր թանկագին մեռած տղաները, Բորիսը և Միխելը, և գուցե շատ կարևոր մարդիկ դարձած լինեին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում: ԽՍՀՄ:

Համենայն դեպս, ես գլխի ընկա, որ նա ինչ-որ բաներ է հիշում: Չնայած, հնարավոր է, որ իրականում ոչինչ էլ չէր հիշում, որովհետև չհիշելն էլ կարող է մարդուն տխրեցնել:

Նա կրկին դարձավ ինձ ու կրկին խոսեց շատ արագ և նույնիսկ ավելի կրքոտ, քան առաջ: Ես հասկանում էի, որ նա բարի է և ընդամենը ուզում է զրուցել, դրա համար էլ ասացի, որ թեև չեմ հասկանում նրա ասածները, բայց պատկերացնում եմ, թե ինչ է զգում:

Թվաց, թե հասկացավ իմ միտքը և սկսեց մի կողմից մյուսը ձոճվել՝ շարունակելով պատմել իր պատմությունը:

«Այո,- ասացի ես անգլերեն:- Դա, դա», - ասացի ես ռուսերեն, և խոշորակազմ ուկրաինուհին սկսեց հեծկլտալ:

Դե, ես էլ շրջվեցի դեպի ավստրիացի ինժեները: Մենք նորից սիգարետներ փոխանակեցինք, և երբ գնացքը կանգ առավ փոքրիկ կայարանում, ցած իջանք և սկսեցինք քայլել կառանատույցի երկայնքով:

Մի ծերունի հայտնվեց և ռուսերեն խոսեց մեզ հետ: Գնացքից մի կատաղած երկաթուղային գոռաց նրա վրա, և ծերունին հեռացավ՝ նույնքան կատաղած պատասխան գոռոցով:

«Ի՞նչ էր ասում ծերունին մեզ», - ասացի ես երիտասարդ ավստրիացուն:

«Նա ասում էր,- ասաց երիտասարդ ավստրիացին,- ես ծեր մարդ եմ»:

«Ա՛յ,- ասացի ես:- Երկաթուղայի՞նն ինչ ասաց ծերունուն»:

«Նա ասաց,- ասաց երիտասարդ ավստրիացին,- հեռացիր, նա ամերիկացի է և չի հասկանում»:

«Ա՛յ,- ասացի ես:- Ծերունի՞ն ինչ ասաց երկաթուղայինին»:

«Նա ասաց,- ասաց երիտասարդ ավստրիացին,- ես փող չունեմ, հաց չունեմ, ես ծեր մարդ եմ, դո՞ւ ով ես»:

Մենք կրկին բարձրացանք և գնացքը շարժվեց Ռուսաստանով: Ես տեսնում էի խոտերի, ծառերի, առուների, կովերի, ձիերի և, հիմնականում, մերկոտն գյուղացիների հիանալի, մաքուր, հարուստ բնապատկերը: Ծատ երեխաներ ձեռքով էին անում գնացքին: Ծատ կովեր փախչում էին գնացքից: Որպես խելացի մասնագետ ես սկսեցի խորը միտք անել և հայտնաբերեցի հետևյալ զարմանալի ճշմարտությունը. բնությունը ինտերնացիոնալ է, իսկ բնական ամեն բան շատ փոխկապակցված է, հատկապես մարդիկ, ուրեմն ինչի՞ համար են պատերազմները, և այլն:

Զափազանց տաք էր և չափազանց աղմկոտ գնացքում, և չէի կարողանում ավելի խորը մտածել, այնպես որ չկարողացա պարզել, թե ինչի համար են պատերազմները, թեև առանց մտածելու էլ հասկանալի էր, որ պատերազմները լինում են, որովհետև երբ փոքրիկ մարդուն համազգեստ են տալիս և ասում, թե դա քո պարտականությունն է, այդ ցնդած ավանակն իրեն մեծ բանի տեղ է դնում, և երբ այդ ավանակների թիվը միլիոնի է հասնում ու նրանց ձեռքին են հայտընվում հրացաններ, ու սրեր ու ձիեր ու մեքենաներ, դե, ուրեմն, պատերազմն անխուսափելի է. և սակայն, այս դիտարկումը ես աշխարհին չեմ ներկայացնում որպես իմ սեփականը, պարզապես ուզում եմ նշել, թե ինչ դժվար բան է, նույնիսկ մեծ մտածողի համար, մտածել ձանապարհորդելիս:

Մեզ ասել էին, որ գնացքը Ուկրաինայի մայրաքաղաք Կիև է հասնելու ձիշտ տասնից տասնհինգ պակաս, և այդպես էլ եղավ: Ես սպասում էի, որ աշխարհը սև խավարի մեջ պիտի լինի այդ ժամին, դրա համար էլ ձաշարանում ցիտրոն թե ցիտրոն էի խմում, երբ գնացքը ժամանեց Կիև: Համազգեստով փոքրիկ մարդը, որ անընդհատ նստարանների փոշին էր սրբում ու ստուգում զուգարանները, ներխուժեց ձաշարան և խստորեն հանդիմանեց ինձ, որ անուշադիր եմ անձնական իրերիս հանդեպ, անտարբեր եմ ուղեբեռիս հանդեպ, որն ամեն թույլ կարող եմ գողանալ, հատկապես մեքենան, գրամեքենան, որը նա խնդրել էր ցույց տալ իրեն և հիացել էր շատ, ու իմ հատուկ ուշադրությունն էր հրավիրում այն փաստին, որ գնացքը կանգնել է Կիևում, որտեղ ես պետք է իջնեի:

Ինձ թվաց, կեսօրվա ժամը վեցն է, բայց ինն անց քառասունհինգ էր, իսկ ամռանը Ուկրաինայում ցերեկները երկար են ու հաճելի, այնինչ գիշերները շատ կարճ ու նույնպես հաճելի:

Ես շտապով հետևեցի փոքրիկ մարդուն, և ձամպրուկներս իջեցրի գնացքից: Կառամատուցում մի տիկին էր ինձ դիմավորում: Նա գիտեր անգլերեն: «Կիևը,- ասաց նա,- աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է»: Տիկինը խոսում էր առողջանությանը: Մի քանի բույսեր անց էս պարզեցի, որ նա ծնվել է Կիևում և երբեք երեսուն մղոնից ավելի չի հեռացել այնտեղից: Ինչևէ, Կիևը շատ գեղեցիկ քաղաք է, իսկ Լավրա վանքը արժանի է ցանկացած ճանապարհորդի մանրագին ուսումնասիրության: Ծառ ձարտարապետական կոթողներ կան քաղաքում, մեծ մասամբ հնագույն, և մեծ մասամբ եկեղեցական: Լավրայում ստորգետնյա շիրիմներ կան: Ես մտածեցի, որ պետք է նշեմ այս մասին, չնայած դրանք ինձ այնքան էլ չտպավորեցին, թեև հենց շիրիմները շատ տպավորիչ էին: Այս եկեղեցական վայրերը օգտագործվում են որպես ոչ պիտանի ապրելակերպի թանգարաններ, տխմար, դժվար հասկանալի տպագիր բացատրություններով և այնպիսի ուղեկցորդներով, որոնք ընդամենը պատմում են, թե մի վանական, ինչպես ռուսն է ասում, սիրուհի է պահել, և շատ նշանավոր է եղել իր կապերով նաև այլ կանանց հետ: Ուրեմն, ստացվում է, որ Աստված չկա: Որոշ բացատրություններում էլ ասվում է, թե մեկ վանականի դիմակահանդեսային զգեստը հազար երկու հարյուր տասներկու ֆունտ ցորենի գին ունի: Գյուղացիներին, սովորաբար, ապշեցնում է այս տեղեկությունը, մինչդեռ անձամբ ես գտնում եմ, որ այդ հանդերձները երեք ֆունտով ավելի արժեին:

Մի խոսքով, Կարլ Մարքս փողոցով ես գնացի իմ հյուրանոցը և մտա իմ ցնցողով համարը: Հետո, կայարանում ինձ դիմավորած տիկնոջ հետ զբոսնեցի Մայիսի մեկի անվան այգով: Հաճելի այգի էր, կամ պուրակ, իսկ բլուրներից սիրուն տեսարաններ էին բացվում դեպի Դնեպր գետը: Հեղափոխությունից առաջ այգին այլ անուն ուներ, սակայն հեղափոխությունից հետո ոչ ոք լսել անգամ չէր ուզում այդ անունը, որովհետև հիշեցնում էր այնպիսի մի ծիծաղելի ու դաժան անձնավորության, ինչպիսին ցարն էր:

Պետք է ասեմ, որ Կիևի ճանապարհին, տարբեր կայարաններում, այսինքն երբ գնացքը չէր շարժվում, ցնցոտիավոր շատ երեխաներ էին մոտենում պատուհանին ու փող խնդրում: Ես միայն լեհական մետաղադրամ ունեի, բայց միևնույն է, բոլոր երեխաներին մեկական տալիս էի: Մակայն շուտով պարզվեց, որ այդպիսի զգայացունց բավականություններով տարվելը նկատվում և խստորեն դատապարտվում է, այնպես որ ես սկսեցի գործել ավելի զգուշավոր ու թաքուն:

Իհարկե, ոչ Հարսթի ասածի չափ, բայց Ռուսաստանում շատ աղքատներ կան: Մեզնանները ոչինչ անել չեն կարող այդ հարցում, սակայն երբ փոքրիկ աղջիկը կամ տղան մոտենում են գնացքի պատուհանին և անձկությամբ ու քաղաքավարությամբ խոսում, թե ինչ դժվար ժամանակներ են, ես կարծում եմ, որ պարզ քրիստոնեական արարք է հավատալ նրանց ասածներին և մեծ կամ փոքր մետաղադրամ՝ կախված նրանց պատմությունից, նետել մուրդներին:

Եվ իհարկե, երկիրը ուղեգիծ ունի, ինչն այստեղ ավելի շատ է երևում, քան մյուս երկրներում: Որոշ պճնամուկություն կա, բայց որտեղ չկա: Մարդասիրությունն այստեղ նույնքան է, ինչքան ամեն տեղ, չնայած նրանք փորձում են ասել, որ այդպես չէ, որ դա պարզապես իրերի բավարար վիճակ է: Մարդիկ ատում են նրանց, ում չեն սիրում և այլն: Կա և նախանձ, և ատելություն, և ամեն ինչ: Ծիծաղ և սեր: Մայիսի մեկի անվան այգում ձիշտ այնպես է, ինչպես Նյու Յորքի Կենտրոնական այգում: Գրողը տանի, մարդ արարածը մնում է մարդ արարած, ինչ էլ որ ասես, կամ ինչ էլ որ ասեն, նրանք նույնն են ամեն տեղ և ամեն ժամանակ: Բացի թմբկահարներից: Նրանք տարբերվում են, և շատ են տարբերվում:

Այսպես, Ամերիկայում լավ հարվածողը, նեգր լինի, թե սպիտակամորթ, դեմք է: Ուզում եմ ասել՝ դա այն տղան է, որի նվազը սավառնում է օդում, ինչպես միայն ջազը գիտի սավառնել, իսկ եթե տղան սևամորթ է, նա այնպես է պտտվում շուրջը, կարծես թքած ունի բոլորի վրա, անգամ եթե երաժշտություն հիշեցնող հնչյուն իսկ չի արձակում, և սա շատ կարևոր է: Դա այն բաներից է, որ մենք անպայման հիշում ենք Ամերիկայից, երբ հեռվում ենք լինում: Մեր կրակոտ թմբկահարներին:

Եվ այսպես, ես դուրս եկա մեծ Լինքոլնից և գնացի իմ ցնցուղով սենյակն ու ցնցուղ ընդունելուց հետո իջա ընթերելու: Գիշերվա տասնմեկն է: Թեթև ջազային երաժշտություն լավեց, բայց ինձ թվաց, թե կարոտախտի զգացումից է, որը շատ տարօրինակ էր, քանի որ ես ինձ լրիվ տանն էի զգում: Լարեցի լսողությունս, և հասկացա, որ կարոտախտը չէր, մոտերքից, իրոք, երաժշտություն էր լսվում: Ես մոտեցա ինչ-որ դռան, և երաժշտության ձայնը բարձրացավ: Դիմեցի գլխավոր մատուցողին, նա մատնացույց արեց պարտեզը: Ես հարցրեցի, թե արդյոք կարո՞ղ եմ նստել դրսում, իսկ նա ռուսերեն ասաց, որ ես կարող եմ նստել պարտեզում, կարող եմ նստել ներսում, կարող եմ ուտելիքս սենյակ տանել, նա իմ ծառայության տակ է, Ամենագոր Աստված, սա աղբանոց չէ, այստեղ ավելի լավ է, քան Փարիզում, Վիեննայում, Լոնդոնում: Եվ այսպես, ես նստեցի պարտեզում, ձիշտ յոթնոգանոց նվագախմբի դիմաց՝ բոլորը բանվոր, պրոլետար, Կարլ Մարքսի ուսանող և Լենինի ու Ստալինի բոցավառ երկրպագու:

Մի խոսքով, նվագախումբը ջազ էր նվագում, հին, լավ, ամերիկյան ջազ՝ լի հարուստ, հին, մարդկային, ամերիկյան (և ինտերնացիոնալ), սենտիմենտալ անկապությանը, և ցանկացած մարդ կասեր, որ անկապություն է, միայն թե նվագախումբն այնքան էլ տեղը չէր բերում:

Եվ պատճառը հարվածողն էր:

Ջահել մի ռուս էր՝ տասնյոթ կամ տասնութ տարեկան: Ես ենթադրեցի, որ նա կինոներում տեսել է թմբկահարների և աշխատում է նույն շարժումներն անել, բայց չի ստացվում. նրա հանած աղմուկը շատ վատն էր, շատ տխուր ու սրտառուչ. հետաքրքիր է, թե ինչո՞ւ պրոլետարներն առաջին հերթին կապկում են ջազը և ոչ ասենք, գրողը տանի, *Սև աչերը*, կամ *Վոլգայի նավավարը*, կամ գնչուական պարերն ու *Չարդաշները* և նման այլ բաներ:

Եվ այս ջահել պրոլետար թմբկահարի տխուր կատարումից երևում է, որ սիրտ չի դրել մեջը, և ինչ հաճելի հանգրստություն իջավ վրաս, երբ մելամաղձոտ շջակները սուլեցին, լույսերն անջատվեցին, և միայն առավոտյան ես իմացա, որ դա ընդամենը *տազնապի ազդանշան* էր: Ինձ ասացին, որ այդ պահին, եթե դրսում ես, պետք է մտնես մոտակա տուն ու սպասես: Ծատ ափսոսազ՝ որ դրսում չէի, որովհետև այդ ամենը կես ժամ տևեց, և ես հնարավորություն կունենայի ուսումնասիրել Խորհրդային Ռուսաստանի ներքին կյանքը:

Բայց ամբողջ հարցն այն է, որ ջազը յուր չի գնում ծերուկ Կարլ Մարքսի թանձրաթախիծ ջղային տրամադրության հետ, և ինչքան շուտ պրոլետարները դա պարզեն իրենց համար, այնքան լավ:

Ջազը խեղճ կապիտալիստական երկրների երգիծական ու ողբերգական արտահայտչաձևն է, ազատության պահը, հանգստությունը աշխատանքից, հոգսերից և նման այլ բաներից հետո, դա նաև զվարթ հուսահատության, փառահեղ անհուսության, նյութի և էներգիայի այս քառսում՝ բացարձակ կորստի, երաժշտությունն ու ռիթմն է, նաև մեծաքանակ թիթեղյա պահածոյատուփերի քայքայվելուց հուսահատված՝ ծիծաղաշարժ հարայիրոցը, ծեր մարդու՝ գետի կամ օվկիանոսի ջրերին դժոխքի բաժին դառնալը, դա նաև նրանց արգասիքն է, ովքեր կորած են և չգիտեն, թե ուր են գնում, և ոչ էլ պետքերն է. դա նրանց օրհներգը չէ, ովքեր գտել են իրենց, ովքեր ուղի ունեն, որտեղ եղբայրության տրամադրություն չկա երկրի վրա, այլ կա միայն պրոլետարիատի բռնապետություն կամ անդասակարգություն՝ ապրողների մեջ, և ոչինչ ավելի ծիծաղելի ու աներևակայելի չէ, քան մեծ Ռուսաստանը՝ լցված իր կույր որոշակիությանը, հեծած այն շատ արժեքավորին, այն շատ անորսալի ազնիվներին, որոնք չեն կարող դուրս բերել աղբատներին հավերժական աղքատությունից. և ինձ թվում է, որ նրանք պարտավոր են թողնել ջազը այն խեղճ կարեկից հոգիներին, որոնք դրա խենթ թարմության կարիքն ունեն, իսկ իրենք հավատարիմ մնան իրենց զվարթ Ինտերնացիոնալին:

Կիև, Ռուսաստան: Հունիս, 1935

Անգլերենից թարգմանեց Սոնա ԵՐԱՆՈՍՅԱՆԸ

Ի՞նչ է գրել «Դրօշակը»

100 տարի առաջ

№ 6 (194)

XVIII ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1908

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL.

„Droschak”

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

«Berliner Lokal Anzeiger»-ի հունիսի 13-ի թվին մեջ հրատարակված է.

«Վանի մոտ թյուրք զինվորներու միջոցով ստորերկրյա ճարպիկորեն շինված այրի մը մեջ գտնված և գերի բռնված են Վանի Դաշնակցության կոմիտեի գլխավորը՝ Արամը, Վանի փոխնահանգապետը սպանողի եղբայրը Վահրամը և կոմիտեի քարտուղար Պետրոսը»:

«Դրօշակի» հեռագիրը Ligue des Droits de l'homme-ի նախագահին, Լիոն գումարված համաժողովին առթիվ հունիս 6-ին.-

«Պրեսանսե,

Նախագահ «Մարդու իրավունքներու միության»,

Կողջունենք Մարդու իրավունքներու

միության քաջարի համաժողովը, որ կը ներկայացնե հեղափոխական Ֆրանսայի լավագույն ավանդությունը: Հույս ունինք, որ Միությունը պիտի կրնա ատկե իր կորովը, ազնվագույն կռիվը մղելու համար ի նպաստ հարստահարվածներուն»:

Եվրոպական թերթերե.

«Մարդու իրավունքներու համաժողովի բացման ճառին մեջ, նախագահը, պր. Ֆրանսիս դը Պրեսանսե, հայտարարեց, թե Միությունը պետք է, ավելի քան երբեք, գործ դնե իր ազդեցությունը Արդարության համար, համաձայն Հեղափոխության Սկզբունքներուն: Հետո նախագահը, ծափահարություններու մեջտեղ, կարդաց «Դրօշակի» խմբագրության համակրանքի հեռագիրը»:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

Կաթողիկոսական ընտրություն
(Քաղվածք Հ.Յ.Դ. 1908 թ. Խորհուրդի որոշումներից)

Խորհուրդը որոշում է.

1) Հ. Յ. Դաշնակցությունը իբրև կուսակցություն չի մասնակցում կաթողիկոսական ընտրություններին:

2) Դաշնակցական անհատները իբրև սուկ քաղաքացիներ ազատ են վարվելու ըստ իրենց հայեցողության:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արևելյան ձգնաժամը.- Վերջապես շահը հաջողեցավ տապալել Մեծլիսը, թեև քանիցս երդում կերած էր, որ պիտի հարգեր իր հոր ազատական կտակը շնորհված «անազատ» Իրանին: Դեկտեմբերի պետական հարվածի անհաջող փորձեն հետո Շահը հայտարարած էր իսկ որ «Մեծլիսը սուրբ հաստատություն» մըն է:

Հակառակ այդ երդում-պատառներուն՝ Շահին և Մեծլիսին միջև վիհը կընդլայներ: Շահը հաջողեցավ իր ուժերը վերակազմել, ամրացավ Շահպաղի պալատը և խիստ պահանջ դրավ Մեծլիսին իրեն հանձնել ազգայնականներու պարագլուխները: Մեծլիսը մերժեց՝ Էնձյումենականները զորքերուն վրա կրակ ըրին, հունիս 23-ին: Առիթ էր: Չորքերը ռմբակոծեցին Պահարիսդանի պալատը, Մեծ մզկիթը, ուր ապաստանած էին հեղափոխականները, և ուրիշ հաստատություններ: Ձերբակալվեցան ընդդիմադիրներեն, հեղափոխական խմբագիրներեն: Շահը կախել տվավ մեկ քանի պա-

րագլուխներ, ինչպես և Սուրետաֆիլ թերթին խմբագիրը:

Շահը դրության տերն էր: Երեկի ազատաշունչ Թեհրանը սուգի մեջ ինկավ: Բոլոր սահմանադրության մեծ դերակատարները պաստ մտան դեսպանատունները, բացի գերմանականեն:

Ռուսիո մատը կուզեն նշմարել Պարսկաստանի այս արյունոտ պետական հարվածին մեջ: Լյախով, Շաքշալ՝ Շահի ռուսերենի ուսուցիչը, թելադրիչը կը համարվին կատարված մեծ ոճիրին:

Շահը Մեծլիսը խորտակելն հետո, հայտարարեց, որ ինքը սահմանադրությունը պիտի պահպանե և կը խոստանա երեք ամսեն նոր ընտրություն կատարել:

Անգլո-ռուս համաձայնությունը ընդունեց «անմիջամտության քաղաքականությունը»: Սակայն Անգլիո մեջ որոշ մտահոգություն կը տիրե Պարսկաստանի մեջ ռուսական ինտրիկներու մասին:


Անգլո-ռուս համաձայնությունը զգալի կըլլա սահմանազլխի կռվին մեջ ևս: Ռուս դեսպանը պահանջեց Դոնեն, ետ քաշել զորքերը Պարսկաստանեն և վերջ դնել ավերումին և քրդերու ասպատակություններուն, որոնց «անտարբեր չկրնար մնալ Ռուսիան»: Սալմաստը և Ուրմիո գավառը թշվառության մատնված են Թահիր փաշայի ձեռքեն, որուն տղան ալ Վասպուրականը կավերե: Մեծ վեզիրը ապահովուցեր է ռուս դեսպանին, որ պիտի հրամայե իսկույն որպեսզի զորքերը դուրս գան և սակայն դեռ... կը մնան...



Իսկ նրանք, որոնք 1915-ից յետոյ շարունակեցին ապրել Թուրքիայում

Ռուբինա Փիրումեան

(Յետ-Եղեռնեան հայ ազգային ինքնութեան հոլովոյթը գեղարուեստական գրականութեան ընդմիջից) Երևան, 2008, 280 էջ



Միջազգային ատյաններում հայկական խնդիրների հարաճուն արժարժաններին զուգընթաց օրեցօր մեծանում է նաև այդ թեմայով գրականության և ուսումնասիրությունների տեսակարար կշիռը: Հատկապես օտար լեզուներով լույս տեսնող աշխատությունները միտում ունեն առավել լայն լսարան ապահովել և խնդրի արդարացի արժարժան հարցի շուրջ հավաքել ոչ միայն հայ պատմաբաններին, արվեստագետներին ու գրողներին:

Ռուբինա Փիրումեանի՝ անգլերենով լույս տեսած «Իսկ նրանք, որոնք 1915-ից հետո շարունակեցին ապրել Թուրքիայում» պատմա-բանասիրական ուղղվածություն ունեցող աշխատությունը, որը հեղինակի՝ այս թեմայով ուսումնասիրությունների եռագրության երկրորդ գիրքն է, պետք է դիտել որպես մի արժեքավոր ներդրում Հայոց ցեղասպանություն արհավիրքն ու նրա հետևանքները օտար ընթերցողին իրական լույսի տակ ներկայացնելու գործում:

Քաղաքական և ընկերային ճնշումների պայմաններում Ցեղասպանությունը վերապրած և Թուրքիայում իր կյանքը շարունակող հայ մարդը ինչպե՞ս է ընկալել և ընկալում իր ազգային ինքնությունը, ինչպե՞ս է կարողացել, եթե կարողացել է, պահել և դրսևորել այդ ինքնությունը: Հեղինակն իր այս հարցադրումների համար որպես մեկնակետ է ընտրել պատմությունն ու հատկապես պատմության՝ մեր ժողովրդի հավաքական հիշողությունը, որն այդպես էլ, գրեթե հարյուր տարի շարունակ, չկարողացան ոչնչացնել հանրապետական Թուրքիայի իրար հաջորդած իշխանությունները:

Ի տարբերություն աշխարհի շատ երկրներում հաստատված հայության մնացորդացի, Թուրքիայում մնացած մեր հայրենակիցներն ստիպված էին առաջին հերթին գոյատևել: Գոյության այդ պայքարում եղեռնից մազապուրծ ու այդ երկրի օրենքներով թուրք հռչակված հայը՝ կին թե տղամարդ, ծեր թե մանուկ, ստիպված էին ապրած ամեն մի օր իրենց մաշկի վրա զգալ «թրքության» ու «թուրք ինքնության» պարտադրանքը: Բայց նրանք, ովքեր մինչև վերջերս գրեթե աննշմարելի էին թուրք հասարակության լայն համայնացույցի մեջ և այսօր էլ ապրում են անուններն ու կրոնը փոխած, շատ դեպքերում նաև առերես մահմեդականացած (ծպոյալ), աստիճանաբար վերագտնում են իրենց բուն ինքնությունը: Նրանց *մեծպապերի* ու *մեծտատերի*՝ երկար տարիներ պահած գաղտնիքներն այսօր շշուկով արված ամեն մի խոստովանանքի հետ մեխվում են երկրորդ ու երրորդ սերունդների ուղեղում՝ դառնալով անսպասելի հայտնագործություն ինքնաճանաչողության և ազգային ինքնագիտակցության փնտրտուքներում:

Որպես այս ուսումնասիրության նյութի պեղման միջոց ու վայր ընտրելով գեղարվեստական գրականությունը՝ հեղինակը ցավով նշում է, որ զարգացման իր ուրույն ճամփան անցած և համամարդկային առումներով բարձունքների հասած պոլսահայ գրականությունը միայն վերջին տարիներին է շոշափում ցավոտ

անցյալի թեման: Այս է թերևս պատճառը, որ նա ավելի հաճախ անդրադառնում է թուրք և այլազգի գրողների ու պատմաբանների գործերին, որոնք կամ գրված են Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնություններին վերաբերող թեմաներով, կամ էլ դրանցում գողտրիկ պատմություններ կան այս կամ այն հայ ընտանիքի, նույնիսկ առանձին վերցված մի հայի ճակատագրի մասին: Այստեղ արժե թերևս առանձնացնել թուրք գրող Քեմալ Եալչընի «Հոգիս քեզնով կը խայտայ» գործը, որ չէր կարող վրիպել Ռուբինա Փիրումեանի աչքից: Քեմալ Եալչընն էլ իր շատ գրչակից ընկերների նման դպրոցում սովորել է, որ հայերը դավաճաններ էին և, Թուրքիայի այլ թշնամիների հետ միա-


ցած, երկրի իշխանությունը տապալել էին փորձում: Սակայն, Գերմանիայում, թուրք ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին հաճախելիս իր հայ ուսուցչուհուց զարմանալի բաներ է լսել Թուրքիայում բնակվող հայերի, նրանց կենցաղի ու մշակույթի մասին: Այդ շփումներն էլ ի վերջո հիմք են հանդիսացել վերը հիշատակված գրքի ստեղծման: Եալչընը, փաստորեն, դարձավ առաջին թուրքը, որ առանձնակի հետաքրքրություն ցուցաբերեց իսլամացած հայերի պատմության հանդեպ և մանրամասն գրի առավ այն: Արդարացի եզրահանգումն էլ չուշացավ: Թուրք գրողը իր գտած վերապրող հայի՝ Գրիգոր Ջեյհանի հետ նույն մտորումներն ունի. ««Փոքր Ասիոյ մէջ հայ չկայ» ըսելով՝ «Փոքր Ասիոյ մէջ արդէն Հայ չկայ» ըսել կ'ուզէ արդեօ՞ք: Արեւը կրնա՞ս ցեխով պատել: Հայ չկայ ըսելով կրնա՞ս Հայ պատմութիւնը, գործուած յանցանքը մէջտեղէն վերցնել»:

Նմանատիպ անդրադարձեր կան նաև Օրհան Փանոկի, Էլիֆ Շաֆաբի, Ֆեթիհե Չեթինի ստեղծագործություններում, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է փաստում ու մեկնաբանում Թուրքիայում հայերի հանդեպ տեղի ունեցած ու դեռ տեղի ունեցող անարդարությունները: Չնայած այս ամենին՝ հայ և թուրք ժողովուրդների միջև բևեռացումը շարունակվում է, քանզի դեռևս գերիշխող է թուրքական քարոզչամեթոդային պարզունակ մեկնաբանությունը, թե հայերը ատում են թուրքերին, ինչպիսին էլ որ լինեն նրանք: «Դարձեալ յոյսը մնում է դնել թուրք ողջամիտ տարրի աստիճանաբար մեծացող ազդեցութեան վրայ,- գրում է հեղինակը,- փոփոխութիւնը ներսից պիտի պարտադրուի, թուրք հասարակութեան կողմից»:

Իր արմատներից այս կամ այն պատճառներով հեռացած հայ մարդու ազգային ինքնության ձևավորման մեջ այսօր արդեն հսկայական դեր ունի Հայաստանի անկախ պետականության վերածնունդը: Սա մի երևույթ է, որի իրողության մեջ բացահայտ աճ է ապրում մինչ այժմ ճնշված ու զսպված պատմական հիշողությունը, դրսևորվում ու արձագանք գտնում գրականության մեջ: Ամփոփելով՝ հեղինակը մի այսպիսի հարցադրում է անում. «Նորաստեղծ պետութիւնը կարո՞ղ է համայն հայութեան հայրենիքը դառնալ, պաշտպանն ու ապաւենը նույնիսկ այն հայերի, որոնք հալածանքի վախից իրենց ազգութիւնը թաքուն են պահում, նույնիսկ նրանց, որ իսլամ կրօնն են դաւանում: Արդեօք 16 տարուց ի վեր ձևաորոշող այս նոր իրականութիւնը կարո՞ղ է իր կնիքը դնել աշխարհացրիւ հայի ինքնագիտակցութեան և ազգային ինքնութեան վրա: Հարցումներ, որոնց պատասխանը դեռ չի երևում»:

Էդիկ Անդրեասյան

Հրանտ Կարախանյան



Չեմ կարծում, որ շատ վառ աշխատանքները ավելի հիշվող են, քան մեղմ, մեղեդային գործերը...

Նկարչությունը ճիշերով և բարձրախոսությամբ չէ: Պետք է ինչ-որ բան պահված լինի, որ դա էլ վաղը տեսնես, վաղը լսես, վաղը զգաս...

Կարծում եմ, ժամանակն է, որ արվեստը մաքրվի, վերադառնա իր ակունքներին, որովհետև մարդիկ հոգնել են...

Հրանտ Կարախանյան



«ԴՐՈՇԱԿ»-ի պատկերասրահ

